



# ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- **ՆՇՎԵՅ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՕՐԸ**
- **ՀԱՅ-ՉԻՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՄԱԿԱՐԴԱԿ**  
ԴԺՀ գլխավոր դատախազի այցը Երևան
- **ԻՐԱՎԱԿԱՆ ԿՅԱՆՔ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**
- **ՄՂԱՆՈՒԹՅԱՆ ՄՂԱՌՆԱԼԻՔԻ ԵՎ ՄՂԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ**  
Քրեաիրավական նորմի վերլուծություն
- **ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՅ՝ ՄԱՐԴՈՒՆ ԱՌԵՎԱՆԳԵԼԸ**

# ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ



## ՆՇՎԵՑ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՕՐԸ

ՀՀ գլխավոր դատախազության նիստերի մեծ դահլիճում 2012թ. հուլիսի 2-ին տեղի ունեցավ հանդիսավոր նիստ՝ նվիրված դատախազության աշխատողի օրվան և Հայաստանի դատախազության հիմնադրման 94-ամյակին, որին մասնակցում էին ՀՀ վարչապետ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ, Անվտանգության խորհրդի քարտուղար ԱՐԹՈՒՐ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆԸ, ՀՀ Կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրեն ԳՈՐԻԿ ՀԱԿՈՔՅԱՆԸ, ՀՀ ոստիկանության պետ ՎԼԱԴԻՄԻՐ ԳԱՍՊԱՐՅԱՆԸ, ՀՀ Նախագահի օգնական ԳԵՈՐԳԻ ԿՈՒՏՈՅԱՆԸ, ՀՀ արդարադատության նախարար ՀՐԱՅՐ ԹՈՎՄԱՍՅԱՆԸ, ՀՀ պաշտպանության նախարար ՍԵՅՐԱՆ ՕՀԱՆՅԱՆԸ, ՀՀ Հատուկ քննչական ծառայության պետ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԻՐԶՈՅԱՆԸ, դատախազության աշխատողներ և վետերաններ, հյուրեր:



Ներածական խոսքով նիստը բացեց ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ ՄԵՍԱԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ:  
Ընդհանրական խոսքով ներկաներին դիմեց ՀՀ գլխավոր դատախազ ԱԳՎԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԸ: Դատախազության համակարգի աշխատողներին իրենց բարեմաղթանքներն ուղղեցին ՀՀ վարչապետ Տ. Սարգսյանը, Անվտանգության խորհրդի քարտուղար Ա. Բադդասարյանը, ՀՀ պաշտպանության նախարար Ս. Օհանյանը, Ազգային Անվտանգության ծառայության տնօրեն Գ. Հակոբյանը, Ոստիկանապետ Վ. Գասպարյանը, Արդարադատության նախարար Հ. Թովմասյանը, Արտակարգ իրավիճակների փոխնախարար Հ. Մխիթարյանը:  
Հանդիսավոր նիստում հրապարակվեցին նաև ՀՀ Նախագահի, ՀՀ վարչապետի, պետական այլ կառույցների ղեկավարների հրամանագրերը, հրամաններն ու կարգադրությունները դատախազության մի խումբ աշխատակիցների պարգևների արժանացման և դասային աստիճաններ շնորհելու մասին:

# №72

Հիմնադիր և հրատարակիչ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՁՈՒԹՅՈՒՆ

# ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՁՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՀՐԱՏԱՐԱՎՎՈՒՄ Է 1997 ԹՎԱԿԱՆԻՑ

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԱՐՄԵՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ - նախագահ  
ԳՈՒՐԳԵՆ ԱՄԲԱՐՅԱՆ  
ԳԵՎՈՐԳ ԴԱՆԻԵԼՅԱՆ  
ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ  
ՎԱՅՐԱՍ ՇԱՅԻՆՅԱՆ  
ԳԱՌՆԻԿ ՍԱՖԱՐՅԱՆ  
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍՏԵՓԱՆՅԱՆ

## Գլխավոր խմբագիր՝ Գ. ԱՄԲԱՐՅԱՆ

Խմբագրության հասցեն.  
375010, ք. Երևան, Հանրապետության փ., 85  
Հեռախոս՝ 52-33-76, Ֆաքս՝ 56-76-72  
[www.genproc.am](http://www.genproc.am)

© Համակարգչային շարվածքը,  
ոճը, տառաձևերը և էջադրումը՝  
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ»

Ստորագրված է տպագրության՝  
25.07. 2012 թ.  
Ֆորմատ՝ 70 X 100 1/16  
Տպաքանակը՝ 500  
Ծավալը՝ 6 պայմ. մամուլ  
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է  
«Պոլիգրաֆ բիզնես» ՍՊԸ տպարանում  
Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2012 թ.

# 2012

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ)  
կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.)  
և դոկտորական (2002թ.) ատենախոսությունների  
հիմնադրույթների հրապարակման համար թույլատրելի  
գիտական պարբերականների ցանկում:

# «ԴԱՏԱԽԱՁԻ ՑԱՆԿԱՑԱԾ ՈՐՈՇՈՒՄ ՊԵՏՔ Է ՀԱՍԿԱՆԱԼԻ ԵՎ ԲԱՑԱՏՐԵԼԻ ԼԻՆԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ»

«Հ գլխավոր դատախազ, արդարադատության  
պետական խորհրդական,  
իրավաբանական գիտությունների դոկտոր  
ԱԳՎԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ելույթը  
դատախազության 94 ամյակին նվիրված  
հանդիսավոր նիստում



Մեծարգո հյուրեր,  
Հարգելի գործընկերներ,  
Դատախազության հարգարժան  
վետերաններ,

Արդեն ինը տարի է մենք նշում ենք  
Հայաստանի դատախազության աշ-  
խատողի օրը: Հինգ տարի առաջ՝  
2007 թվականի մայիսի 1-ից, գործո-  
ղության մեջ դրվեց դատախազու-  
թյան մասին գործող օրենքը: Եվ չնա-

յած այն իրողությանը, որ Հայաստա-  
նի Հանրապետության դատախա-  
զությունը 94 տարիների կենսագ-  
րություն ունի, դատախազական  
գործառույթները Հայաստանում, հի-  
րավի, բազմադարյան արմատներ  
ունեն, որոնք սկիզբ են առնում հայ  
իրավական մտքի հնագույն աղբյուր-  
ներից, միջնադարի մեր խոշորագույն  
մտածողների աշխատություններից:  
Հաջորդ տարի մենք տոնելու ենք

Հայաստանի դատախազության հիմնադրման 95-ամյակը: Դատախազությունն իր կազմավորման օրվանից դարձել է հասարակության սոցիալ-իրավական դիմանկարի յուրատեսակ կրողն ու արտահայտիչը՝ ծանրակշիռ ավանդ ունենալով հասարակական առողջ հարաբերությունների հաստատման ու պետական շահերի պաշտպանության գործում:

Հայաստանի երրորդ Հանրապետության գոյության երկու տասնամյակների ընթացքում դատախազական համակարգը երեք անգամ ենթարկվել է արմատական բարեփոխումների: Պատմական ոչ այնքան երկար ժամանակահատվածում մշակվել և ընդունվել են դատախազության մասին երկու օրենքներ՝ նպատակ հետապնդելով դատախազական գործունեությունը էլ ավելի համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության պահանջներին, համաշխարհային և եվրոպական չափանիշներին:

Այսօր, ամենայն պատասխանատվությամբ, կարող ենք փաստել, որ Հայաստանի Հանրապետության դատախազությունը երկրում օրինականության և իրավակարգի պաշտպանության դիրքերում կանգնած առաջատար պետական կառույցն է և իր ակտիվ դերակատարությունն ունի իրավունքի



**ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ  
ՀՐԱՏԱՆԱԳՐՈՎ**

**Օրինականության և իրավակարգի ամրապնդման գործում ունեցած վաստակի համար ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, արդարադատության պետական խորհրդական Արամ ԹԱՄԱԶՅԱՆԻՆ շնորհվել է Հայաստանի Հանրապետության վաստակավոր իրավաբանի պատվավոր կոչում:**

**Եղեգնաձորի կայազորի զինվորական դատախազ, արդարադատության առաջին դասի խորհրդական Տիգրան ՍԱՐԳՍՅԱՆԻՆ շնորհվել է արդարադատության երրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճան:**

գերակայության երաշխավորման և մեր երկրում օրենքի իշխանության հաստատման ոչ դյուրին խնդիրների լուծման գործում:

Երկրի օրենսդիր ու գործադիր մարմինների և առաջին հերթին Հանրապետության Նախագահի անմիջական հոգածության ու սատարման արդյունքում դատախազության բոլոր կառույցների և ստորաբաժանումների հետևողական, ծրագրավորված ու նպատակասլաց աշխատանքների շնորհիվ մենք ունենք միջազգային իրավական չափանիշներին համահունչ դատախազական կառույց, ինչի լավագույն վկայությունն է մեր համագործակցության աշ-



զական կառույց ունենալու և այն արդիականության առաջադրած բարդ խնդիրների լուծմանը ծառայեցնելու գրավականը եղել ու մնում է կադրերի հետ տարվող աշխատանքների բարելավումը: Ժամանակը աննախադեպ բարձր պահանջներ է ներկայացնում դատախազության համակարգի աշխատողներին, և նրանք թե՛ իրենց գիտելիքներով ու կրթվածությամբ, թե՛ բարոյականալի ու մարդկային նկարագրով պետք է պատրաստ լինեն դրանց անշեղ կատարմանը: Մեր երկրի քաղաքացիները դատախազին պետք է հավատան ու վստահեն, դատախազի ցանկացած որոշում, ցանկացած ցուցում պետք է հասկանալի ու բացատրելի

խարհագրության շարունակական ընդլայնումը և խորացումը: Ներկայումս Հայաստանի Հանրապետության դատախազությունը համագործակցության հուշագրեր է ստորագրել աշխարհի 14 երկրների դատախազական կառույցների հետ: Իսկ Ռուսաստանի Դաշնության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության դատախազությունների հետ այս տարի կնքված համագործակցության ծրագրերը աննախադեպ են ԱՊՀ անդամ պետությունների իրավական համագործակցության պրակտիկայում:

Հարափոփոխ աշխարհում ժամանակի պահանջներին համահունչ դատախա-

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՄԲ**

**ՀՀ Ած պատվո մեդալով պարգևատրվել են ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Արմեն ԴԱՆԻԵԼՅԱՆԸ, ՀՀ գլխավոր դատախազության իրավական ապահովման և եվրաինտեգրման բաժնի պետ Արթուր ՂԱՄԲԱՐՅԱՆԸ:**

**Ած Նախագահի շնորհակալագրով պարգևատրվել է «Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Գրիգոր ՍԱՐԳՍՅԱՆԸ:**

**Լոռու մարզի դատախազ Կարեն ՇԱՀԲԱԶՅԱՆԸ պարգևատրվել է ՀՀ Ած պատվոգրով:**

լինի հասարակության համար: Միայն այդպես մենք քայլ առ քայլ կկառուցենք ժողովրդավարության ու օրինականության ոգով ներծծված այն հասարակարգը, որը մեր ժողովրդի բազում սերունդների տեսլականն է եղել դարերի վեր:

Հարգելի ներկաներ,  
Հայաստանի դատախազության պատմությունը հարուստ է երկրի ու ժողովրդի հոգսերով ապրող, իրենց գործին անսահմանորեն նվիրված պայծառ անհատականություններով: Հպարտության ու ակնածանքի օրինական զգացում է ծնում դատախազության վաստակաշատ վետերանների փաղանգը, որի

լավագույն ներկայացուցիչները վաստակած հանգստի անցնելուց հետո էլ, հնարավորն անում են երկրում օրինականության հաստատման համար, իրենց խորհուրդներով օգտակար են լինում դատախազության երիտասարդ աշխատողներին:

Հայաստանի դատախազության մարմինները իրենց 94-ամյա կենսագրության ընթացքում զարգացման բարդ ուղի են անցել: Նրանք միշտ էլ անմիջական մասնակցություն են ունեցել Հայաստանի և մեր ժողովրդի համար կարևորագույն նշանակության խնդիրների ու հիմնահարցերի լուծմանը, ազգային պետականության հիմքերի ստեղծմանը և ապագային միտված ժամանակակից երկրի կառուցմանը: Հայաստանի դատախազության մարմինների գործունեության բովանդակությունը կանխորոշվել է մեր հայրենիքի առջև ծառայած կոնկրետ կենսական խնդիրներով: Անվիճելի է, որ շեշտակիորեն աճել է դատախազության դերը ինչպես պետականության ամրապնդման ու օրինականության հաստատման, այնպես էլ ժողովրդավարության զարգացման և իրավա-

կան կարգապահության կատարելագործման գործում: Ես վստահ եմ, որ տասնամյակներից եկող այդ ավանդույթների լավագույն շարունակողն ու զարգացնողը լինելու է դատախազության աշխատողների ներկա սերունդը:

Ուզում եմ շնորհակալություն հայտնել դատախազության աշխատողի օրվան նվիրված այս հանդիսության բոլոր մասնակիցներին՝ մեր հրավերին արձագանքելու և մեր մասնագիտական տոնին ներկա գտնվելու համար, բոլորիդ մաղթել առողջություն ու հաջողություններ:

Հարգելի բարեկամներ,

Յուրաքանչյուր տոն ստեղծարար ու հայրենանվեր աշխատանքի օրգանական շարունակությունն է, վստահ եմ, որ այդպիսին է մասնաշխատանքային երկուշաբթին: Ձեզ բոլորիդ ցանկանում եմ առավել նպատակային գործունեություն՝ ի նպաստ մեր երկրում օրինականության հետագա ամրապնդման, ի շահ մեր ժողովրդի ապահով կյանքի, մեր Հայրենիքի ծաղկման ու առաջընթացի:

Շնորհակալություն:

**ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՄԱՄԲ**  
**ՀՀ գլխավոր դատախազության հատուկ հանձնարարությունների հարցերով ավագ դատախազ Արմեն ԵՍԱՅԱՆԸ և ՀՀ գլխավոր դատախազության ընդհանուր բնույթի հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ Հակոբ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ պարզևատրվել են ՀՀ վարչապետի հուշամեդալով:**  
**ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և կազմակերպված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ Լիլիթ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԸ և Գեղարքունիքի մարզի դատախազության ավագ դատախազ Էդուարդ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ պարզևատրվել են ՀՀ վարչապետի շնորհակալագրով:**

# Բարեփոխումը միայն իրավական համակարգի խնդիրը չէ

## Պատահական համակարգի բարեփոխումները` ՀՀ Նախագահի ուշադրության կենտրոնում

Պատահական համակարգի «կնճիռների» հարթեցման, բարեփոխման աշխատանքները շարունակվում են: 2012թ. հունիսի 21-ին այդ համատեքստում խորհրդակցություն էր հրավիրել ՀՀ Նախագահ ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԸ:

Խորհրդակցությանը մասնակցել են ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ, ՀՀ գլխավոր դատախազ ԱԳՎԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԸ, ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության տնօրեն ԳՈՐԻԿ ՀԱՎՈՔՅԱՆԸ, ՀՀ ոստիկանության պետ ՎԱԳԻՄԻՐ ԳԱՍՊԱՐՅԱՆԸ, ՀՀ վճարելի դատարանի նախագահ ԱՐՄԱՆ ՄԿՐՏՈՒՄՅԱՆԸ, ՀՀ արդարադատության նախարար ՀՐԱՅՐ ԹՈՎՄԱՍՅԱՆԸ, ՀՀ զինվորական դատախազ ԳԵՎՈՐԳ ԿՈՍՏԱՆՅԱՆԸ, ՀՀ վճարելի դատարանի քրեական պալատի նախագահ ԴԱՎԻԹ ԱՎԵՏԻՍՅԱՆԸ և ՀՀ փաստաբանների պալատի նախագահ ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆԸ:

Հանրապետության նախագահն ընդգծել է, որ ինչպես նախկինում է առիթ ունեցել ասելու, դատաիրավական համակարգի բարեփոխումների գործընթացը մշտապես լինելու է իր անմիջական ուշադրության ներքո, և ինքն անձամբ է մասնակցելու դրա իրականացման բոլոր փուլերին: ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ խոսքով, խորհրդակցության բոլոր մասնակիցները և նրանց ղեկավարած համակարգերի աշխատակիցները պետք է հասկանան, որ բարեփոխումը միայն դատական կամ իրավական համակարգի խնդիր չէ, այլ` պետական բոլոր կառույցների աշխատանքները ժամանակակից պահանջներին համապատասխանեցնելու խնդիր:

Օրակարգի հարցերի շրջանակում խորհրդակցության մասնակիցներն իրենց տեսակետները, դիտարկումներն ու առաջարկություններն են ներկայացրել ՀՀ դատաիրավական բարեփոխումների ծրագրի նախագծի վերաբերյալ:

\* \* \*

ՀՀ Նախագահ ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԸ կարգադրություն է ստորագրել Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին:

Ծրագրի հիմնական նպատակն է Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից իրավական պետության չափանիշներին համապատասխանող իրավական համակարգի և դատական իշխանության ապահովումը:


Ծրագիրը ներառում է այնպիսի ոլորտներ, ինչպիսին են, մասնավորապես, քրեական, քաղաքացիական, վարչական արդարադատությունը,

դատական համակարգը, դատախազությունը, փաստաբանության և քաղաքացիներին մատուցվող ծառայությունների ոլորտները, որոնցից յուրաքանչյուրում առկա խնդիրների լուծման համար նախատեսված են ինչպես օրենսդրական, այնպես էլ իրավակիրառական բնույթի միջոցառումներ: Յուրաքանչյուր միջոցառման համար սահմանված են իրականացման ժամկետներն ու պատասխանատու մարմինները, ինչպես նաև` այն ցուցանիշերը, որոնց առկայությունը կվկայի միջոցառման հաջող իրագործման մասին:

Փաստաթուղթն ամբողջությամբ հրապարակված է ՀՀ Նախագահի ինտերնետային պաշտոնական կայքէջում:

## Հայաստանի և Չինաստանի գլխավոր դատախազները ստորագրեցին համագործակցության ծրագիր

ՀՀ գլխավոր դատախազ ԱՂՎԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԸ  
և ՉԺՀ գլխավոր դատախազ ՑԱՈ ՁՅԱՆՄԻՆԸ  
2012թ. հունիսի 11-ին Երևանում ստորագրեցին  
«2012-2013թթ. ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության և ՉԺՀ  
գլխավոր դատախազության միջև համագործակցության» ծրագիր:  
Ըստ այդմ՝ կողմերը պայմանավորվել են կազմակերպել համատեղ  
սեմինարներ, կլոր-սեղաններ՝ քննարկելու առանձին  
հանցատեսակների քննության առանձնահատկությունների  
վերաբերող հարցեր՝ նախանշելով միջոցառումների կոնկրետ  
ժամանակացույց:



Ծրագրի համաձայն՝ 2012-2013թթ. հայ և չինացի գործընկերները համատեղ սեմինարներ կկազմակերպեն հետևյալ թեմաներով.

- Հանցավոր նպատակներով ինտերնետն օգտագործելու դեմ պայքարի հիմնախնդիրները և պրակտիկան. դատախազության դերը կիրառական ցազործության դեմ պայքարում իրավապահ մարմինների գործողությունների համակարգման հարցում,

- Կռուուայցիոն բնույթի հանցագործությունների դեմ պայքարում փորձի փոխանակում. պրակտիկայի, պայքարի

արդյունքների և արդյունավետության վերաբերյալ քննարկումներ,

- Տնտեսական հանցագործությունների քննության պրակտիկան և խնդիրները:

Կողմերը հույս են հայտնել, որ ստորագրված ծրագիրը նոր որակ կհաղորդի Հայաստանի և Չինաստանի դատախազությունների համագործակցությանը՝ նպաստելով հանցավորության դեմ պայքարում դատախազական հսկողության արդյունավետության բարձրացմանը:

Հունիսի 11-ին Չինաստանի ժողովրդական Հանրապետության գլխավոր

դատախազ ՑԱՈ ԶՅԱՆՄԻՆԻՆ ընդունել է ՀՀ Նախագահ ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԸ:

Նախագահ ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԸ գոհունակությամբ է արձանագրել Հայաստանի և Չինաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ի վեր երկկողմ հարաբերությունների բարձր մակարդակը՝ դրա վկայություն համարելով տարբեր ոլորտներում, այդ թվում՝ իրավապահության, հայ-չինական վերընթաց զարգացող համագործակցությունը: Հանրապետության ղեկավարը վերահաստատել է Հայաստանի պատրաստակամությունը շարունակելու այդ գործընթացը:

Զ ի ն ա ս տ ա ն ի ի գլխավոր դատախազը երկու երկրների գլխավոր դատախազությունների փոխգործակցության զարգացման և փորձի փոխանակման տեսանկյունից կարևորել է ՀՀ և ԶԺՀ գլխավոր դատախազությունների միջև ստորագրված համագործակցության ծրագիրը, նշելով, որ ՀՀ դատախազության հետ սկիզբ առած համագործակցությունը տարեց-տարի ամրապնդվում է՝ նպաստելով հայ-չինական երկկողմ կապերի առավել սերտացմանը:

Նշենք, որ ծրագիրը երկրորդ փաստաթուղթն է, որը ստորագրվում է երկու երկրների գլխավոր դատախազների կողմից: Առաջին փաստաթուղթը՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության գերագույն ժողովրդական դատախազության միջև համագործակցության մասին Համաձայնագիրը, ստորագրվել է 1999 թվականի սեպտեմբերի 9-ին Պեկինում:

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության գլխավոր դատախազ ՑԱՈ ԶՅԱՆՄԻՆԻ գլխավորած պատվիրակությունը երևան էր ժամանել 2012թ. հունիսի

9-ին՝ ՀՀ գլխավոր դատախազ ԱՂՎԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ հրավերով: Այցելության ընթացքում հյուրերը հնարավորություն են ունեցել ծանոթանալու Հայաստանի դատախազության համակարգին, հիմնական գործառույթներին և խնդիրներին, քննարկվել են նաև քրեական գործերով իրավական օգնություն ցուցաբերելու վերաբերյալ հարցեր:

Պատվիրակությունն այցելել է Հայաստանի պատմամշակութային հուշարձաններ ծանոթանալով հայոց պատմությանն ու մշակույթին, իսկ հունիսի 12-ին հյուրերը այցելել են Ծիծեռնակաբերդ և Հայոց Ցեղասպանության թանգարան՝ հարգելու Մեծ եղեռնի անմեղ զոհերի հիշատակը:

Հ ա յ ա ս տ ա ն ի Հանրապետության դատախազությունը կարևորում է հանցավորության դեմ պայքարում միջազգային համագործակցությունը և ի լրումն միջազգային փաստաթղթերով՝ կոնվենցիաներով նախատեսված համագործակցության սկզբունքների, գործնական քայլեր է ձեռնարկում նաև քրեական գործերով իրավական օգնություն ցուցաբերելու վերաբերյալ այլ պետությունների դատախազությունների հետ երկկողմանի համագործակցությունը զարգացնելու ուղղությամբ:

Արդեն 14 երկրների դատախազությունների հետ Հայաստանն ունի ստորագրված համագործակցության մասին հուշագրեր, իսկ 2 երկրի հետ առավել զարգացնելով համագործակցության մեխանիզմները՝ նաև՝ համագործակցության ծրագիր: Մինչ այս Հայաստանը համագործակցության ծրագիր՝ միջոցառումների ժամանակացույցի և թեմաների հստակեցմամբ, ստորագրել էր Ռուսաստանի Դաշնության դատախազության հետ:



## ՀՀ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԳԻԱՅՈՒՄ

2012 թվականի հունիսի 1-ին կայացած ՀՀ դատախազության կոլեգիայի նիստում քննարկվեցին 2011 թվականի աշնանային զորակոչի արդյունքները և դատախազական հսկողության խնդիրները: Ձեկուցումներով հանդես եկան ՀՀ զինվորական դատախազ, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ ԳԵՎՈՐԳ ԿՈՍՏԱՆՅԱՆԸ և ՀՀ գլխավոր դատախազության ընդհանուր բնույթի հանաքագործությունների գործերով վարչության պետի տեղակալ ՀԱԿՈԲ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ:

ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող և կիբերհանցագործություն-

ների գործերով վարչության պետ ԱՐԹՈՒՐ ԳՈՅՈՒՆՅԱՆԻ զեկուցումը նվիրված էր 2010-2011 թվականների ընթացքում ապօրինի սահմանահատման դեպքերով նյութերի նախապատրաստման, քրեական գործերի նախաքննության նկատմամբ իրականացված դատախազական հսկողության և մեղադրանքի պաշտպանության վիճակին:

Քննարկումների արդյունքներով ՀՀ դատախազության կոլեգիան ընդունեց որոշումներ:

Կոլեգիայի նիստը վարում էր և քննարկումներն ամփոփեց ՀՀ գլխավոր դատախազ ԱՂՎԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԸ:



ՀՀ գլխավոր դատախազ ԱՂՎԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ նախագահությամբ 2012թ. հունիսի 20-ին տեղի ունեցավ ՀՀ դատախազության կոլեգիայի հերթական նիստը:

«Հայաստանի Հանրապետությունում և ՀՀ զինված ուժերում 2011 թվականի ընթացքում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու փաստով հարուցված քրեական գործերի նախնական քննության նկատմամբ իրականացվող դատախազական հսկողության վիճակը և դատարանում մեղադրանքի պաշտպանության պրակտիկայի մասին» օրակարգային հարցի շուրջ զեկուցումներով հանդես եկան ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ ՎԱՀՐԱՄ ՇԱՀԻՆՅԱՆԸ և ՀՀ զինվորական դատախազ, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ ԳԵՎՈՐԳ ԿՈՍՏԱՆՅԱՆԸ:

ՀՀ գլխավոր դատախազության Սեփականության և տնտեսական հանցագործությունների գործերով վարչության պետ ԳՐԻԳՈՐ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԸ կոլեգիային ներկայացրեց 2010-2011 թվականների ընթացքում գողության դեպքերի վերաբերյալ քրեական գործերի նախաքննության նկատմամբ իրականացված դատախազական հսկողության վիճակը և մեղադրանքի պաշտպանության պրակտիկայի ուսումնասիրության արդյունքները:

Կոլեգիան անդրադարձավ նաև հանրապետության քրեակատարողական հիմնարկներում 2009-2010 թվականների ընթացքում ծանր հիվանդության հետևանքով պատժից ազատելու վերաբերյալ գործող օրենսդրության պահանջների կատարման վիճակին: Կատարված ստուգումների և ուսումնասիրությունների հիմքի վրա կազմված տեղեկանքի հիմնական դրույթներն ու եզրակացությունները կոլեգիային զեկուցեց ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության պետ ՎԱՐԴԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԸ:

ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական վարչության պետ ԱՐՏԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ներկայացմամբ ՀՀ դատախազության կոլեգիան քննարկեց 2012 թվականի երկրորդ կիսամյակի աշխատանքի ծրագրի նախագիծը և այն ընդունեց որպես հիմք:

Կոլեգիայի նիստի աշխատանքներն ամփոփեց ՀՀ գլխավոր դատախազ ԱՂՎԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԸ:



**Լրացավ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, արդարադատության պետական խորհրդական, ՀՀ վաստակավոր իրավաբան ԱՐԱՄ ԹԱՄԱԶՅԱՆԻ ծննդյան 60-ամյակը: Այդ կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազ ԱԳՎԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԸ հորելյարին պարգևատրել է արժեքավոր նվերով և նրան հղել ուղերձ, որում ասված է.**

### **«Նարզելի Արամ Արծվիի**

Նայաստանի Նանրապետության դատախազության կոլեգիայի, համակարգի բոլոր աշխատակիցների և անձամբ իմ անունից ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ՝ ծննդյան 60-ամյակի կապակցությամբ:

Երկար տարիներ աշխատելով դատախազության մարմիններում, հարկապես կարևոր գործերի քննիչից հասնելով ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնին և ներկայումս աշխատելով որպես ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, Դուք միշտ առանձնացել եք Ձեր խորը գիտելիքներով, գործի հանդեպ բարձր պատասխանատվությամբ ու սկզբունքայնությամբ, կազմակերպական ձիրքով և հստակ պետական մրաձուռությամբ:

Որպես Նանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, համակարգելով դատախազական գործունեության կարևոր բնագավառներ, Դուք նշանակալից ավանդ եք ներդնում դատախազական ծառայության արդիականացման և արդյունավետության բարձրացման գործում:

Նանդիսանալով մեր երկրի ճանաչված ու ամենահարգված գիտնական-իրավաբաններից մեկը, Դուք Ձեր վերլուծական բացառիկ կարողություններով, աշխատասիրությամբ վայելում եք դատախազության, իրավական ոլորտի աշխատողների արժանի ակնածանքն ու սերը: Ձեր հեղինակած բարձրարժեք գրքերն ու հոդվածները, դատախազի փաստաբանների անգնահատելի փորձն ու հմտությունները ընդօրինակման ուժ ունեն և անգնահատելի դպրոց են դատախազների ներկա սերնդի, երիտասարդ իրավաբանների համար:

Արժանիորեն բարձր են գնահատվել Նայրենիքին և իրավական ոլորտին մատուցած Ձեր ծառայությունները. ՀՀ Նախագահի հրամանագրերով Ձեզ շնորհվել է վաստակավոր իրավաբանի պատվավոր կոչում և Արդարադատության պետական խորհրդականի դասային աստիճան, պարգևատրվել եք Մխիթար Գոշի մեդալով: Դուք դատախազության պատվավոր աշխատող եք, պարգևատրվել եք պետական, կառավարական և գերատեսչական բազմաթիվ մեդալներով, արժանացել շնորհակալագրերի և պատվոգրերի:

Ձեր գործընկերները, գիտական, իրավաբանական հանրությունը, ինչպես Նայաստանում՝ այնպես էլ նրա սահմաններից դուրս, Ձեզ ճանաչում են նաև որպես կարեկից ընկեր ու սկզբունքային քաղաքացի, լայն հեղափոխություններ և բեղուն գրիչ ունեցող գիտնական-հետազոտող և հմուտ դասախոս:

Մեկ անգամ ևս շնորհավորելով ծննդյան 60-ամյակի առիթով՝ մաղթում եմ Ձեզ, հարգելի պարոն Թամազյան, երկար տարիների բեղմնավոր գործունեություն, հաջողություններ ու առողջություն Ձեզ և Ձեր ընտանիքին»:

***«Օրինականություն» գիտագործնական հանդեսը սփռով միանում է հորելյարի սրացած շնորհավորանքներին:***

# ԻՐԱՎԱԿԱՆ ԿՅԱՆՔ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## Յովհաննես ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՅՅ գլխավոր դատախազի խորհրդակաՆ,  
իրավաբանական գիտությունների դոկտոր,  
արդարադատության երրորդ դասի  
պետական խորհրդակաՆ

*Իրավունքի տեսության և փիլիսոփայության մեջ իրավունքի կեցության հիմնախնդիրներն արծարծելիս օգտագործվում են այնպիսի կատեգորիաներ, ինչպիսիք են «իրավական կյանք» և «իրավական իրականություն» կատեգորիաները: Այս կատեգորիաներն ընդհանուր առմամբ նույնիմաստ են համարվում, թեև նրանցից յուրաքանչյուրն ունի իմաստային իր նրբությունները: Չնայած իմաստային տարբերություններին՝ այս կատեգորիաներում արտահայտված իրողության յուրահատկությունները իրավունքի տեսության գլխավոր հիմնախնդիրներից են:*

«Իրավական կյանք» կատեգորիան վերջերս է դրվել գիտական շրջանառության մեջ: Նրա առանձնահատկությունների բացահայտմամբ զբաղվող իրավաբանները գտնում են, որ «իրավական կյանքը» առավել ընդգրկում մի կատեգորիա է, որը ներառում է մյուս կատեգորիաները: Իրավական կյանքը բնորոշվում է հետևյալ կերպ. «Իրավական կյանքը հասարակության իրավական կեցության բոլոր ձևերի համակցությունն է, որն արտահայտվում է իրավական ակտերում և իրավունքի այլ դրսևորումներում, բնութագրում է առկա իրավական իրականության առանձնահատկությունները և մակարդակը, սուբյեկտների վերաբերմունքը իրավունքին և նրանց շահերի բավարարման աստիճանը»:<sup>1</sup> Դժվար չէ նկատել, որ այս բնորոշման մեջ իրավական կյանքը և իրավական իրականությունը նույնացվում են:

Իրավական կյանքի բովանդակությունը բացահայտվում է նրա հատկանիշների միջոցով: Իրավական կյանքի կարևորագույն հատկանիշն է համարվում այն, որ իրավական կյանքը հասարակական կյանքի բաղկացուցիչ մասն է և առանձնահատուկ տե-

սակը, որքանով որ իրավունքը համարվում է սոցիալական այնպիսի ինստիտուտ, որը հարմարեցված է կոնկրետ ժողովրդի կյանքի առանձնահատկություններին: Իրավական կյանքի մյուս կարևորագույն հատկանիշն է համարվում այն, որ իրավական կյանքը հասարակության գոյության պետականորեն կազմակերպված պայմաններից մեկն է, որքանով որ իրավական կյանքը կոչված է որոշակի ձևով կազմակերպելու անձնական, պետական և հասարակական կյանքը:

Այս համատեքստում իրավական կյանքը դիտվում է ոչ թե որպես առանձին համակարգ, որին բնորոշ է որոշակի բաղադրիչների, տարրերի, դրանց միջև տարբեր բնույթի կապերի առկայությունը, այլ հասարակության իրավական կյանքի բոլոր ձևերի անկազմակերպ ամբողջություն, որքանով որ «իրավական կյանք» կատեգորիան ներառում է նաև պատահական և չկարգաբերված տարրեր: Ընդ որում, իրավական կյանքն ընդգրկում է ինչպես դրական, այնպես էլ ժխտական երևույթներ:<sup>2</sup> Իրավական կյանքի դրական բաղադրիչներից են համարվում իրավունքը, որն ար-

<sup>1</sup> Общая теория государства и права / Под ред. Марченко М. Н., Т.2, М., 2001. С.122.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 122-123:

տացույցում է մարդու իրավունքները, մարդասիրությունը, արդարության գաղափարները, նաև՝ իրավական համակարգը, իրավական կարգավորման մեխանիզմը, իրավական ակտերը, իրավաբանական արարքները և իրադարձությունները, որպես իրավաբանական փաստեր, իրավաբանական ռեժիմները և այդպիսիք կազմող նախնական իրավաբանական միջոցները՝ արտոնություններ, խրախուսանքներ, լիազորություններ, արգելքներ, պատիժներ, պարտավորություններ, իրավահարաբերություններ, իրավաբանական պրակտիկա:

**«...Իրավական կյանքը հասարակության իրավական կեցության բոլոր ձևերի համակցությունն է...»**

Իրավական կյանքի դրական բաղադրիչներից են համարվում նաև իրավագիտակցությունը, իրավական մշակույթը, օրինականությունը և իրավակարգը, իրավաբանական գիտությունը և կրթությունը: Իրավական կյանքի ժխտական բաղադրիչներն են համարվում հանցագործություններն ու այլ իրավախախտումները, նրանց սուբյեկտները, կոռուպցիան, չարաշահումները և այլն:<sup>3</sup>

Իրավական կյանքը, իր ողջ բազմազանությամբ հանդերձ, ունի իր դրսևորման ձևերը: Իրավական կյանքի դրսևորման հիմնական ձևերն են համարվում իրավական ակտերը: «Իրավական ակտ» հասկացությունն օգտագործվում է բավական լայն և յուրահատուկ իմաստով: Այս մոտեցման դեպքում ենթադրվում է, որ իրավունքի կեցությունն արտահայտվում է հենց իրավական ակտերում, և որ առօրյա կյանքում մարդը գործ ունի ոչ թե իրավունքի հետ ընդհանրապես, այլ կոնկրետ իրավական ակտերի հետ: Այս տեսակետի համաձայն՝ իրավական ակտը մշանակում է նախ՝ գործողություն (վարքագիծ), ընդ որում, ինչպես օրինաչափ, այնպես էլ ապօրինի, այդ

գործողությունների հետևանքները և երկրորդ՝ իրավաբանական բոլոր տեսակի փաստաթղթերը:

Ինչպես տեսնում ենք, այսպիսի մոտեցման պարագայում իրավական կյանք է համարվում հասարակական կյանքի ցանկացած դրսևորում, որն այս կամ այն կերպ առնչվում է իրավունքին: Սակայն որն է «իրավական» որոշարկման բովանդակությունը, ինչ է այն «իրավականը», որը որպես ստորոգելի, բնութագրելով հասարակական կյանքի այս կամ այն երևույթը, այդպիսի կյանքը դարձնում է իրավական կյանք, չի պարզաբանվում: Բացի այդ «իրավական կյանք» միևնույն հասկացությունը հասարակական կյանքի բազմազան և բազմաբնույթ երևույթների վրա տարածելը, այլ կերպ ասած, այդ հասկացության ծավալի անվերջ ընդարձակումը և այն կատեգորիայի վերածելը, ըստ էության, այդ կատեգորիան դարձնում է տարտամ, բովանդակազուրկ, վերջին հաշվով, կյանքից կտրված, վերացարկված և գիտական առումով ոչ պիտանի:

Իրավունքի փիլիսոփայության մեջ տեսակետ կա նաև, որ իրավական կյանքն ինքը իրավունքի կեցության ձևերից մեկն է, իրավական իրականության դրսևորում: Այս տեսակետի համաձայն իրավունքի տեսության հիմնական կատեգորիան ոչ թե իրավական կյանքն է, այլ իրավական իրականությունը: Այստեղ «իրավական իրականություն» կատեգորիան դիտվում է որպես իրավունքի տեսության խնդիրներից

**«...Իրավունքը համարվում է սոցիալական այնպիսի ինստիտուտ, որը հարմարեցված է կոնկրետ ժողովրդի կյանքի առանձնահատկություններին...»**

համահունչ մեթոդաբանական այնպիսի միջոց, որի շնորհիվ հնարավոր է մի կողմից դուրս գալ իրավունքի բնորոշումների բազմազանությունից, մյուս կողմից՝ չկորցնել իրավունքին ներհատուկ դրսևորումների հարստությունը:

Իրավական իրականությունը այս տե-

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 123:

սակետի համաձայն, նախատրվում է առկա իրավագիտակցության մեջ ներկայացված իրավունքի կերպարով և ձևավորվում են հետևյալ երևույթների փոխազդեցության շնորհիվ.

ա) տարբեր մակարդակների, այդ թվում՝ փիլիսոփայական տեսություններից, ինչպես նաև իրավական գաղափարախոսությունից, ներառյալ սահմանադրության մեջ վերջինիս մարմնավորումը,

բ) իրավական կարգավորման տարբեր մակարդակներին առնչվող նորմատիվ փաստաթղթերից,

գ) իրավական կյանքի դրսևորումներից՝ իրավախախտումների, մարդու իրավունքների պահպանության պրակտիկայի և այլնի հետ առնչվող առօրյա փորձից, որը հնարավորություն է տալիս առաջ քաշելու հիպոթեզներ, վարկածներ, զգալու, որ դրանցում պատկերացվածը տեղի է ունեցել և տեղի է ունենում իրականում:<sup>4</sup>

Այս տեսակետի համաձայն՝ տարբերվում են «իրավական իրականություն» հասկացության լայն և նեղ իմաստները: Լայն առումով «իրավական իրականության» տակ պետք է հասկանալ **«իրավական երևույթների ողջ համակցությունը, իրավական նորմերը, ինստիտուտները, առկա իրավահարաբերությունները, իրավական ուսմունքները, իրավական հո եկերտվածքի երևույթները** և այլն: Երկրորդ դեպքում (այսինքն՝ նեղ իմաստով) իրավական իրականություն ասելով նկատի են ունեցվում միայն հիմնարար իրավական իրողությունները, որոնց համեմատ մնացած բոլոր իրավական երևույթները ածանցյալ են, և այդ դեպքում **տարբեր ուղղություններում և իտական դպրոցներում իրավական իրականություն ասելով ընդունված է հասկանալ կամ իրավական նորմերը (նորմատիվիզմ), կամ իրավական հարաբերությունները (սոցիոլո իական ուղղություն), կամ իրավական «հույզերը» (հո եքանական ուղղություն):** **Յիմնա-**

**րար երևույթների շարքին են դասվում նաև պետական իշխանության սահմանած իրավունքի նորմերը (պոզիտիվիզմ), օբյեկտիվ հասարակական հարաբերությունները (օբյեկտիվիզմ), իրավունքի իդեան կամ իմաստը (սուբյեկտիվիզմ), սուբյեկտների իդեալական փոխազդեցությունը, որն առարկայանում է լքվում (ինտերսուբյեկտիվություն)»:<sup>5</sup>**

**«...Իրավունքի փիլիսոփայության մեջ տեսակետ կա նաև, որ իրավական կյանքն ինքը իրավունքի կեցության ձևերից մեկն է, իրավական իրականության դրսևորում...»**

Այս մոտեցման համաձայն՝ իրավական իրականության վերլուծության միջոցով հնարավոր է դառնում բացահայտել իրավունքի կեցության ձևերը: Այդպիսիք են իդեաների աշխարհը՝ իրավունքի իդեան, նշանային ձևերի աշխարհը՝ իրավական նորմերը և օրենքները, սոցիալական սուբյեկտների փոխազդեցության աշխարհը՝ իրավական կյանքը:<sup>6</sup> Ինչպես տեսնում ենք, այս մոտեցման մեջ իրավական կյանքը իրավական իրականության տեսանկյունից սոսկ իրավունքի կեցության ձևերից մեկն է:

Իրավունքի տեսության մեջ մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև իրավական իրականության գոյության պայմանների բացահայտման, իրավունքի գոյության հիմնավորման հարցերը: Իրավական իրականության անմիջական աղբյուրը, հասկանալի է, իրավական պատկերացումներն են, իրավական իմաստները, որոնք կանխորոշում են հասարակական կյանքի իրավական կարգավորման բովանդակությունը: Այստեղից էլ հարց է ծագում՝ ի՞նչ երևույթներ են պայմանավորում իրավական պատկերացումները, իմաստները: Դասական մտածողության շրջանակներում հնարավոր է երկու տարբերակ,

<sup>4</sup> Философия права / Под ред. Даниельяна О.Г., М., 2005. С. 215.

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 215-216:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 225:

որոնք պայմանավորված են օբյեկտ-սուբյեկտ կատեգորիաներով և նրանց հակադիմությանը: Տարբերակներից մեկն այն է, որ իրավական գաղափարներն ու իմաստները բխում են օբյեկտից, օբյեկտիվ հարաբերություններից: Մյուս տարբերակն այն է, որ նշված իրավական գաղափարներն ու իմաստները բխում են սուբյեկտից, նրա գիտակցությունից: Համապատասխանաբար, մենք կունենանք իրավունքի օբյեկտիվիստական կամ սուբյեկտիվիստական գոյաբանական ուսմունքներ:

Իրավական օբյեկտիվիզմը բոլոր իրավական պատկերացումները և իմաստները բխեցնում է օբյեկտիվ իրականությունից: Այստեղ իրավական իրականությունը, որպես իրավական պատկերացումների և իմաստների մարմնավորում, դիտվում է որպես հասարակական հարաբերությունների իրականություն, որոնց մեջ և պետք է փնտրել իրավունքի ակունքներն ու հիմքերը: Իրավական օբյեկտիվիզմի բնորոշ գիծն այն է, որ իրավական իրականությունը համարվում է մարդկանց գիտակցությունից անկախ, օբյեկտիվ իրականություն, որն ունի իր սեփական օրինաչափությունները: Փաստորեն, իրավաբանական օբյեկտիվիզմը իրավունքը հանգեցնում է իրավունքից դուրս գտնվող մեկ այլ իրականության: Հարկ է նշել, որ իրավական օբյեկտիվիզմը իրավական իրականության ձևավորման հարցում չի ժխտում մարդկանց նպատակաուղղված գործունեության նշանակությունը: Իրավական իրականությունը թեպետ համարվում է մարդկանց ինստիտուցիոնալիզացված գործողությունների ամբողջություն և մարդկային գործունեության առարկայացման արդյունք, սակայն ձևավորումից հետո այն դառնում է մարդկանց գիտակցությունից անկախ, օբյեկտիվ իրողություն և ներգործում է մարդկանց գիտակցության և վարքի վրա:

Իրավական օբյեկտիվիզմի աշխարհահայացքային և մեթոդաբանական հիմքում ընկած են այն պատկերացումները, թե հասարակությունն ինքը անհատների գիտակցությունից անկախ կանգնավորում է: Լինելով անհատների միավորում՝ հասարակությունը սոցիալական փաստերի կամ հասարակական հարաբերությունների յուրահատուկ դրսևորում է: Այդ պատկերացումներից ելնելով՝ իրավաբանական օբ-

յեկտիվիզմը իրավական իրականությունը դիտում է որպես առկա տրվածություն, օբյեկտիվ երևույթ, որը ներհատուկ է հասարակական կյանքին: Իրավական իրականության նախատրվածությունը և օբյեկտիվությունը պայմանավորում է նաև այդ իրականության տեսական իմաստավորման առանձնահատկությունները՝ տեսական մտքի շարժման ուղղությունն սկսվում է իրավական իրականությունից և ընթանում է դեպի անձը և նրա վարքագիծը: Համապատասխանաբար, իրավաբանական օբյեկտիվիզմի ճանաչողական հիմնական

**«...Իրավական կյանքը իրավական իրականության տեսանկյունից սուկ իրավունքի կեցության ձևերից մեկն է...»**

խնդիրը այն պատճառական կապերի բացահայտումն է, որոնք առկա են իրավական իրականության և անհատների գիտակցության ու վարքագծի հարաբերակցությունում:

Իրավունքի այն բոլոր տեսությունները, որոնք ստեղծվում են իրավական օբյեկտիվիզմի շրջանակներում, իսկ այդպիսի տեսությունները ներկայումս գերիշխում են, օրինակ, հայ իրավական մտքի տիրույթում, խիստ որոշակի պատկերացում ունեն իրավունքի տեսության առարկայի վերաբերյալ: Իրավական օբյեկտիվիզմի վրա հիմնված իրավունքի տեսությունները գտնում են, որ ցանկացած գիտության առարկան այն օբյեկտն է, կամ առարկայական տիրույթը, որն ուսումնասիրվում է տվյալ գիտության կողմից:

Իրավունքի տեսության մեջ տարածված պատկերացումների համաձայն իրավական գիտելիքները ունեն երեք մակարդակ՝ իրավունքի ճյուղային գիտությունները, իրավունքի ընդհանուր տեսությունը և իրավունքի փիլիսոփայությունը: Իրավական գիտելիքի յուրաքանչյուր մակարդակը արտացոլող տեսությունն ունի ուսումնասիրության իր առարկան, խնդիրները և մեթոդները, ընդ որում, նրանց բոլորի համար ընդհանուր օբյեկտ է իրավական իրականությունը: Այստեղ ավելորդ չէ սահմանազատել իրավունքի տեսության օբյեկտն ու առարկան, ինչպես այն պատկերացնում

են իրավական օբյեկտիվիզմի շրջանակներում ձևավորված տեսությունները: Վերջիններս իրավական իրականության ճանաչողության ելակետ են համարում ոչ թե այդ իրականությունն արտացոլող հասկացությունները և կատեգորիաները, այլ այն օբյեկտիվ իրականությունը, որը տվյալ դեպքում անվանվում է իրավական իրականություն: Այդ իրավական իրականությունն է, որը պարունակում է շարժման և սեփական զարգացման աղբյուրը, դրանով իսկ այդ իրականության ճանաչողության սկիզբը և գիտելիքների

օրինաչափությունների համակարգն է, ինչպես նաև սոցիոլոգիական, տնտեսական, քաղաքական և այլ օրինաչափությունների համակարգերը, որոնք ազդում են իրավունքի գործողության, զարգացման և

**«...Իրավական օբյեկտիվիզմը բոլոր իրավական պատկերացումները և ինաստները բխեցնում է օբյեկտիվ իրականությունից...»**

զարգացման աղբյուրը: Այն օբյեկտիվ իրականությունը (տվյալ դեպքում իրավական իրականությունը), որը հանդես է գալիս որպես տեսական ճանաչողության սկիզբ և աղբյուր, որպես այդպիսին, հակադրվում է արդեն իսկ ճանաչված օրինաչափություններին, որոնք ընդամենը հասկացությունների, կատեգորիաների և այլ վերացարկումների մեջ արտացոլված իրականության դժգույն, ոչ լիարժեք, երբեմն աղավաղված պատճեններն են: Ահա այդ օբյեկտիվ իրականությունն էլ հանդես է գալիս որպես գիտության, տվյալ դեպքում իրավական տարբեր մակարդակի գիտելիքներ ամփոփող գիտությունների օբյեկտ: Այս մոտեցման դեպքում օբյեկտիվ իրականությունը՝ գիտության օբյեկտը, հստակ սահմանազատվում է այդ իրականությունում գործող օրինաչափություն-

օրինաչափությունների վրա, նաև տվյալ գիտության առարկայի ճանաչողության օրինաչափությունների համակարգը:<sup>8</sup>

Այսպիսով, ի մի բերելով վերը նշվածը, կարող ենք պնդել, որ իրավական օբյեկտիվիզմի շրջանակներում ստեղծված ուսմունքները, ինչ մակարդակի իրավական գիտելիք արտահայտելիս լինեն, իրավական իրականությունը, որպես ուսումնասիրության օբյեկտ, դիտում են մարդկանց գիտակցությունից անկախ իրականության մի այնպիսի հատվածը, որն առկա է, գոյություն ունի մինչև ուսումնասիրությունը: Իրավաբանական գրականության մեջ հենց այդպես էլ նշվում է. «Ամեն մի գիտություն ունի հետազոտության իր առարկան, որի տակ հասկացվում է տվյալ գիտության կողմից ուսումնասիրվող օբյեկտիվ իրականության որևէ կողմը: Այլ խոսքերով ասած, գիտության առարկան իրական աշխարհի այն երևույթներն ու գործընթացներն են, որոնք հետազոտվում են նրա կողմից, ինչին ուղղված է գիտական

**«...Իրավաբանական օբյեկտիվիզմը իրավունքը հանգեցնում է իրավունքից դուրս գտնվող մեկ այլ իրականության...»**

ներից:<sup>7</sup> Ինչ վերաբերում է գիտության առարկային, ապա այդ առարկան են կազմում իրավական իրականության օրինաչափությունները, որոնք զատված են իրավական և սոցիալական այլ երևույթներից: Այս տեսակետի համաձայն՝ իրավունքի ընդհանուր տեսության առարկան իրավունքի, որպես ամբողջության, ընդհանուր

ընդհանուր տեսության առարկան իրական աշխարհի այն երևույթներն ու գործընթացներն են, որոնք հետազոտվում են նրա կողմից, ինչին ուղղված է գիտական

ճանաչողությունը: Այդ առումով պետության և իրավունքի տեսության առարկան բացառություն չի կազմում:<sup>9</sup>

Իրավունքի հիմնավորման սուբյեկտիվիստական տեսությունները հետազոտում են ոչ թե հասարակական կյանքի իրողությունների և իրավունքի կապը, ոչ թե այն խնդիրները, որոնք կապված են

<sup>7</sup> Сырых В.М. Логические основания общей теории права. Т.1, М., 2004, С. 102.

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 93:

<sup>9</sup> Теория государства и права/Под ред. Корельского В.М., Перевалова В.Д., М.,1997. С. 7.

մարդու գիտակցության և վարքագծի վրա հասարակության կյանքի իրողությունների ազդեցության հետ, այլ այն, թե մարդիկ ինչպես են իրենց գիտակցական գործունեությամբ ստեղծում, փոփոխում և վերարտադրում իրավունքն ու իրավական իրականությունը: Այս մոտեցման դեպքում ելակետային է համարվում ոչ թե օբյեկտը, այլ սուբյեկտը: Իրավական սուբյեկտիվիզմը իրավական պատկերացումների և իմաստների հիմքն է համա-

իմաստները վերջին հաշվով էմպիրիկ մարդու հուզական ոլորտում ծնունդ առնող սուբյեկտիվ երևույթներ են:

Ինչպես տեսնում ենք, իրավական օբյեկտիվիզմը և իրավական սուբյեկտիվիզմը իրավական իրականությունը քննարկում են սկզբունքորեն հակառակ դիրքերից:

Եթե իրավական օբյեկտիվիզմն իրավական իրականությունը համարում է մարդկանց գիտակցությունից անկախ և նրանց վարքագծի վրա ազդող արտաքին ուժ, ապա իրավական սուբյեկտիվիզմը իրավական իրականությունը քննարկում է էմպիրիկ սուբյեկտի և նրա գիտակցության ու ապրումների դիրքերից՝ իրավական իրականությունը

**«...Հայ իրավական մտքի տիրույթում, խիստ որոշակի պատկերացում ունեն իրավունքի տեսության առարկայի վերաբերյալ...»**

րում իրավունքի գաղափարը, որը բացահայտվում է մարդու գիտակցության խորքերում: Իրավունքի այդ գաղափարից ահա բխում են իրավական պատկերացումները և իմաստները, որոնք մամնավորվում են իրավակարգում, ընդ որում, իրավական սուբյեկտիվիզմի ներկայացուցիչների մի մասը գտնում է, որ իրավունքի գաղափարից է բխում ողջ իրավակարգը, մյուս մասը՝ միայն

հանգեցնելով մարդու գիտակցության, բանականության և ապրումների մեջ բացահայտվող իրավական պատկերացումների և իմաստների:

Այսպիսով, իրավական կյանքը և իրավական իրականությունը հասարակական կյանքի այն երևույթներից են, որոնց ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի իրավունքի տեսության հա-

հիմնական սկզբունքները: Իրավական սուբյեկտիվիզմի վրա է հիմնված նաև Լ.Պետրաժիցկու իրավունքի հոգեբանական ուսմունքը, որտեղ իրավունքը համարվում է իմպերատիվ ապրումների ամբողջություն: Իրավական սուբյեկտիվիզմի տարատեսակ են նաև այն

**«...Կարող ենք պնդել, որ իրավական օբյեկտիվիզմի շրջանակներում ստեղծված ուսմունքները, որպես ուսումնասիրության օբյեկտ, դիտում են մարդկանց գիտակցությունից անկախ իրականության մի այնպիսի հատվածը, որն առկա է, գոյություն ունի մինչև ուսումնասիրությունը...»**

ուսմունքները, որոնք ձևավորվում են արժեքների փիլիսոփայության շրջանակներում: Այստեղ արժեքները, որոնք իդեալական ոլորտի օբյեկտիվ երևույթներ են, մարդուն տրվում են համապատասխան հուզական ապրումների միջոցով, այսինքն՝ իրավական պատկերացումները և

մար, թեպետ մինչև օրս պատշաճ ուշադրություն չի դարձվել դրանց: Համապատասխան կատեգորիաների միջոցով այդ երևույթների հետազոտությունը կարող է նպաստել ինչպես իրավունքի տեսության զարգացմանը, այնպես էլ գործնական խնդիրների լուծմանը:

# Օրենքի գերակայության հայեցակարգը և պետությունների միջազգային համագործակցությունը հանցավորության դեմ պայքարում

## ՆԵՒԼԻ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազության  
միջազգային-իրավական կապերի  
բաժնի պետ

*Հանցավորության դեմ պայքարի հարցերը վերաբերվում են յուրաքանչյուր պետության ներքին օրենսդրության ոլորտին: Սակայն, սոցիալական և տնտեսական գործընթացների գլոբալիզացիան առաջ բերեց նաև հանցավորության գլոբալիզացիա, դարձնելով այն առավել կազմակերպված և անդրազգային: Հանցավոր խմբերն, ավելի արագ քան ցանկացած երկրի պետական համակարգ, արձագանքում են հաղորդակցության միջոցների զարգացմանը, սահմանային հսկողության և տեղափոխությունների դյուրացմանը: Հատկապես դա վերաբերում է ահաբեկչությանը, սպորիինի միգրացիային, թմրանյութերի առևտրին, «կեղտոտ» փողերի լվացմանը:*

Հասկանալի է, որ ստեղծված իրավիճակում, հանցավորության գլոբալիզացիայի դեմ պայքարի հիմնախնդիրը չի կարող լուծվել ազգային-պետական սահմանափակ միջոցներով և մեթոդներով: Հատկապես այդ պատճառով, միջազգային հանրությունը ձգտում է համակցել հանցավորության դեմ պայքարին ուղղված ջանքերը:

Ինչպես հայտնի է, պետությունների համագործակցության սկզբունքը *Jus cogens* նորմ է, միջազգային իրավունքի այն սկզբունքներից, որն անրագրված է ՄԱԿ-ի կանոնադրության, Միջազգային իրավունքի սկզբունքների մասին 1970թ. Հռչակագրի և ԵԱՀԿ 1975թ. Եզրափակիչ ակտում:

Հանցավորության դեմ պայքարում պետությունների համագործակցությունը պայմանավորված է մի շարք գործոններով, մասնավորապես.

հսրորշակի հանցագործությունների հատուկ բնույթով, որը ոտնձգում է մի քանի կամ բազմաթիվ պետությունների շահերին կամ վտանգ է ներկայացնում միջազգային հանրության համար;

հանցավոր արարքների կանխարգելմա-

նը և վերացմանն ուղղված ջանքերի համակարգման անհրաժեշտությամբ;

քրեական գործերով իրավական օգնության ցուցաբերման անհրաժեշտությամբ<sup>1</sup>:

Այսպիսով, հանցավորության դեմ պայքարում պետությունների համագործակցությունը զարգանում է երկու հիմնական ուղղություններով. միջազգային պայմանագրերի կնքման եղանակով համագործակցություն և և միջազգային կազմակերպությունների շրջանակում համագործակցություն: Այստեղից էլ կարելի է առանձնացնել համագործակցության երկու հիմնական կոնվենցիոն և ինստիտուցիոն ձևերը: Կոնվենցիոն համագործակցությունն իրականացվում է բազմակողմ ունիվերսալ, ռեգիոնալ և երկկողմ լոկալ համաձայնագրերի կնքման միջոցով:

Ինստիտուցիոնալ համագործակցությունն իրականացվում է այս կամ այն համաձայնագրին համապատասխան ստեղծված տարաբնույթ կոմիտեների և հանձնաժողովների, միջազգային ունիվերսալ կազմակերպությունների, օրինակ ՄԱԿ-ի, ՄԱԿ-ի մասնագիտացած հաստատությունների, ինչպես

<sup>1</sup> Տե՛ս. Международное публичное право, отв. редактор Бекашев К.А., Москва 2005г. ст.597-560.

նան Ինտերպոլի կամ Եվրոպոլի շրջանակներում:

Միջազգային անվտանգության համընդգրկուն համակարգի ստեղծման գործընթացը որպես հիմնական բաղկացուցիչ մաս ենթադրում է հանցավորության դեմ պայքարում պետությունների համագործակցության հետագա զարգացում և կատարելագործում: Այն պարագայում, երբ միջազգային հարաբերությունների տարբեր ոլորտներում ինտեգրացիան դառնում է հիմնական ուղղություն, պետությունների միջազգային ընկերակցության ջանքերի միավորումը հանցավորության դեմ պայքարում, անկասկած, կարող է համարվել միջազգային փոխգործակցության առաջնահերթ ուղղություններից մեկը: Ժամանակակից միջազգային իրավունքում հարուստ փորձ է

ցույցում ցույց տալու համար: Այնպիսի պայմաններում, երբ հանցավորությունը վերածվում է ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքի, խոչընդոտելով պետության քաղաքական, տնտեսական, սոցիալական զարգացմանը, անհրաժեշտ են համարժեք պատասխաններ, և առաջին հերթին անդրազգային հանցավոր խմբերի գլոբալ մարտահրավերներին<sup>3</sup>: Պատահական չէ, որ իրավաբանական գրականության մեջ նշվում է, որ համաշխարհային պատերազմներից և հնարավոր գլոբալ աղետներից հետո, անդրազգային և ազգային հանցավորությունը դարձել է ներկա ժամանակաշրջանի հիմնական սպառնալիք<sup>4</sup>:

Պետությունները համագործակցության ընթացքում լուծվում են այնպիսի կարևոր խնդիրներ, ինչպիսիք են հանցագործությունների որակումը, որոնք վտանգ են ներկայացնում մի քանի պետությունների համար, դրանց կանխարգելմանը և վերացմանն ուղղված միջոցների համակարգում, հանցագործությունների և հանցագործների նկատմամբ ենթադատության սահմանում, քրեական գործերով իրավական օգնության ցուցաբերում և հանձնում<sup>5</sup>:

**«...Հանցավորության գլոբալիզացիայի դեմ պայքարի հիմնախնդիրը չի կարող լուծվել ազգային-պետական սահմանափակ միջոցներով և մեթոդներով...»**

կուտակվել հանցագործությունների կանխարգելման և դրա դեմ արդյունավետ պայքարի միջազգային մեխանիզմների ստեղծման բնագավառում, որն ունի արդյունավետ կիրառություն և ընդգրկում է ինչպես նորմատիվ-իրավական բազայի ստեղծումը, քրեական գործերով իրավական փոխօգնության տարատեսակ ձևերի իրականացումը, այնպես էլ երկկողմանի և բազմակողմ մակարդակներով, ունիվերսալ և ռեգիոնալ միջազգային կազմակերպությունների շրջանակում համապատասխան աջակցության ցուցաբերումը<sup>2</sup>:

Հանցավորությունը բնութագրող ժամանակակից միտումները ակնհայտորեն վկայում են, որ մեկ և նույնիսկ մի քանի պետությունների ջանքերը բավարար չեն հանցավոր դրսևորումների դեմ լուրջ հակազդե-

Միջազգային քրեական իրավունքի հիմքը, նրա համակարգի միջուկը հանդիսանում են ընդհանուր և հատուկ սկզբունքները: Տվյալ ճյուղի ընդհանուր սկզբունքներն են. ուժի և ուժի սպառնալիքի չկիրառման սկզբունքը, միջազգային վեճերի խաղաղ կարգավորման սկզբունքը, պետության ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը, մարդու իրավունքների և հիմնական ազատությունների հարգման սկզբունքը, համագործակցության սկզբունքը: Միջազգային քրեական իրավունքի հատուկ սկզբունքներն ամրագրված են Միջազգային ռազմական տրիբունալի 1945թ. Կանոնադրության, Սարդու իրավունքների համընդհանուր

<sup>2</sup> Տե՛ս. McLean D. International Judicial Assistance. Oxford, 1992; Harris L. Murray C Mutual Assistance in Criminal Matters: International Cooperation in the Investigation and Prosecution of Crime. L., 2000

<sup>3</sup> Տե՛ս. Fijnaut C. Transnational Crime and the role of the United Nations in its Containment through International Cooperation: A Challenge for the 21<sup>st</sup> Century // Eur. J. Crime, Criminal L. Criminal Justice. 2000. Vol. 8 No 2. P. 119-127.

<sup>4</sup> Տե՛ս. Лунеев В.В. тенденции современной преступности и борьбы с ней в России. // ГИП. 2004 N1. С. 5.

<sup>5</sup> Տե՛ս. Игнатенко Г.В. Международное сотрудничество в борьбе с преступностью. Свердловск, 1980. С. 5-11; Курс международного права: В 7 т. Т.6: Отрасли международного права/И.Н. Арцибасов, И.И. Лукашук, Б.М. Ашавский и др. М., 1992. С. 186.

1948թ. Հռչակագրի, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին 1966թ. Դաշնագրի, Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին 1950թ. Եվրոպական կոնվենցիայի և այլ փաստաթղթերի դրույթներում:

Հատուկ սկզբունքները, ըստ ամրագրման աղբյուրի, դասակարգվում են երկու խմբի: Առաջին խմբին դասվում են Միջազգային ռազմական տրիբունալի 1945թ. Կանոնադրությամբ սահմանված հետևյալ սկզբունքները. ագրեսիվ պատերազմների արգելում; միջազգային իրավունքի դեմ հանցագործությունների համար քրեական պատժի անխուսափելիություն; միջազգային հանցագործություն կատարած անձի պատժանական դիրքը չի ազատում նրան անհատական պատասխանատվությունից; եթե պետությունը չի սահմանում պատիժ այնպիսի գործողությունների համար, որոնք միջազգային իրավունքի համաձայն դասվում են մարդկության և խաղաղության դեմ ուղղված հանցագործությունների թվին, ապա դա չի հանդիսանում անձին միջազգային քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք; պատերազմական հանցագործների նկատմամբ վաղեմության ժամկետների չկիրառում:

Հատուկ սկզբունքների երկրորդ խումբը կազմում են մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանությանն ուղղված փաստաթղթերում ամրագրված նորմերը: Դրանք են. անմեղության կանխավարկածը; պատերազմի, ստրկության, խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ մարդկային արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի պրոպագանդայի արգելումը; պատժի անխուսափելիության; ցուցմունքներ տալուն և իր մեղքն ընդունելուն հարկադրելը; արդարադատության իրականացումը միայն դատարանի կողմից, դատական քննության հրապարակայնությունը, օրենքի և դատարանի առջև անձանց հավասարությունը; պաշտպանության, դատարանում անվճար թարգմանիչ ունենալու, դատավճիռը բողոքարկելու իրավունքը; ազատությունից զրկվածների մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվությունը հարգելու իրավունքը<sup>6</sup>:

Հանցավորության դեմ պայքարը օբյեկտիվորեն կարևորում է իրավական հարաբերություններում միջպետական կապերի

հաստատման անհրաժեշտությունը, քանի որ ակնհայտ է, որ դեռևս հետխորհրդային տարածքում շարունակվում են անուր մնալ տնտեսական կապերը ԱՊՀ մասնակից-պետությունների միջև, որտեղ զուգահեռ դեռևս շարունակվում է գոյատևել ստվերային տնտեսությունը, ինչը հատկապես հանգեցնում է կազմակերպված, անդրազգային հանցավորության աճին:

Քրեական գործերով իրավական օգնության ցուցաբերման բնագավառում ԱՊՀ մասնակից-պետությունների միջև միջազգային համագործակցության առանձնահատկությունն այն է, որ ոչ վաղ անցյալում դա իրականացվում էր մեկ պետության ներսում և ներքին օրենսդրության հիման վրա: Քանի որ ներկայումս խոսք է գնում նորանկախ պետությունների մասին, ապա նախկին իրավական կապերի պահպանումը հնարավոր է միայն միջպետական մակարդակով միջազգային իրավունքի հիման վրա:

ԱՊՀ մասնակից-պետությունների իրավապահ մարմինների միջև նախկինում գործող քննչական և օպերատիվ-հետախուզական կապերի վերականգնումը կենսականորեն անհրաժեշտ է նորանկախ պետություններում անդրազգային և այլ հանցավորության դեմ պայքարում:

Նախկին ԽՍՀՄ-ի տարածքում ինքնիշխան հանրապետությունների ստեղծումը, որոնք ձեռք բերեցին միջազգային իրավունքի լիիրավ տարբերակների կարգավիճակ, միջազգային-իրավական համագործակցության նոր պայմանագրային-իրավական բազայի ստեղծման պահանջ առաջադրեց:

Ներկայումս այդ խնդիրը իրականացվում է միջազգային քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին բազմակողմ և երկկողմ պայմանագրերի կնքման միջոցով: Այդ պայմանագրերի առանձնահատկությունն այն է, որ դրանք ամրագրում են Կողմերի իրավահավասարության սկզբունքը իրավական օգնության ցուցաբերման գործընթացում, ինչը խստագույնս համապատասխանում է միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին:

Միջազգային իրավունքի արդյունավետությունը մեծ չափով պայմանավորված է ներպետական օրենսդրության մեջ, նախ և առաջ յուրաքանչյուր պետության հիմնական օրենքում, դրա սկզբունքների և նորմե-

<sup>6</sup> Տե՛ս. Международное публичное право, отв. редактор Бекашев К.А., Москва 2005г. ст.597-560.

րի տրանսֆորմացիայի աստիճանից: Միջազգային իրավունքի նորմերի փաստացի կենսագործումը պետության տարածքում իրականացվում է ներպետական իրավունքի նորմերում դրանց տրանսֆորմացիայի միջոցով և սահմանվում է որպես միջազգային իրավունքի իմպլեմենտացիա<sup>7</sup>:

Ազգային նորմատիվ իրավական ակտերը միջազգային իրավունքի նորմերին համապատասխանեցնելու նպատակով պետություններն ընդունում են ազգային օրենսդրական ակտեր օրենքների ձևով (օրենքներ, միջազգային պայմանագրերի վավերացման մասին ակտեր), որոնք վերարտադրում են միջազգային իրավունքի նորմերը կամ հռչակում են դրանց գործողությունը պետության տարածքում:

Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական եղանակով ամրագրված է միջազգային և ազգային իրավունքի փոխադեցությունը: Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածի «...Հայաստանի Հանրապետության անուկից կնքված միջազգային պայմանագրերը Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե նրանցում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են պայմանագրի նորմերը»: Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը կարող են վավերացվել Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություն կատարելուց հետո<sup>8</sup>:

Համանման դրույթներ պարունակում են ԱՊՀ մասնակից-պետությունների, ԱՄՆ, Իսպանիայի և շատ այլ պետությունների օրենքները:

Ներկա ժամանակաշրջանում պետությունների գերակշիռ մեծամասնությունն ընդունում է միջազգային հարաբերություններում միջազգային իրավունքի պրիմատը: Միջազգային իրավունքի գերակայությունը ազգային օրենքի նկատմամբ դրույթները նշակել է գործողությունների պլան, որի հիմնական դրույթները համգում են հետևյալին. ա/ աջակցություն բազմակողմ միջազգային պայմանագրերին մասնակցությանը, բ/ անհրաժեշտ իմպլեմենտացիոն օրենսդրության մշակման հարցում պետություններին ա-

ջակցության ցուցաբերում, գ/ դատավորների և պրակտիկ իրավաբանների վերապատրաստում (օրինակ, միջազգային իրավունքի վերաբերյալ դասընթացների ուսուցանման միջոցով), դ/ միջազգային իրավունքի կիրառմանը մասնակցող այլ անձանց վերապատրաստում, ե/ միջազգային կրթություն և միջազգային իրավունքի պրոպագանդում<sup>9</sup>:

Հազարամյակի Հռչակագրում, որն ընդունվել է 2000 թվականի սեպտեմբերի 6-8-ը Նյու-Յորքում կայացած Հազարամյակի գագաթնաժողովում, ՄԱԿ-ի անդամ 191 պետություններ հայտարարել են «... օրենքի գերակայության սկզբունքի հարգման ամրապնդման անհրաժեշտության մասին, ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական մակարդակով»<sup>10</sup>:

Ինչպես նշում է իր ամենամյա զեկույցներում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը, օրենքի գերակայության հաստատման ուղղությամբ տարվող աշխատանքը համարվում է ՄԱԿ-ի գործունեության հիմնական ուղղությունը: Որպես հաստատում մատնանշվում է պետությունների կողմից ստանձնած պարտավորությունների անվերապահ կատարումը, բացառապես բարեխղճության, այսինքն ոչ թե ձևականորեն, այլ միջազգային պայմանագրի տառին և ոգուն համապատասխան: Օրենքի գերակայության կոնցեպցիան բնավ վերջին ժամանակաշրջանի ձեռքբերում չէ: Միջազգային իրավունք այն ներթափանցել է Մեծ Բրիտանիայի ներպետական իրավունքից: Օրենքի գերակայության կոնցեպցիայի հիմնադիրներից է Օքսֆորդի համալսարանի պրոֆեսոր Ալբերտ Վան Դայսին՝ իր «Սահմանադրական իրավունքի ուսումնասիրման ներածություն» 1885 թվականին գրված մենագրության մեջ: Փաստացիորեն օրենքի գերակայությունը ներառում է իր մեջ երեք տարր.

**առաջին.** Ոչ ոք չի կարող անձնապես կամ գույքային եղանակով պատասխանատվության ենթարկվել, բացառության օրինախախտում կատարելու արդյունքում, որը հաստատվել է տվյալ պետության դատական մարմինների կողմից;

**երկրորդ.** օրենքի գերակայության կոնցեպցիան սահմանում է բոլոր քաղաքացիների իրավաբանական հավասարություն օրնքի առաջ: Համապատասխանաբար, ոչ

<sup>7</sup> Տե՛ս. P.A. Каламкарян, Ю.И. Мигачев. Международное право, М. 2005г. Ст.12-13.

<sup>8</sup> ՀՀ Սահմանադրություն

<sup>9</sup> Московский журнал международного права. 2001. 2 . h. 16-19.

<sup>10</sup> К.А. Бекашев. Международное публичное право. М. 2005г. с. 4-5.

որ չի կարող գտնվել օրենքից վեր և բոլորը ենթարկվում են պետության օրենքներին համանման կերպով:

**Երրորդ.** օրենքի գերակայության կոնցեպցիան ենթադրում է մարդու իրավունքների սահմանում ոչ միայն հռչակագրային հայտարարման ձևով, այլ նաև ստեղծում է Սահմանադրությամբ թվարկված հիմնարար իրավունքների պաշտպանության երաշխիքների կոշտ համակարգ՝ երկրի դատական ինստիտուտների կանոնակարգված պրակտիկայի միջոցով:

ԱՄՆ-ում օրենքի գերակայությունը հայտնի է «կառավարություն օրենքի տակ» (Government under Law), Ֆրանսիայում այն կոչվում է «իրավունքի նորմի օրինականության և գերակայության սկզբունք» (Le Principe de Legalite et la Suprematie de la Regle de Droit), Գերմանիայի Դաշնային Զանրապետությունում այն անվանում են «իրավական պետություն»(der Rechtsstaat):

Տեղին կլինի խոսել նաև Rule of Law/ օրենքի գրակայությանը հակադիր մեկ այլ Rule of Force/ուժի պետություն հասկացության մասին: Դա արդարացնում է ուժի կիրառումը արտաքին քաղաքական որոշակի նպատակներին հասնելու ճանապարհին միջազգային իրավունքի լրիվ արհամարման պայմաններում: Նույնիսկ այնպիսի արտասահմանյան գիտնականներ, ինչպիսիք են իրենց աջ հայացքներով առանձնացող Մ.Սակդուգալը, Գ.Լասսվելը, Մ.Բերկան, Ջ.Սուրը. Ս.Յոնսոնը ընդունում են միջազգային իրավունքի ռեալությունը: Սրան հակառակ Rule of Law խիստ և միանշանակ կերպով արգելում է միջազգային իրավունքի օգտագործումը որպես զրահաբաճկոն այս կամ այն պետության կողմից արտաքին քաղաքական շահարկումների համար և բացառում է միջպետական փոխհարաբերություններում ճնշումների և բռնությունների ցանկացած ձևերի կիրառումը:

Այսօր միջազգային կյանքն այնպիսին է, որ առանձին պետությունների շահերը կարող են բախվել, որի արդյունքում առաջանում են կոլիզիաներ, իրավաբանական լեգ-

վով ասած՝ շահերի հակասություն: Միջազգային իրավունքի տեսանկյունից բոլոր հակամարտությունների կարգավորման լավագույն և ցանկալի եղանակը առանձին պետությունների հատուկ շահերի համաձայնեցումն է համամարդկային շահերի հետ: Այդ համաձայնեցման ձեռքբերման նախադրյալը օրենքի գերակայության ճանաչումն է բոլոր պետությունների կողմից:

Փոփոխվող աշխարհում օրենքի գերակայության կոնցեպցիան դիտարկվում է կայունության ապահովման հիմք: Միջազգային իրավակարգի կատարելագործման գործընթացը ենթադրում է մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված են իրավաստեղծ և իրավակիրառ փուլերում պետությունների վարքագծի բարեխղճության սկզբունքի իմպերատիվ գործոնի բարձրացմանը, ինչպես նաև ծագած միջազգային հիմնախնդիրները կարգավորելու նպատակով անմիջական և ուղղակի բանակցությունների վարման

*«...Հանցավորությունը բնութագրող ժամանակակից միտումները ակնհայտորեն վկայում են, որ մեկ և նույնիսկ մի քանի պետությունների ջանքերը բավարար չեն հանցավոր դրսևորումների դեմ լուրջ հակազդեցություն ցույց տալու համար...»*

պարտադիրության սկզբունքը՝ փոխադարձորեն ընդունելի համաձայնության հիման վրա:

Պետությունների վարքագծի բարեխղճության սկզբունքը որակական այս նոր դրսևորմամբ կոչված է ապահովել *Uberrimae Fidei* (վստահության բարձր աստիճան): Այս դիրքորոշումը ոչ միայն ամբողջությամբ բացառում է իրավունքի ցանկացած չարաշահումները ի վնաս այլ պետությունների, այլև ամրագրում է միջազգային հանրության մասնակիցների փոխադարձ շահերը հաշվի առնելու ուղղակի անհրաժեշտություն (պարտավորություն)՝ համակցելով դրանք համամարդկայինի հետ<sup>11</sup>: Քանի որ պետությունների վարքագծի բարեխղճության սկզբունքի իմպերատիվ գործոնի բարձրացման պարագայում միջազգային իրավունքի գերիշխանության և օրենքի գերա-

<sup>11</sup> Տե՛ս. K.A. Бекяшев. Международное публичное право. М. 2005г. с. 61-67.

կայության պայմաններում վստահությունը ձեռք է բերում միանգամայն նոր որակ, ապա միջազգային-իրավական համագործակցությունը հանցավորության դեմ պայքարում նույնպես հանդես է գալիս նոր ասպեկտով: Դա արդեն միայն *Sic utere tuo ut alienum non laedas* (օգտագործիր քո սեփականությունը առանց վնասելու ուրիշինը) սկզբունքի վրա հիմնված համագործակցությունն է, այլ ժամանակակից աշխարհակարգի նպատականշված ապահովում՝ երկրային քաղաքակրթության միասնականության, դրա ամբողջականության և փոխլրացման ընկալումներով:

Միջազգային հանրության զարգացման մասին են վկայում միջազգային կազմակերպությունների վերջին ժամանակներում մշտապես աճող թիվը, ինչպես նաև հանցավորության դեմ պայքարում պետությունների միջազգային-իրավական մեխանիզմի գործունեության կատարելագործումը: Կարելի է հաստատել պետությունների ինստիտուցիոն-իրավական գործունեության զգալի բարելավվումը:

Օրենքի գերակայության հայեցակարգը լրիվ կերպով դրսևորվում է նաև ներպետական մակարդակով: Ինչպես գրում է այդ մասին Չարվարդի իրավունքի դպրոցի պրոֆեսոր Ռ. Ֆալլոնն այդ թեմային նվիրված իր հատուկ աշխատության մեջ, օրենքի գերակայությունը/ Rule of Law/ երեք խնդիր ունի: Առաջինը՝ օրենքի գերակայությունը կոչված է պաշտպանել անարխիայից, այլ խոսքով, բոլորի պատերազմից բոլորի դեմ: Երկրորդը՝ օրենքի գերակայությունը կոչված է ստեղծել բավարար պայմաններ ապագայի պլանավորման համար՝ վստահությամբ, որ իրենք կարող են կանխատեսել տարատեսակ գործողությունների իրավաբանական հետևանքները: Երրորդը՝ օրենքի գերակայության հայեցակարգը կոչված է ապահովել երաշխիքներ պաշտոնատար անձանց կամայականությունների դրսևորումներից: Ըստ նշված հեղինակի օրենքի գերակայության հինգ տարրերի առկայության դեպքում միայն կարելի է խոսել դրա հիմնարար դրույթների իրականացման մասին: Առաջին տարրը կայանում է նրանում, որ իրավաբանական նորմերը, չափորոշիչները և սկզբունքները ի վիճակի պետք է լինեն ուղղորդել մարդկանց վարքագիծը, այլ խոսքով ասած ժողովուրդը պետք է ի վիճակի լինի ընկալել օրենքը և իր վարքագիծը համապատասխանեցնի իրավունքի գործող նորմերի պահանջներին: Օրենքի գերակայութ-

յան երկրորդ տարրը արդյունավետությունն է, օրենքը իսկապես պետք է կառավարի մարդկանց վարքագիծը, այսինքն մարդիկ պետք է ենթարկվեն օրենքին: Երրորդ տարրը կայունությունն է: Օրենքը խելամտության սահմաններում պետք է կայուն լինի, որպեսզի աջակցի վարքագծի պլանավորմանը և գործողությունների համակարգմանը: Օրենքի գերակայության չորրորդ տարրը օրինական իշխանության գերակայությունն է: Օրենքը պետք է կառավարի պետական պաշտոնատար անձանց, ներառյալ դատավորների վարքագիծը, շարքային քաղաքացիներին համահավասար: Յինգերորդ տարրը անաչառ արդարադատություն իրականացնող ինստիտուտների առկայությունն է: Յուրաքանչյուր երկրում դատավորները պետք է հնարավորություն ունենան օրենքը կենսագործել և արդարադատություն իրականացնել արդարացիության սկզբունքի հիման վրա: Օրենքի գերակայության հայեցակարգի բաղկացուցիչ հինգ տարրերի գործնականում իրականացումը պատշաճ երաշխիքներ է ընձեռնում համընդհանուր ճանաչում ստացած մարդու իրավունքների ապահովման համար:

Ունենալով ընդհանուր խնդիր, այն է միջազգային իրավունքի համաձայնեցված որոշումների կայացումը, միջազգային իրավունքի գերիշխանության և օրենքի գերակայության հայեցակարգերը փոխադարձորեն համաձայնության են հանգում և ունեն միջազգային իրավակարգի առաջադիմական վերափոխման վերջնական նպատակ: Այս երկու հայեցակարգերը բոլոր պետությունների կողմից պետք է միատեսակ ընդունվեն, ինչը բխում է մարդկության հիմնական շահերից: Օրենքի գերակայության հայեցակարգը մատնանշում է աշխարհի կառուցման հնարավոր եղանակները, որտեղ օրենքի մակարդակն այնքան բարձր կլինի, որ պետությունները չեն թույլ տա շահադիտական նկատառումներով հակաիրավական գործողություն իրականացնել: Միջազգային իրավունքի գերիշխանության և համամարդկային արժեքների առաջնահերթության ընդունումը դրական ազդեցություն կունենա պետությունների միջազգային հարաբերություններում օրենքի գերակայության հաստատման գործընթացի վրա: Օրենքի պահանջվածությունը որպես համաշխարհային իրավակարգի հիմնարար ռեգյուլատիվ տարր պայմանավորում է մարդկային քաղաքակրթության օբյեկտիվ ընթացքը:

# Պոզիտիվիստական իրավահասկացության էությունը

## Վարդան ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազության  
քննամիջոցների ապօրինի շրջանառության  
հանցագործությունների գործերով բաժնի պետ

*Լեզիստական իրավահասկացման և իրավագիտության լեզիստական հայեցակարգում ընկած է իրավունքի որպես հրամանի, որպես պետության պարտադիր սահմանումների, որպես պաշտոնական իշխանության կողմից հրահանգված պարտադիր կանոնների (տրամերի) ամբողջականության (համակարգի) հասկացությունը<sup>1</sup>:*

*Լեզիստական դիրքերից, որոնք ի սկզբանե իրավունքը հանգեցնում են օրենքին և փաստորեն նույնացնում են դրանք, ըստ էության, անհնար է որևէ բովանդակալից բան ասել օրենքի (պոզիտիվ իրավունքի) մասին, քանի որ այդ տեսանկյունից փաստորեն նշանակություն չունի (և, թերևս, անհնար է որոշել), թե կոնկրետ ինչպիսի՞ բովանդակության արտահայտման ձև է հանդիսանում օրենքը իրավական, թե կամայական-հակահրավական): Այստեղ օրենքի գոյությունը (նրա հանրային-իշխանային տրվածությունը) իրավունքի դերում նախորդում է այն իրավական էությանը (և այն իրավական բովանդակությանը), որի արտահայտությունը պետք է հանդիսանա այդ օրենքը որպես իրավունքի կրիչ:*

Լեզիզմի և «իրավաբանական պոզիտիվիզմի» համար չափազանց բնորոշ է մարդու և քաղաքացու իրավունքների արհամարհումը, իշխանության մեծարումը և նրա նորաստեղծ հնարավորությունների չափազանցեցումը: Այս իմաստով լեզիզմը իրենից ներկայացնում է ավտորիտար իրավահասկացման նորմատիվային արտահայտություն: Լեզիզմի պաթոսն ու ձգտումն է բոլորին ենթարկել իշխանա-իրամանային կանոններին ու սահմանումներին: Այստեղ ամենուր, սկսած Հին Չինաստանի իրավաբաններից և վերջացրած մեր օրերի լեզիստներով, իշխում է մարդու հանդեպ ոչ թե որպես ազատ էակի, այլ որպես իշխանությանը ենթակա օբյեկտի վերաբերմունքը:

Նոր ժամանակի լեզիզմի և իրավաբանա-

կան պոզիտիվիզմի ակունքների մոտ կանգնած է Հոբսը՝ ամենակարող պետության և իրավունքի՝ որպես իշխանության հրամանի իր հայեցակարգով: «Օրենքի իրավական ուժը,- գրում է նա,- կայանում է միմիայն նրանում, որ այն հանդիսանում է սուվերենի հրամանը»<sup>2</sup>: Օրենքի տակ այստեղ նա նկատի ունի ողջ գործող (այսպես կոչված՝ պոզիտիվ) իրավունքը: Իրավունքի նման ընկալում հետագայում յուրացրեցին նաև լեզիզմի տարբեր ուղղությունների ներկայացուցիչները:

Կոնկրետ-պատմական առումով «իրավական պոզիտիվիզմի» կայացումն ու զարգացումը կապված է բուրժուական կարգերի հաղթանակի և ամրապնդման, պետության դերի աճի և այդ պայմաններ-

<sup>1</sup> Մամրամասն տե՛ս. Հովհաննես Ստեփանյան. Իրավունքի տեսության հիմնահարցերը. ֆեմինոնոլոգիական մոտեցում: Երևան, 2006, էջ 36-48:

<sup>2</sup> Տե՛ս Դոբբս Թ. Լեւիաֆան. Մ., 1936, с. 214.

րում իրավունքի աղբյուրների համակարգում պետական ակտերի դերի և նշանակության բարձրացման հետ<sup>3</sup>:

Գաղափարական առումով, «իրավաբանական պոզիտիվիզմը» արտահայտեց հաղթող դասակարգի՝ բուրժուազիայի փոփոխված իրավաբանական աշխարհայացքը, որը արդեն հասավ իր իրավական հավանությունների ճանաչման օրենքով («պոզիտիվացման»), ինչպես նաև արտացոլեց առկա, պաշտոնական օրինակարգի պաշտպանության գաղափարախոսությունը քննադատորեն և ընդդիմորեն («ոչ պոզիտիվ») հնչող պահանջներից և իրավունքի, որպես «բնականի», «պարտի», «իդեալականի», «արդարի» մասին պատկերացումներից:

«Իրավաբանական պոզիտիվիզմի» հիմնական գաղափարներից և դրույթներից է իրավունքի՝ որպես իշխանության ստեղծվածքի մեկնումը, իրավունքի իշխանային հարկադրական բնույթի՝ որպես նրա փաստորեն միակ տարբերակիչ հատկանիշի ճանաչումը, իրավունքի ձևական-տրամաբանական և իրավաբանական-դոգմատիկ վերլուծման մեթոդները, իրավունքի պոկումը և «մաքագերծումը» հասարակական հարաբերություններից, իսկ իրավագիտության մեջ՝ իրավունքի բնույթի, պատճառների, արժեքների, էության մասին «մետաֆիզիկական» դրույթներից: Նման դրույթներ XIX դարում Անգլիայում զարգացնում էին Դ. Օստինը, Շ. Ամուրը և այլք, Գերմանիայում Բ. Վինդշայդը, Կ. Յերբերը, Կ. Բերգսոնը, Պ. Լաբանդը, Ա. Ցիտելմանը, Ֆրանսիայում Կաբանտուն և ուրիշները, Ռուսաստանում Ե. Վ. Վասկովսկին, Ա. Ղազարյանը, Լ. Դ. Գրիմմը, Ս. Վ. Պախմանը, Գ. Ֆ. Շերշենևիչը և այլք: XX դարում այս մոտեցումը ներկայացված է այնպիսի ուղղություններով, ինչպիսիք են Վ. Դ. Կատկովի

«ընդհանուր լեզվագիտությամբ բարեփոխված իրավագիտությունը», Զ. Կելզենի «իրավունքի մասին մաքուր ուսմունքը», Գ. Յարթի «իրավունքի հայեցակարգը» և այլն:

Այսպես, Դ. Օստինը բնութագրում է իրավունքը որպես «քաղաքական ղեկավարի կամ սուվերենի կողմից սահմանված կանոնների ագրեգատ» (համալիր), և ընդգծում է. «Ամեն իրավունքը հրաման է, հրահանգ»<sup>4</sup>: Շ. Ամուրը նույնպես պնդում է, որ «իրավունքը պետության գերագույն իշխանության հրամանն է՝ տվյալ հասարակության մեջ անձանց գործողությունները վերահսկելու նպատակով»<sup>5</sup>: Նման հայացքներ ունեն նաև Գ. Ֆ. Շերշենևիչը. «Իրավունքի ցանկացած նորմ՝ հրաման է»<sup>6</sup>: Իրավունքը, նրա գնահատմամբ, «պետության ծնունդ է», իսկ պետական իշխանությունը նա բնութագրում է որպես «այն նախնական փաստը, որից ելնում են, կառչելով մեկը մյուսից, իրավունքի նորմերը»<sup>7</sup>:

Իր հրամանով պետությունը ծնում է իրավունք՝ այդպիսին էր այդ ժամանակվա իրավահասկացման հավատո հանգանակը: Ըստ այդ տեսակետների, այն ամենը, ինչ հրամայում է պետությունը, իրավունք է: Դրանով իսկ իրավունքի տարբերությունը կամայականությունից զրկվում է իր օբյեկտիվ և բովանդակային իմաստից և նման մոտեցման կողմնակիցների համար կրում է միմիայն սուբյեկտիվ և ձևական բնույթ, նույնիսկ որոշակի սուբյեկտի (պետության մարմնի) ակներև, սակայն որոշակի ձևով (այս կամ այն ակտի՝ օրենքի, հրամանագրի, հրովարտակի, հրահանգի, շրջաբերակների և այլնի տեսքի) ներկայացված կամայականությունը ճանաչվում է իրավունք: Լեզիստական-պոզիտիվիստական մեկնությամբ պետական իշխանության հրամանները օժտվում են գրեթե մոզակական հատ-

<sup>3</sup> Իրավագիտության մեջ ընդունված է տարբերակել իրավունքի աղբյուրները ձևական իմաստով (իրավունքի ձևական աղբյուր) և նյութական առումով (իրավունքի նյութական աղբյուր): Առաջինի տակ նկատի է առնվում իրավունքի արտահայտման, ձևակերպման այս կամ այն ձևը (համապատասխան նորմատիվ-իրավական ակտ, նախադեպ, սովորույթային իրավունք և այլն), իսկ երկրորդի՝ այն, ինչը, համաձայն համապատասխան տեսակետի, առաջացնում, ձևավորում է իրավունքը (մարդու բնությունը, բանականությունը, հասարակությունը և այլն): Այս կապակցությամբ հարկ է նշել, որ իրավաբանական պոզիտիվիզմի (և ընդհանրապես լեզիզմի) համար օրենքը (պոզիտիվ իրավունքի բոլոր աղբյուրները), ըստ էության, հանդիսանում են իրավունքի աղբյուր նյութական իմաստով, քանի որ, համաձայն այս տեսակետի, օրենքը ոչ թե արտահայտում ու ձևակերպում է իրավունքը, այլ ծնում և ձևավորում է այն: Այստեղից էլ զալիս են մնան մոտեցման համար բնորոշ «իրավաբանական պատրանքները» օրենքի ամենակարողության և ըստ իր հայեցողության ցանկացած իրավունք ստեղծելու անսահմանափակ հնարավորության («ազատ կամք») վերաբերյալ:

<sup>4</sup> Տե՛ս. Austin J. Lectures on Jurisprudence or the Philosophy of Positive Law. L., 1873, էջ 89, 98.

<sup>5</sup> Տե՛ս. Amos Sh. A systematic View of the Science of Jurisprudence, էջ 117:

<sup>6</sup> Տե՛ս. Шершеневич Г. Ф. Общая теория права. М, 1910, Вып. 1, с. 281.

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 314.

կություններով: Ստացվում է, որ նման հրամանով լուծվում են ոչ միայն սուբյեկտիվ (օրենսդրության նորմերի ձևակերպում), այլև օբյեկտիվ բնույթի (բուն իրավունքի ձևավորում, ստեղծում) և նույնիսկ բուն գիտական պլանի (իրավունքի առանձնահատկությունների, սոցիալական այլ ձևերից նրա տարբերությունների բացահայտում և այլն) խնդիրներ:

Որպես հրաման և հարկադիր կանոն են մեկնում իրավունքը նաև նեոպոզիտիվիստները (Յ. Քելզեն, Յ. Յարթ և ուրիշներ):

Պոզիտիվիստական-պրագմատիկ իր ուղղվածության պատճառով լեգիստական իրավագիտությունը զբաղվում է ենպիրիկ հիմնական երկու փաստերի պարզաբանմամբ: Դրանք են. 1) պաշտոնական իշխանության այդ հրամանների (հարկադրական պարտադիր սահմանումների), այսինքն, գործող իրավունքի (պոզիտիվ իրավունքի, օրենքի) այսպես կոչված աղբյուրների բուն տեսակների (ձևերի) բացահայտումը, դասակարգումը ու սխտեմավորումը, և, 2) օրենսդրի կարծիքի (դիրքի) պարզաբանումը, այսինքն, իշխանության համապատասխան հրամանների, որպես իրավունքի աղբյուրների (ձևերի), նորմատիվ-կարգավորիչ բովանդակության բացահայտումը:

Լեգիզմ իր բոլոր տարբերակներով (հին լեգիզմից և իրավունքի էթաստիտական մեկնումից մինչև իրավաբանական պոզիտիվիզմի ժամանակակից վերլուծական ու նորմատիվիստական հայեցակարգերը) նույնացնում է իրավունքն ու օրենքը (պոզիտիվ իրավունքը), իրավունքը, որպես իրավական երևույթ, անջատում է նրա իրավական էությունից, մերժում է այն որպես օրենքասահմանիչ իշխանության կամքի (կամայականության) արդյունք: Այդ իսկ պատճառով իրավունքի այն յուրահատկությունը, որի տակ պոզիտիվիստները նկատի ունեն օրենքը, նման իրավահասկացման դեպքում հանգում է իրավունքի հարկադիր բնույթին, ընդ որում հարկադիր այդ բնույթը մեկնաբանվում է ոչ թե որպես իրավունքի ինչ-ինչ օբյեկտիվ պահանջների ու հատկանիշների արդյունք, այլ որպես իրավակազմիչ և իրավաորոշիչ էլակետային գործոն, որպես իրավունքի ուժային (և բռնի) աղբյուր: Իրավունքի ուժն այստեղ ծնուն է բռնի, հրամայական իրավունք:

Համաձայն լեգիզմի, իրավունքի մասին ճշմարտությունը տրված է օրենսդրի (սուվե-

րենի, պետության) կամքը, դիրքորոշումը, կարծիքը արտահայտող օրենքի մեջ:

Այդ իսկ պատճառով իրավունքի մասին որոնելի գիտելիքն այստեղ կրում է թեև պաշտոնական-իշխանային, բայց, այնուամենայնիվ, կարծիքի բնույթ: Համաձայն նման իրավաճանաչման տրամաբանության, միայն իրավունքը ստեղծող իշխանությունը գիտի, թե ինչ բան է իրավունքը և ինչով է այն տարբերվում ոչ իրավունքից: Գիտությունն էլ, լավագույն դեպքում կարող է համարժեք կերպով հասնել և արտահայտել պոզիտիվ իրավունքին մեջ մարմնավորված իշխանահրամայական կամքը:

Լեգիզմի տեսա-ճանաչողական հետաքրքրությունը ամբողջապես կենտրոնացած է գործող (պոզիտիվ) իրավունքի վրա: Այն ամենը, ինչը դուրս է գալիս ենպիրիկորեն տրված պոզիտիվ իրավունքի սահմաններից՝ իրավունքի էության, իրավունքի գաղափարի, իրավունքի արժեքի և այլ նման բաների մասին դատողությունները պոզիտիվիստները մերժում են, համարելով զուտ մետաֆիզիկական, սքոլաստիկ, պատրանքային, իրավական իմաստ ու նշանակություն չունեցող ինչ-որ բաներ:

**«...Իրավունքը պետության գերագույն իշխանության հրամանն է տվյալ հասարակության մեջ անձանց գործողությունները վերահսկելու նպատակով...»**

Առավել սուր քննադատության են ենթարկում պոզիտիվիստները բնական-իրավական ուսմունքները, ընդ որում բնական-իրավականների թվին են նրանք դասում իրավունքն ու օրենքը տարբերակող բոլոր հայեցակարգերը, օրենքի դրույթներից տարբերվող իրավունքի մասին տեսական բոլոր դատողությունները: Այդպիսով, պոզիտիվիստական իմացաբանությունը, ըստ էության, մերժում է իրավունքի տեսությունը և ճանաչում է միայն օրենքի մասին ուսմունքը՝ օրենագիտությունը, որի առարկան է հանդիսանում պոզիտիվ իրավունքը, իսկ նպատակն ու ուղեցիչը՝ իրավունքի դրոշմը, այսինքն, գործող (պոզիտիվ) իրավունքի, նրա ուսումնասիրման, մեկնման, դասակարգման, սխտեմավորման եղանակների, կանոնների, հնարքների մասին հիմնական անխախտ դրույթների (կայունացված հեղինակավոր կարծիքների, դիրքորոշումների, մոտեցումների) ամբողջականությունը:

# ՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՄՊԱՌՆԱԼԻՔԻ ԵՎ ՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ

## Վարազդատ ՏԵՐ-ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազության իրավական  
սպասիոլման և եվրախնտեզրման բաժնի  
դատախազ, իրավաբանական  
գիտությունների թեկնածու

*Իրավակիրառ պրակտիկայում կարևոր գործնական խնդիր է հանցագործության որակումը, այսինքն այն գնահատականը, որը տրվում է համապատասխան պետական մարմինների կողմից կատարված արարքին: Հանցագործության որակումը նախևառաջ կատարված արարքի (գործողության կամ անգործության ու հանրորեն վտանգավոր հետևանքների) և քրեական օրենսգրքի ընդհանուր ու հատուկ մասերում տեղ գտած կոնկրետ հանցակազմի բոլոր հատկանիշների միջև համապատասխանության բացահայտումն է: Սակայն պրակտիկայում հաճախ բարդություններ են առաջանում, երբ արարքի բոլոր հատկանիշները վեր հանելուց հետո պարզվում է, որ դրանք համապատասխանում են քրեական օրենսգրքի մեկից ավելի հանցակազմի հատկանիշներին: Դատական պրակտիկայում այդպիսի խնդիրներ են առաջանում սպանության փորձի և սպանության սպառնալիքի տարանջատման ժամանակ:*

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 34-րդ և 104-րդ հոդվածների՝ սպանության փորձ է հանդիսանում ուղղակի դիտավորությամբ կատարված այն գործողությունը, որն անմիջականորեն ուղղված է ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելուն, եթե հանցագործությունն ավարտին չի հասցվել անձի կամքից անկախ հանգամանքներով: ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածը սահմանում է պատասխանատվություն սպանության սպառնալիքի համար. «սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքը, եթե այդ սպառնալիքն իրականացնելու իրական վտանգ է եղել»: Հանցակազմների ձևակերպումներից արդեն իսկ պարզ է դառնում, որ որոշակի դեպքերում այդ հանցագործությունները դժվար կլինի տարանջատել: Նման հանցակազմների տարանջատումը պահանջում է դրանց բոլոր հատկանիշների վեր հանում, որոնք պրակտիկայում թույլ կտան հստակ տարանջատել այդ հանցակազմերը: Քննարկենք այդ հանցակազմների օբյեկտների, օբյեկտիվ և սուբյեկ-

տիվ կողմերի առանձնահատկությունները: Սպանության սպառնալիքի անմիջական օբյեկտ է հանդիսանում մարդու առողջությունը, ավելի կոնկրետ՝ մարդու հոգեկան առողջությունը: Սպանության սպառնալիքը մարդու մոտ առաջացնում է ստրեսի զգացում, նա սկսում է անհանգստանալ իր անվտանգության համար: Սպառնացողը հենց նպատակ է հետապնդում տուժողի մոտ առաջացնել այդպիսի հոգեբանական իրավիճակ և այդպիսով վնաս պատճառել նրա հոգեկան առողջությանը: Նմանատիպ դիտարկումից պարզ է դառնում, որ և՛ առողջությանը ծանր վնաս հասցնելու, և՛ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքի դեպքում նույնպես հանցագործության օբյեկտ է հանդիսանում մարդու հոգեկան առողջությունը: Մեր կարծիքով այստեղ նշանակություն չունի, թե սպառնալիքի առարկան ինչն է հանդիսանում՝ կյանքը, առողջությունը, թե գույքը: Այստեղ նշանակություն ունի սպառնալիքը, որը մարդու առողջությանը վնաս է պատճառում: Այստեղ կյանքը, առողջությունը և խոշոր չափի գույքը նշանակություն ունեն այնքանով,

որքանով դրանք լինելով ցանկացած անձի համար գերակա և առաջնային արժեքներ, հանդիսանում են միջոց մարդու վրա ներգործելու համար:

Սակայն այս հարցում օրենսդիրն այլ կերպ է մտածել: Վերը նշված քրեաիրավական նորմը, որը ձևակերպվել է քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածում, զետեղված է «Անձի ազատության, պատվի և արժանապատվության դեմ ուղղված հանցագործություններ» գլխում: Դժվարանում ենք հիմնավորել, թե օրենսդիրն ինչպես է պատկերացնում անձի ազատությունը որպես այս հանցագործության օբյեկտ: Ամենայն հավանականությամբ օրենսդրի համար ապակողմնորոշիչ դեր է խաղացել այն փաստը, որ հանցակազմում առկա է նաև գույքային վնաս պատճառելու սպառնալիքը: Սակայն, ինչպես նշեցինք, այս պարագայում կարևորը սպառնալիքն է, այլ ոչ թե այն փաստը, թե ինչի սպառնալիք է եղել:

Հետաքրքրական է, որ ՌԴ քրեական օրենսգրքում այս հանցակազմը դրսևորվում է որպես կյանքին կամ առողջությանը ծանր վնաս հասցնելու սպառնալիք և բնականաբար զետեղված է անձի կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունների գլխում: Այսինքն, գույքը ոչնչացնելու սպառնալիքը ՌԴ քրեական օրենսգրքով չի քրեականացվել: Այս հանցակազմը տեղ էր գտել նաև 1961 թ-ի քրեական օրենսգրքում: Սակայն այն զետեղված էր հասարակական կարգի և անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գլխում:

Այսպիսով՝ սպառնության փորձի օբյեկտ է հանդիսանում մարդու կյանքը, այնինչ սպառնության սպառնալիքի օբյեկտ է հանդիսանում անձի հոգեկան առողջությունը: Այստեղից ակնհայտ է, որ սպառնության սպառնալիքը չպետք է վտանգի տակ դնի անձի կյանքը, հակառակ դեպքում այդ արարաքը պետք է որակվի որպես անձի կյանքի դեմ ուղղված հանցագործություն:

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի՝ հանցագործություն է համարվում մեղավորությամբ կատարված այն արարքը, որը նախատեսված է քրեական օրենսգրքով: Համաձայն այս նորմի քրեական իրավունքի համար նշանակություն ունի միայն մարդու արարքը: Այսինքն մարդու մտքերը, հոգեբանական գործընթացները,

համոզմունքները, գաղափարները, ինչպես նաև հանցագործություն կատարելու մտադրությունը, թեկուզ և դրանք արտահայտվել են այս կամ այն ձևով և հայտնի են դարձել ուրիշներին, չեն կարող նրան քրեական պատասխանատվության ենթարկելու հիմք հանդիսանալ, եթե դրանք չեն նյութականացվել արարքի ձևով: Բանավոր կամ գրավոր արտահայտած խոսքն արդեն իսկ արարք է, եթե այն որոշակի ձև է ստանում, ասենք սպառնալիքի, և ուղղված է վնաս պատճառելու օրենքով պաշտպանվող հասարակական հարաբերություններին: Հետևաբար, պատահական չէ, որ օրենսդիրը քրեականացրել է սպառնության սպառնալիքը:

Սպառնության սպառնալիքի հետ մեկտեղ օրենսդիրը նույն հոդվածի շրջանակներում քրեականացրել է նաև առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքը: Ըստ էության, այս հոդվածն իր մեջ ներառում է 3 քրեաիրավական նորմեր: Դրանք են՝ սպառնության սպառնալիքը, առողջությանը ծանր վնաս հասցնելու սպառնալիքը և խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքը: Այսինքն այս հանցակազմն իր բնույթով այլընտրանքային է:

Օբյեկտիվ կողմից այս արարքն դրսևորվում է միայն գործողությամբ: Սպառնալիքը հանդիսանում է հոգեբանական բռնության տարատեսակ: Հանցավորը կարող է սպառնալիքը տեղ հասցնել ինչպես անմիջապես, այնպես էլ ուրիշ միջոցով՝ համոզ-

**«...Սպառնության սպառնալիքի անմիջական օբյեկտ է հանդիսանում մարդու առողջությունը, ավելի կոնկրետ՝ մարդու հոգեկան առողջությունը...»**

ված լինելով, որ սպառնալիքը տեղ կհասցվի: Սպառնալիքը կարող է տրվել գրավոր, բանավոր, ժեստերի միջոցով և այլն: Սակայն, ցանկացած պարագայում, եթե նույնիսկ դրանք արտահայտվել են ժեստերի միջոցով, դրանք չեն կարող կրել հարձակման բնույթ: Եթե հանցավորը ձեռնամուխ է եղել որևէ մի գործողության կատարմանը, որը հանդիսանում է սպառնության փորձի օբյեկտիվ կողմի տարր, ապա արարքը չի կարող որակվել որպես սպառնալիք: Տվյալ պարագայում սպառնալիքը վերածվում է հարձակման, որն արդեն իսկ հանդիսանում

է սպանության փորձի հանցակազմի տարր: Հարց է առաջանում՝ ինչպես տարանջատել սպանության սպառնալիքը սպանության փորձից, եթե հանցավորը սպառնացել է զենքի ցուցադրմամբ: Սպանության սպառնալիքի ժամանակ պետք է բացակայի հանցագործության գործիքը: Եթե նույնիսկ այն ցու-

են կյանքից զրկելու սպառնալիքներ և հանցավորը ձեռնամուխ է եղել գործողությունների անձին կյանքից զրկելու համար, ապա այս արարքում առկա են և՛ սպանության սպառնալիքի հանցակազմի հատկանիշներ, և՛ սպանության փորձի հանցակազմի հատկանիշներ: Սակայն սրանք հարաբերվում են որպես ամբողջը և մասը: Տվյալ պարագայում մասը կլանվում է ամբողջի կողմից և պետք է որակվի արարքն ամբողջությամբ նկարագրող հանցակազմի միջոցով, այն է՝ որպես սպանության փորձ:

**«...Արարքը կարելի է որակել որպես սպանության սպառնալիք, եթե հանցավորը հենց ցանկացել է անձի հոգեկան առողջությանը վնաս պատճառել...»**

ցադրվել է, ապա հանցավորը պետք է դիտավորություն ունենա միայն դա ցուցադրելու, այլ ոչ թե այն կիրառելու: Եթե հանցագործության գործիքը հարմարեցվում է անձին վնաս հասցնելու համար, արարքը պետք է որակվի որպես կյանքի դեմ ուղղված հանցագործություն: Հանցագործության գործիքի ցուցադրությունը, եթե առկա են սպանության հանցակազմի սուբյեկտիվ հատկանիշները, պետք է որակվի որպես սպանության նախապատրաստություն, իսկ ցանկացած այլ քայլ ուղղված իր մտադրության իրականացմանը պետք է որակվի որպես սպանության փորձ:

ՀՀ քրեական օրենսգրքում հետևյալ կերպ. «սպանության... սպառնալիքը, եթե այդ սպառնալիքն իրականացնելու իրական վտանգ է եղել»: Սպառնալիքի իրական լինելը օբյեկտիվ կատեգորիա է և պետք է դիտարկվի օբյեկտիվ հանգամանքների համակցության մեջ: Մասնավորապես, այս պարագայում էական նշանակություն ունի հանցավորի հնարավորությունն անձին կյանքից զրկելու համար, նրա ֆիզիկական և հոգեբանական առանձնահատկությունները, դրդապատճառները, կոնֆլիկտային իրադրության առկայությունը և այլն: Այս ամենը բնութագրում են սպանության սպառնալիքի հանցակազմը:

Օրենսդիրը նկատի ունենալով այն հանգամանքը, որ հարկավոր է պաշտպանել անձի կյանքն ու առողջությունը սպառնալիքներից, հենց դիտավորության արտահայտման փուլում այդ արարքը քրեականացրել է: Սակայն միանշանակ է, որ այն պահից, երբ հանցավորը ձեռնամուխ է լինում սպանության օբյեկտիվ կողմի իրականացմանը, այն է՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելուն, ապա արարքի հանրային վտանգավորությունն անհամեմատ ավելի բարձրանում է, և այն չի կարող որակվել որպես սպանության սպառնալիք: Եթե հանցավորն արտահայտում է իր դիտավորությունն անձին սպանելու և այդ սպառնալիքն իրական բնույթ է կրել, դա պետք է որակել որպես սպանության սպառնալիք, դրան հետևող ցանկացած գործողություն, որով հանցավորն արդեն իսկ ձեռնամուխ է լինում իր մտադրության իրականացմանը, պետք է որակվի որպես անձի կյանքի դեմ ուղղված հանցագործություն: Այդ պարագայում արդեն սպանության սպառնալիքն առանձին չի որակվում, այլ կլանվում է սպանության փորձի հանցակազմի կողմից: Այսինքն, եթե առկա

Սակայն հանցավորը կարող է իր մտադրության մեջ էլ ավելի առաջ անցնել: Նրա հետագա գործողություններն իրական սպառնալիքի դեպքում կարող են սպառնալիքը իրականից դարձնել առկա: Այս պարագայում սպանության սպառնալիքը բացի սպանության սպառնալիքի հանցակազմից ընդգրկում է այլ հատկանիշներ, որոնք համապատասխանում են քրեական օրենսգրքով նախատեսված այլ հանցակազմի: Սպառնալիքի առկա լինելու պարագայում արաքը պետք է դիտվի որպես սպանության հանցակազմ /փորձ կամ նախապատրաստություն/: Ի տարբերություն սպառնալիքի իրական լինելուց, առկա լինելն իրենից ներկայացնում է և՛ սուբյեկտիվ, և՛ օբյեկտիվ կատեգորիա: Օբյեկտիվ տեսանկյունից այն իր մեջ ներառում է ոչ միայն սպառնալիքի իրական լինելու օբյեկտիվ հատկանիշները, այլ նաև հանցավորի կոնկրետ գործողությունները, որոնք ուղղված կլինեն հանցավոր մտադրության իրականացմանը: Այդպիսի օբյեկտիվ պատճառները տուժողի մոտ առաջացնում են ոտնձգության առկայության զգացում: Առկա լինե-

լու հանգամանքը ենթադրում է, որ հանցավորի քայլերը տուժողի մոտ առաջ են բերում իր դեմ ունեցած գազացում, իսկ օրենքի տեսանկյունից նրան արդեն իսկ իրավունք է վերապահվում կիրառել անհրաժեշտ պաշտպանության միջոցներ: Սպանության սպառնալիքը պետք է լինի միայն մտադրության արտահայտման ձևով: Ցանկացած այլ գործողություն ողողված այդ մտադրության իրականացմանը սպառնալիքը դարձնում են առկա և պետք է դիտարկվի որպես կյանքի դեմ ուղղված հանցագործություն:

Սպանության փորձի ժամանակ սպանությունն ավարտին չի հասցվում հանցավորի կամքից անկախ հանգամանքներով: Այսինքն, եթե անձը սպառնացել է կյանքին և հնարավորություն է ունեցել ավարտին հասցնել սպանությունը, սակայն իր կամքով չի սկսել կյանքից զրկելուն ուղղված գործողությունները, ապա արարքը չի կարող որակվել որպես սպանության փորձ, այլ որակվում է որպես սպանության սպառնալիք: Առավել կարևոր է այն հանգամանքը, թե ինչի հետևանքով հանցագործությունն ավարտին չի հասցվել: Այսինքն հանցավորը հնարավորություն ունեցել է շարունակելու իր հանցավոր մտադրությունը և կյանքից զրկել տուժողին, թե դա տեղի չի ունեցել նրա կամքից անկախ հանգամանքներով:

Կարևոր հանգամանք է նաև անմիջականության փաստի գնահատումը, որը հանդիսանում է հանցափորձի բաղկացուցիչ տարրը: Անմիջականությունը կարելի է հասկանալ, որ հանցավորի այդ արարքի անմիջական հետևանք կարող էր հանդիսանալ պաշտպանվող հասարակական հարաբերության վնասումը, մեր պարագայում կյանքից զրկումը:

Հանցափորձի ժամանակ կարևոր է ուղղվածության փաստի գնահատումը: Այսինքն հանցավորի քայլերից պետք է պարզ դառնա, որ նա դեռ այդ քայլով չի հասել իր նպատակին, այլ նրա քայլերը զուտ ուղղված են այլ նպատակին հասնելու համար: Այսինքն հանցավորի միտվածությունը սպառնալիքից հետո կամ հենց դրա ժամանակ, որոնք կրում են կյանքից զրկելու ուղղվածություն, չեն կարող գնահատվել որպես զուտ սպանության սպառնալիք: Սպանության սպառնալիքի պարագայում ակնհայտ պետք է լինի հանցավորի արարքի ավարտված լինելը, այսինքն նրա տված սպառնալիքները պետք է ունենան ուղղվածություն տուժողի առողջությանը պատճառել վնաս, այլ ոչ թե ուղղված լինեն նրան կյանքից զրկելուն: Ընդհանուր

առմամբ սպառնալիքը պետք է տարանջատել ֆիզիկական բռնության իրական կիրառումից:

Սուբյեկտիվ կողմից սպանության սպառնալիքը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ: Հանցագործը գիտակցում է իր գործողության հանրության համար վտանգավոր բնույթը, նախատեսում է հանրության համար դրա վտանգավոր հետևանքները և ցանկանում է դրանց վրա հասնելը: Այսինքն հանցավորը գիտակցում է, որ այդպիսով տուժողի առողջությանը պատճառում է վնաս, նախատեսում և ցանկանում է այդ հետևանքները: Կարևոր պրակտիկ նշանակություն ունի այն հանգամանքը, թե հանցավորն իրոք մտադրություն ունեցել է կյանքից զրկելու տուժողին: Գրականության մեջ այդ հարցի վերաբերյալ կա երկու մոտեցում: Առաջին մոտեցման համաձայն այս հանցակազմի սուբյեկտիվ կողմի համար նշանակություն չունի, թե հանցավորն իրոք մտադրություն ուներ զրկել անձին կյանքից, ում սպառնում էր: Այս հանցագործության սուբյեկտիվ կողմը նման պարտադիր պայման չի նախատեսում: Երկրորդ մոտեցման համաձայն հանցավորը պետք է չունենա դիտա-

**«...Սուբյեկտիվ կողմից սպանության սպառնալիքը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ...»**

վորություն հետագայում կյանքից զրկելու տուժողին: Մեր կարծիքով արարքը կարելի է որակել որպես սպանության սպառնալիք, եթե հանցավորը հենց ցանկացել է անձի հոգեկան առողջությանը վնաս պատճառել: Եթե անձն իր սպառնալիքը դիտել է որպես հետագայում իրականացվելիք մտադրության արտահայտում, ապա տվյալ պարագայում սա դիտվում է որպես սպանության հանցակազմ և որակվում է՝ ելնելով սպանության հանցակազմի առանձնահատկություններից: Այս պարագայում սպանության սպառնալիքը մտնում է սպանության ընդհանուր դիտավորության մեջ: Այսինքն, եթե անձը մինչև սպառնալիք տալը մտադրություն է ունեցել կյանքից զրկել տուժողին, ապա այս արարքը որպես սպանության սպառնալիք չի կարող որակվել: Եթե անձը սպառնացել է, դրանից հետո նոր նրա մոտ սպանության դիտավորություն է առաջացել, ապա արարքն հարկավոր է որակել համակցությամբ:

# ԳՈՐԾԱԴՈՒԼ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄ ԸՆԴՈՒՆՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

## Քրիստինե ՂԱԶԱՐՅԱՆ

Վանաձորի պետական մանկավարժական  
ինստիտուտի դասախոս

*Տարբեր երկրների ներպետական իրավական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ գործադուլ կազմակերպելու և այդ մասին որոշման ընդունման իրավասությունը պատկանում է աշխատանքային իրավունքի տարբեր սուբյեկտների: Մի շարք արևմտաեվրոպական պետություններում գործադուլ հայտարարելու իրավասությամբ օժտված են բացառապես արհեստակցական կազմակերպությունները, որտեղ գործատուի հետ հարաբերություններում հենց նրանց է վերապահված ներկայացնելու և պաշտպանելու աշխատողների շահերը, այդ պատճառով էլ գործադուլ հայտարարելու մասին որոշման ընդունումը այլ մարմնի կողմից կարող է ընկալվել իբրև հակաիրավական վարքագիծ: Գերմանիայում, Լիտվայում, Ֆինլանդիայում, Եգիպտոսում գործադուլը դիտվում է իբրև արտադրական ակցիա<sup>1</sup>: Կան պետություններ էլ, որտեղ ընդհանուր առմամբ օրենսդրությամբ նշվում է աշխատողների ներկայացուցչական մարմինների գործադուլ հայտարարելու իրավասությունը և կախված որոշակի պայմաններից՝ նախապատվությունը տրվում է աշխատողների այս կամ այն ներկայացուցչական մարմնին: Վերջիններիս շարքին են դասվում Ռուսաստանի Դաշնությունը, Բելոռուսի Հանրապետությունը և այլ երկրներ: Որոշ երկրներում էլ գործադուլ կազմակերպելու և այդ մասին որոշման ընդունման իրավասությամբ օժտված են թե՛ աշխատողները, թե՛ նրանց ներկայացուցչական մարմինները (օրինակ՝ Ադրբեջանի Հանրապետությունում, Էստոնիայի Հանրապետությունում, Դրոզդաստանի Հանրապետությունում, Մոնտենեգրոյում<sup>2</sup> և այլն):*

Հայաստանի Հանրապետությունում (այսուհետ՝ ՀՀ) գործադուլ կազմակերպելու և այդ մասին որոշում ընդունելու բացառիկ իրավունքը պատկանում է արհեստակցական միությանը: Արհմիությանն նման իրավասության սահմանմամբ ՀՀ-ն հետևել է զարգացած երկրների փորձին, սակայն անտեսելով այն

կարևորագույն փաստը, որ նման երկրներում արհմիություններն աշխատողներին ներկայացնում են ոչ միայն կոլեկտիվ, այլև գործատուի հետ անհատական աշխատանքային հարաբերություններում, ունեն իրենց կարծիքն արտահայտելու և պնդելու, աշխատողի շահերը պաշտպանելու իրավունք, բացի այդ՝

<sup>1</sup> Ավստրալիայի, Կանադայի, Հարավային Կորեայի, Մեծ Բրիտանիայի, Շվեդիայի և մի շարք այլ երկրների աշխատանքային օրենսդրության մեջ «կոլեկտիվ և անհատական աշխատանքային վեճեր» արտահայտության փոխարեն օգտագործվում է ատաղրական ակցիա արտահայտությունը, երբ օրենքով կարգավորվում են աշխատողների՝ աշխատանքի դադարեցման հետ անմիջականորեն չկապված, սակայն աշխատանքի դադարեցմանն ու արտադրության ծավալների սահմանափակմանն ուղղված գործողությունները:

<sup>2</sup> Տե՛ս. <http://pravo.kulichki.com> (Трудовой кодекс РБ (НРПА РБ 27 июля 1999г. N 2/70)), ст.389.

գործադուլի կազմակերպումն ու հայտարարումը այլ մարմնի կողմից այդ երկրներում հիմք է գործադուլի օրինականությունը վիճարկելու համար, ինչը չի կարելի ասել ՀՀ-ի մասին: Աշխատանքի միջազգային կազմակերպությունը թեև գործադուլի իրավունքի կրող է ճանաչում աշխատողներին և արհեստակցական միություններին, սակայն նշում է, որ «ներպետական մակարդակում այդ իրավունքը կարող է հանդես գալ պայմանագրի առարկայի դերում՝ անկախ արհեստակցական միությանն անդամակցող աշխատողների քանակից, բացի այդ գործադուլի իրավունքն իրականացնելու համար արհեստակցական միությունները պետք է ունենան որոշակի քվորում»: ՀՀ Աշխատանքային Օրենսգրքի (այսուհետ Օրենսգրք) 73-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, արհեստակցական միությունը Օրենսգրքով և իր կանոնադրությամբ նախատեսված դեպքերում ունի գործադուլ կազմակերպելու իրավունք: ՀՀ «Արհեստակցական միությունների մասին» օրենքի 20-րդ հոդվածով սահմանվում է արհեստակցական միության՝ օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված կարգով գործադուլներ և զանգվածային այլ միջոցառումներ անցկացնելու իրավունքը (այսուհետ Օրենք)<sup>3</sup>: Արհեստակցական կազմակերպության կողմից գործադուլ հայտարարելու համար որոշման ընդունման մասին անհրաժեշտ քվորումի վերաբերյալ դրույթ Օրենքում ամրագրված չէ: ՀՀ Օրենսգրքի 74-րդ հոդվածի համաձայն «գործադուլ հայտարարելու մասին որոշում ընդունելու իրավունք ունի արհեստակցական միությունը՝ Օրենսգրքի և իր կանոնադրությամբ սահմանված կարգով: Գործադուլը հայտարարվում է այն դեպքում, եթե այդ մասին որոշումը զաղտնի քվերակությամբ հավանության է արժանացել կազմակերպությունում՝ կազմակերպության աշխատողների ընդհանուր թվի երկու երրորդի կողմից»: Եթե աշխատողների երկու երրորդի հավանությունը այս պարագայում կարելի է

համարել անհրաժեշտ քվորում, ապա գործադուլ կազմակերպելու դեպքում քանի աշխատողի նախաձեռնության դեպքում արհեստակցական միությունը կհամաձայնի ներկայացնել նրանց շահերը: Օրենքի 16-րդ հոդվածի համաձայն «գործատուի հետ կոլեկտիվ աշխատանքային հարաբերություններում արհեստակցական կազմակերպությունը կարող է հանդես գալ որպես աշխատողների ներկայացուցիչ, եթե արհեստակցական կազմակերպությանը մասնակցում է (անդամակցում է) գործատուի հետ աշխատանքային պայմանագիր կնքած աշխատողների կեսից ավելին: Այդպիսի ներկայացուցչական լիազորություններով օժտված արհեստակցական կազմակերպության կողմից գործատուի հետ կնքված կոլեկտիվ պայմանագրի դրույթները տարածվում են նաև գործատուների հետ աշխատանքային պայմանագիր կնքած բոլոր այն աշխատողների վրա, որոնք արհեստակցական կազմակերպության մասնակիցներ չեն»:

**Ըստ Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2 կետի «կազմակերպությունում կոլեկտիվ պայմանագիր տարածվում է այդ կազմակերպության բոլոր աշխատողների վրա»:**  
**Վերոնշյալը վերլուծելով կարելի է գալ եզրակացության, որ գործատուի հետ աշխատանքային պայմանագիր կնքած, սակայն արհեստակցական միությանը չանդամակցող աշխատողների վրա տարածվում են կոլեկտիվ աշխատանքային պայմանագրի դրույթները, սակայն կոլեկտիվ պայմանագրային վեճի դեպքում արհեստակցական միությունը նրանց շահերի պաշտպանությամբ հանդես գալ չի կարող, առավել ևս գործադուլ հայտարարելու մասին որոշում չի ընդունի, եթե նրան չեն**

<sup>3</sup> Տե՛ս. ТК Кыргызской Республики (В редакции законов КР от 8. 10. 2004 N 181, 30.06.2005г. N 85), ст. 436.

**անդամակցում գործատուի հետ  
աշխատանքային պայմանագիր  
կնքած աշխատողների երկու  
երրորդը, ինչը ինքնաբերաբար  
հանգեցնում է այդ  
աշխատողների գործադուլի  
իրավունքի սահմանափակման:**

Օրենքի 5-րդ պարբերությամբ սահմանված է. «եթե կազմակերպության արհեստակցական կազմակերպությանը մասնակցում է (անդամակցում է) գործատուի հետ աշխատանքային պայմանագրեր կնքած աշխատողների ոչ ավելին, քան կեսը, ապա կոլեկտիվ աշխատանքային հարաբերություններում արհեստակցական կազմակերպությունը ներկայացնում և պաշտպանում է միայն իր անդամների շահերը»:

**Դրանից բխում է, որ  
արհեստակցական  
կազմակերպությանը  
չանդամակցող աշխատողների  
մոտ գործադուլի իրավունքից  
օգտվելու հնարավորություն  
երբևէ առաջանալ չի կարող,  
քանի որ արհեստակցական  
միությունը պաշտպանում է  
միայն իրեն անդամակցող  
աշխատողների՝ կոլեկտիվ  
աշխատանքային  
հարաբերություններից ծագող  
իրավունքները:**

Յուրաքանչյուր դեպքում տեղի է ունենում փոքրամասնություն կազմող աշխատողների իրավունքների ոտնահարում: Մի դեպքում, երբ արհեստակցական կազմակերպության մեջ ընդգրկված են գործատուի հետ աշխատանքային պայմանագիր կնքած աշխատողների երկու երրորդը՝ մյուս աշխատողների մոտ կոլեկտիվ աշխատանքային վեճի դեպքում գործադուլ հայտարարելու մասին որոշում չի կարող ընդունվել, եթե դրան դեմ արտահայտվի երկու երրորդը, մյուս դեպքում արհեստակցական կազմակերպությունում ընդգրկված աշխատողների ոչ պակաս, քան կեսի ընդգրկվածության դեպքում կոլեկտիվ աշխատանքային հարաբերություններում այն ներկայաց-

նում է միայն իր անդամների շահերը՝ անտեսելով մյուս կեսի շահերը, ինչը հակասում է արհեստակցական միության գործունեության հիմնական սկզբունքներին: Արհեստակցական միությունների մասին օրենքի 3(դ)-րդ հոդվածի համաձայն, արհեստակցական միության գործունեության հիմնական սկզբունքներից է աշխատողների իրավունքների սահմանափակում թույլ չտալը՝ կապված նրա արհեստակցական միության մասնակից (անդամ) լինելու հանգամանքի հետ: Փաստորեն, Օրենքի վերոնշյալ հոդվածների միջև առկա է ակնհայտ հակասություն, քանի որ մի դեպքում սահմանվում է արհմիությանն ադմանակցելու հիմքով աշխատողների իրավունքների սահմանափակման արգելքը, մյուս դեպքում՝ կոլեկտիվ աշխատանքային հարաբերություններում սահմանափակվում են այն աշխատողների իրավունքները, որոնք չեն անդամակցում արհմիությանը: ՀՀ-ում արհեստակցական միությանն անդամակցելու փաստն ուղղակի կապված է գործադուլի իրավունքի իրականացման հնարավորության հետ: Կարծում ենք, որ արհեստակցական միությունների մասին օրենքում պետք է կատարվեն որոշակի փոփոխություններ: Մասնավորապես, հաշվի առնելով Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից ընդունված 87-րդ կոնվենցիայի<sup>4</sup> «աշխատողների և գործատուների կազմակերպություններ ստեղծելու և դրանց անդամակցելու ազատությունը սահմանող» և միավորումների ազատության կոմիտեի՝ «արհեստակցական միությունների հիմնադրման կամ դրա մասնակից անդամների համար քանակական սահմանափակումն արգելող» դրույթները նպատակահարմար ենք համարում սույն օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Արհեստակցական  
կազմակերպությունը,  
արհեստակցական  
կազմակերպությունների  
միությունը գործատուի հետ**

<sup>4</sup> Տե՛ս. Official Gazette of the Republic of Montenegro, No 43/03, 61/04, 71/05, article 3.1.

**աշխատանքային հարաբերություններում անհատական աշխատանքային վեճերի դեպքում ներկայացնում և պաշտպանում են արհեստակցական կազմակերպությանն անդամակցող աշխատողների շահերը, իսկ կոլեկտիվ հարաբերություններում ներկայացնում են օրենքով սահմանված կարգով իրեն նման լիազորությամբ օժտած աշխատողների շահերը՝ անկախ արհեստակցական կազմակերպությանը նրանց անդամակցությունից»:**

Պետք է ասել, որ ՀՀ Օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասն առավելապես վերաբերում է արհեստակցական միության գործառույթներին, ինչը նախատեսված չէ ՀՀ Օրենքով, ուստի կարծում ենք, որ Օրենքում պետք է «գործադուլ կազմակերպելու և անցկացնելու» հոդվածն առանձնացնել 20-րդ հոդվածով նախատեսված մյուս զանգվածային միջոցառումներից և մանրամասն կարգավորել, նախևառաջ այն պարզ պատճառով, որ «ժողովներ, հանրահավաքներ, երթեր, ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքն այլևս չի գործում, իսկ դրա փոխարեն ընդունված «հավաքների ազատության» մասին օրենքով իրավական կարգավորման է ենթարկված միայն ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածով սահմանված խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքը<sup>5</sup>: Բացի այդ, ըստ հավաքների ազատության մասին ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի, հավաքների կազմակերպիչ կարող է լինել յուրաքանչյուր ոք, ինչն ամենևին էլ չի նշանակում, որ հավաքներ կամ հանրահավաքներ կազմակերպելու գործառույթը բացառապես պատկանում է արհեստակցական միությանը: Գործադուլի իրավունքը ծագում է բացառապես կոլեկտիվ աշխատանքային վեճերից, իսկ հավաքներ կամ այլ զանգվածային միջոցառումներ կազմակերպելու իրավունքը

ծագում է հանրային հետաքրքրություններ կայացնող հարցի վերաբերյալ ընդհանուր կարծիք արտահայտելու մտադրությունից: Վերոնշյալ անհամապատասխանությունը վերացնելու համար Օրենքի 20-րդ հոդվածը պետք է շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«20. արհեստակցական միության գործադուլ կազմակերպելու և անցկացնելու իրավունքը**

**Արհեստակցական միությունն իրավունք ունի օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել գործադուլներ, գործատուի հետ կոլեկտիվ աշխատանքային հարաբերություններում (անկախ իրեն անդամակցող աշխատողների քանակից) ներկայացնել աշխատողների շահերը»:**

Մյուս կարևոր հարցը, որն արժանի է ուշադրության, դա աշխատողների մյուս ներկայացուցչական մարմնի՝ աշխատողների ժողովի (համաժողովի) կողմից գործադուլ կազմակերպելու և հայտարարելու մասին որոշում ընդունելու անթույլատրելիությունն է: Պետք է համաձայնել, որ գործադուլ հայտարարելու վերաբերյալ որոշումն ընդունում է աշխատողների կոլեկտիվը, իսկ գործադուլ հայտարարում է արհեստակցական միությունը: ՀՀ Օրենսգրքում այս երկու գործառույթների իրականացումը վերապահված է արհմիությանը, և ուշադրությունից դուրս է թողնվել աշխատողների կոլեկտիվի կողմից որոշումների ընդունմանը վերաբերող Օրենսգրքի 19-րդ հոդվածը, որտեղ մանրամասն կարգավորված են որոշումների ընդունման ընթացակարգը, աշխատողների ժողովի կամ համաժողովի քվորումի համար անհրաժեշտ աշխատողների քանակը:

**«ՀՀ Օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն «աշխատողների ժողովն իրավագոր է, եթե դրան**

<sup>5</sup> Տե՛ս ՀՀ ՊՏ 2001.01.15/1(133)

**մասնակցում է գործատուի մոտ աշխատողների կեսից ավելին, իսկ համաժողովը աշխատողների ընտրած պատվիրակների երկու երրորդից ավելին»:**

Ի տարբերություն արհմիության կողմից որոշումների ընդունման համար սահմանված քվորումի բացակայությամբ. Օրենսգրքով աշխատողների կոլեկտիվի կողմից որոշման ընդունման համար սահմանված է անհրաժեշտ քվորում: ՀՀ արհեստակցական միությունների մասին օրենքի 16-րդ հոդվածի 6-րդ պարբերության համաձայն «տվյալ գործատուի մոտ արհեստակցական կազմակերպության բացակայության դեպքում, օրենսդրությամբ սահմանված կարգով, աշխատողների շահերի պաշտպանության գործառույթները կարող են փոխանցվել համապատասխան տարածքային կամ ճյուղային արհեստակցական միությանը»:

**Նույն քանն է սահմանված Օրենսգրքի 74-րդ հոդվածի 1.1 կետով, ըստ որի «Կազմակերպությունում արհեստակցական միության բացակայության դեպքում գործադուլ հայտարարելու գործառույթները կազմակերպության աշխատողների ժողովի (համաժողովի) որոշմամբ փոխանցվում են համապատասխան ճյուղային կամ տարածքային արհեստակցական միությանը»:**

Վերը նշվածից բխում է, որ մեկ կազմակերպության աշխատողների կոլեկտիվը, փոխանակ օգտվելու Օրենսգրքով սահմանված որոշումներ ընդունելու իր իրավունքից, արհեստակցական կազմակերպության բացակայության պայմաններում պետք է դիմի այլ կազմակերպության արհմիության, լիազորի նրան, որպեսզի վերջինս պաշտպանի իր շահերը: Բացի այդ, օրենսդրական կարգավորման ենթարկված չէ ինչպես տարածքային կամ ճյուղային արհմիության կողմից այլ կազմակերպության աշխատողներին կոլեկտիվ աշխատանքային հա-

րաբերություններում ներկայացնելու հարցը, այնպես էլ այն, թե տվյալ աշխատողները քանի պատվիրակ պետք է ուղարկեն այլ արհմիություն, ինչպես պետք է այլ արհմիության կողմից տեղի ունենա գործադուլ հայտարարելու մասին որոշման ընդունումը և արդյոք այդ որոշումը իրավական տեսանկյունից հետագայում վիճարկման առարկա չի դառնա: Կարծում ենք, որ այն կազմակերպություններում, որտեղ բացակայում են արհեստակցական միությունները, գործադուլ հայտարարելու որոշում ընդունող սուբյեկտ պետք է ճանաչել նաև աշխատողների կոլեկտիվին, քանի որ Օրենսգրքի 23-րդ հոդվածի համաձայն աշխատողների ներկայացուցիչ են համարվում ոչ միայն արհմիությունը, այլև աշխատողների ժողովի (համաժողովի) կողմից ընտրված ներկայացուցիչները: Նույն հոդվածի 2-րդ պարբերությամբ սահմանվում է. «Եթե կազմակերպությունում բացակայում է արհեստակցական միությունը, կամ գոյություն ունեցող արհեստակցական միություններից որևէ մեկը չի միավորում կազմակերպության աշխատողների կեսից ավելին, ապա աշխատողների ժողովի կողմից կարող են ընտրվել ներկայացուցիչներ (մարմին)»:

**Նույն հոդվածում նշված է, որ կազմակերպությունում աշխատողների ներկայացուցիչների բացակայության դեպքում միայն աշխատողների ժողովի (համաժողովի) կողմից աշխատողների ներկայացուցչության և շահերի պաշտպանության գործառույթները կարող են փոխանցվել համապատասխան ճյուղային կամ տարածքային արհմիությանը»:**

Անհրաժեշտ է գործադուլ հայտարարելու մասին որոշում ընդունող սուբյեկտների թվում բացի օրենքով նշված արհմիությունից ավելացնել նաև աշխատողների ժողովի կամ համաժողովի արդյունքում ընտրված ներկայացուցիչների (մարմին):

# Իրավական համակարգի հասկացությունը, կառուցվածքը և համակարգաստեղծ կապերը

Էլզա ԱՂԱԲԱԲՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և  
իրավունքի ինստիտուտի հայցորդ

*Իրավունքն իրենից ներկայացնում է բարդ, բազմակառույց, համակարգային գոյացում, որն օժտված է համակարգերին ընդհանրապես բնորոշ հիմնական հատկանիշներով: Իրավական իրականության համակարգը նպաստում է դրա պլանաչափ ու նպատակաորոշված զարգացմանը: Իրավունքի տարբեր տարրերի ու դրսևորումների համակարգային որակը առաջներում էլ նշվել է իրավագետների աշխատություններում, ինչը նպաստել է իրավունքի գոյի խոր հասկացմանը<sup>1</sup>: Հեղինակների կողմից օգտագործվել են «իրավունքի համակարգ», «օրենսդրության համակարգ», «իրավական կարգավորման համակարգ» հասկացությունները:*

Իրավունքի ընդհանուր-համակարգային բնութագրերը փորձում էին տեսնել նրա սկզբունքների, աղբյուրների, օրենսդրության կառուցվածքային մասերի, իրավաբանական տերմինաբանության մեջ: Սակայն մինչ օրս էլ վերացված չեն անցումային փուլում գտնվող իրավական իրակառուցված համակարգային հատկությունների դերի վերաբերյալ առկա անորոշություններն ու բացերը: Իրավունքի կայուն վիճակի պայմանավորվածությունը նրա համակարգայնությամբ, իրավունքի տվյալ որակի ազդեցությունը նրա կայունության և դինամիզմի վրա՝ այս հարցերը դեռ փաստորեն չեն դրվել իրավաբանական գիտության առջև և համակողմանի ուսումնասիրման առարկա չեն դարձել:

Փիլիսոփայական ու իրավաբանական գիտությունների սինթեզը, կուտակված գիտելիքների միավորման պահանջումները,

հասարակության բարդացման պայմաններում իրավական կարգավորման ամբողջական, համակարգային պատկերի ստեղծման անհրաժեշտությունը առաջ բերեցին այնպիսի հասկացություն, ինչպիսին է «իրավական համակարգը»: Այն դասվեց իրավունքի տեսության առավել ընդհանուր հասկացությունների թվին, ընդհանուրացնելով իրավական իրականության գանազան երևույթներն ու գործընթացները:

Հասարակության իրավական համակարգը իրենից ներկայացնում է բազմապլանային, բազմագործառնությամբ գոյացություն, որը բավականին բարդ է գիտական հետազոտման համար, հատկապես իր զարգացման անցումային փուլերում: Մեր ժամանակներում շարունակում է աճել ազգային իրավական համակարգերի թիվը, ներկայումս դրանց թիվը հասնում է մոտ 200-ի<sup>2</sup>:

<sup>1</sup> Տես, օրինակ, Алексеев С.С. Советское право как система: методологические принципы исследования // Советское государство и право. 1974. N 7; Керимов Д.А. Методология права. М., 2000; Поленина С.В. Система советского законодательства // Советское государство и право. 1975. N11; Бабаев В.К. Советское право как логическая система. М., 1978, Юридическая деятельность как система и предмет комплексного исследования юридических и иных наук. Ярославль, 1989.

<sup>2</sup> Տես. Правовые системы стран мира. Энциклопедический справочник. Отв. ред. А.Я.Сухарев. М., 2000.

Հետազոտման առարկայի բարդությունը ենթադրում է դրա ճանաչման առավել օպտիմալ միջոցների և եղանակների որոնում: Չխորանալով համակարգերի տեսության ընդհանուր դրույթներում, ուսումնասիրենք իրավունքի համակարգային հատկանիշները, որոնք կարող են օգտագործվել իրավական ոլորտում անցումային գործընթացների բացատրման համար: Առաջին հերթին անհրաժեշտ է պարզաբանել իրավունքի մեջ համակարգաստեղծ գործոնների հարցը:

Իրավական համակարգի կառուցվածքի հետազոտումը անհնար է առանց համակարգի բաղադրամասային կազմի պարզման, ինչը, իր հերթին, պայմանավորում է օբյեկտի արտաքին ու ներքին հաստատուն կապերի առանձնացում, ամբողջի տարրերի կապի օրենքի բացահայտում: Օբյեկտի բացահայտված հատկանշող բնութագրերի միավորումը մեկ ընդհանուր միասնականության մեջ թույլ կտա ձևակերպել իրավական համակարգի բնորոշումը:

Դժվար է պարզել և ուսումնասիրել հարաբերությունները ինչ-ինչ երևույթների միջև, եթե բուն այդ երևույթները անհստակ են բնորոշված: Այսօր մենք ստիպված ենք աշխատել իրավական համակարգի հենց այդպիսի բնորոշումների հետ: Բարեբախտաբար, դրանք թիվը այդքան էլ մեծ չէ: Գիտական աշխատություններում և նորմատիվային ակտերում հայտնվում «իրավական համակարգ» տերմինը կիրառվում է, իրավական ամենատարբեր երևույթների վերաբերյալ: Այսպես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածում այդ հասկացությունը օգտագործված է որպես ներազգային և միջազգային իրավունքի նորմերի հարաբերակցության վերաբերյալ իրավունքի համակարգի հոմանիշ<sup>3</sup>: Իրավագետների պատկերացումներն այդ հասկացության բնույթի և ծավալի վերաբերյալ երբեմն տրամագծորեն տարբեր են:

**Այս ամենը վկայում է այն մասին, որ իրավական համակարգի կատեգորիան դեռ անհրաժեշտ չափով մշակված չէ իրավաբանական գիտության մեջ:**

«Իրավական համակարգ» հասկացությանը պատշաճ ուշադրություն դարձնելու փոխարեն հեղինակները հաճախ առաջարկում են միանգամայն նոր տերմիններ. «Իրավական կյանք», «Իրավական դաշտ» և այլն<sup>4</sup>:

Մի շարք հեղինակներ իրավական համակարգը փաստորեն նույնացնում են իրավական նորմերի համակարգի հետ<sup>5</sup>:

Հեղինակների մեկ այլ խումբ (Ն. Ի. Մատուզով, Ս. Ի. Բայտին, Վ. Ն. Պրոտասով) թույլ են տալիս «իրավական համակարգ» ու «իրավական կարգավորման մեխանիզմ» հասկացությունների նույնացում<sup>6</sup>:

**Արտասահմանյան (և հատկապես անգլոսաքսոնյան) իրավագիտության մեջ «իրավական համակարգ» տերմինը պատշաճ զարգացում չի ստացել՝ ինչպես և իրավունքի ընդհանուր-տեսական կատեգորիաների մեծ մասը:**

Օտարերկրյա իրավաբանական գրականության մեջ այս կատեգորիայի հազվադեպ հիշատակումները աչքի են ընկնում միտումնավորվածությամբ ու բնորոշումների լրոգվածությամբ: Այսպես, ամերիկյան իրավագիտության ներկայացուցիչ Վ. Վեյդլիխը գրում է. «Իրավական համակարգ տերմինը օգտագործվում է հենց նրա համար, որպեսզի հնարավոր լինի բնութագրել տարբեր ժողովուրդների իրավունքի համակարգերի պատմա-իրավական և էթնո-մշակութային տարբերությունները»: Եվ շարունակում է. «իրավական համակարգերի առանձնացումն ունի գերազանցապես պատմական նշանակություն»<sup>7</sup>:

Իրավական համակարգի մեջ միաձուլվել են հասարակության իրավական պատկերացումները, նրա մշակույթն ու հոգեբանությունը, տեխնիկա-իրավաբանական զինամոցը ու միավորումների գործունեությունը:

<sup>3</sup> Տե՛ս նաև. Ռուսաստանի Սահմանադրության 15-րդ հոդվածը:

<sup>4</sup> Տե՛ս. Правовая жизнь в современной России. Теоретико-методологический аспект. Саратов, 2005.

<sup>5</sup> Տե՛ս Керимов Д.А. Философские проблемы права. М., 1972. С. 278.

<sup>6</sup> Տե՛ս Байтин М.И. Право и правовая система // Ежегодник российского права. 2001. С.18.

<sup>7</sup> Տե՛ս Weidlich W. Stability and Cyclicity in Law System. New York, 1995.

**Կարելի է ասել, որ իրավական համակարգի բարդությունը հանդիսանում է այն պայմանավորող հասարակական հարաբերությունների բարդության արտացոլում:**

Չեդինակների մեծ մասը (Ն.Ի. Մատուզով, Ա.Ֆ. Չերդանցև, Ն.Ա. Բոգդանովա, Ա. Յու. Մարոչկին և այլք) իրավական համակարգը պատկերացնում են որպես սինթեզված հասկացություն, որն արտացոլում է հասարակության մեջ հանդիպող իրավաբանական երևույթների ողջ համալիրը<sup>8</sup>:

Խորհրդային ժամանակաշրջանում թերևս միայն Լ.Ս. Յավիչն էր դեմ «իրավական համակարգ» հասկացության մեջ առանց բացառության իրավական բոլոր երևույթները, իրավական ողջ իրականությունը մտցնելուն<sup>9</sup>: Ինչպես հայտնի է, իրավական իրականությունը բաղկացած է ոչ միայն դրական իրավաբանական ակունքներից, այլև բացասական բանական դրսևորումներից: Հնարավոր է արդյոք «իրավական համակարգ» հասկացության ծավալի մեջ ներառել իրավական ոչ միայն դրական, այլև բացասական երևույթները: Այս հարցի պատասխանը անմիջականորեն կապված է իրավական համակարգի կազմին այս կամ այն տարրերի պատկանելիության չափանիշների օբյեկտի ամբողջի և մասերի փոխկապակցվածության, քանակական ու որակական փոփոխությունների, ձևի և բովանդակության արտահայտման հետ:

Իրավական համակարգի վերաբերյալ գրականության մեջ ուսումնասիրվող երևույթի կառուցվածքը դիտարկվում է, որպես կանոն, միայն դրա տարրերի կազմի առումով, իսկ կապերը համակարգի բաղադրամասերի միջև հետազոտված չեն:

**Իրավական համակարգի տեսությունն այսօր գտնվում է այնպիսի մակարդակի վրա, որ նույնիսկ դրա բաղադրամասերի կազմի, տարրերի հավաքածուի բացահայտումը հանդիսանում է բավականին բարդ գիտական խնդիր:**

Իրավական համակարգի հասկացությունը բացահայտում է իրավունքի համակարգայնության համապարփակ ձևը, սակայն դա առիթ չի տալիս շփոթելու համակարգն ու կառուցվածքը: «Կառուցվածք» հասկացությունը սերտորեն կապված է «համակարգ» հասկացության հետ, բայց դրանց միջև գոյություն ունի տարբերություն: «Կառուցվածք» հասկացությունը օգնում է առավել խորությամբ բացահայտել կատեգորիայի բովանդակությունը:

Կառուցվածքի էական հատկանիշն է հանդիսանում նրա ամբողջական բնույթը:

**Կառուցվածքն այն է, ինչը ընդգրկում է համակարգի բոլոր տարրերը օրինաչափ կապով:**

Կառուցվածքը յուրահատուկ ձևով «կարում» է համակարգի բոլոր տարրերը ընդհանուր մի թելով և իրենից ներկայացնում է համակարգի ամբողջական բնութագիր<sup>10</sup>: Հետևաբար, կառուցվածքի բացահայտումը կապված է օբյեկտի ամբողջական և միևնույն ժամանակ տարանջատ բնույթի պարզաբանման հետ:

**Իրավական համակարգի կառուցվածքի առանձնացումը չի կարող իրականացվել կամայականորեն, քանի որ ցանկացած կառուցվածք կրում է օբյեկտիվ բնույթ:**

Կարելի է եզրակացնել, որ իրավական համակարգի կառուցվածքն իրենից ներկայացնում է հասարակական կյանքի իրավական ոլորտի իրապես գոյություն ունեցող կառուցվածքի որոշակի մասը: Այս կապակցությամբ դժվար է համաձայնվել Լ.Ք. Տիունովայի այն կարծիքի հետ, որ «իրավական համակարգի հասկացությունը առաջացել է իրավունքի տեսության մեջ ոչ թե գիտելիքների ինտեգրման, այսինքն միասնական ձևավորված երևույթի վերլուծման շնորհիվ, այլ բազմապլանային ու բազմաբնույթ երևույթների սինթեզի ճանապարհով:

Փոխգործողության ժամանակ այդ երևույթները ապահովում էին որոշակի համասոցիալական արդյունք, միասնական

<sup>8</sup> Տես, օրինակ. Матузов Н.И. Правовая система развитого социализма // Советское государство и право. 1983. №1. С. 20; Богданова Н.А. Новые подходы к характеристике науки конституционного права на современном этапе // Актуальные проблемы юридической науки. Курск. 1998. С. 5-6; Судебная практика в советской правовой системе. М., 1975.

<sup>9</sup> Տես Կրավիչ Լ.Ս. Сущность права. М., 1985. С. 41.

<sup>10</sup> Տես Կրավեց Ա.Ս. Вероятность и системы. Воронеж, 1970. С. 46.

նպատակ (հասարակական հարաբերությունների իրավական կարգավորում) և այդ իսկ աստճառով գիտության կողմից դիտարկվում էին որպես համակարգային ամբողջականություն<sup>11</sup>:

Իրավական համակարգի առումով կառուցվածքը հանդես է գալիս որպես իրավունքի կամ նրա առանձին մասերի ներքին կազմակերպում:

Իրավական համակարգի կառուցվածքի հանդեպ նման մոտեցումը հնարավորություն է տալիս ստանալ օբյեկտի ոչ միայն ստատիկ, այլև դինամիկ բնութագիրը: Մի կողմից կառուցվածքն իրենից ներկայացնում է տարրերի հաստատուն միասնականություն, տարրերի կապի օրենք, որն արտահայտում է հարաբերությունների կայունությունը, կանոնակարգվածությունը: Ամբողջական ինտեգրատիվ իրավական որակը տրվում է իրավաբանական իրականության կառուցվածքով:

**Կառուցվածքը հանդես է գալիս որպես իրավական համակարգի գլխավոր կայունացնող գործոն, որը թույլ է տալիս նրան պահպանել դրական փորձը իր առջև դրված նպատակներին հասնելու համար:**

Մյուս կողմից կառուցվածքը, ցուցադրելով տարրերի փոխներգործությունը միմյանց ու արտաքին միջավայրի հետ, մասամբ պատասխանում է այն հարցին, թե ինչպիսի պայմաններում է որակապես որոշակի իրավական համակարգը փոխվում մեկ ուրիշով:

**Կառուցվածքի էական փոփոխությունը անպայմանորեն հանգեցնում է իրավական համակարգի որակի փոփոխություն, դրա անցում որակական մեկ այլ վիճակի:**

Զգալի չափով դա տեղի է ունենում այն պատճառով, որ համակարգի կառուցվածքում տարրերի միջև կապի տիպական մի եղանակը փոխարինվում է մեկ ուրիշով: Այդ իսկ պատճառով օբյեկտի կառուցվածքայնության ճանաչումը հանդիսանում է դրա ինքնաշարժման աղբյուրի ըմբռնման պայմաններից մեկը:

Անցումային ժամանակաշրջանի իրավական համակարգի ուսումնասիրման նպատակով կարևոր է նկատել, որ համակարգը կազմող տարրերը կարող են լինել

ինչպես միասեռ, այնպես էլ ոչ միասեռ, ինչպես կազմակերպված, այնպես էլ անկազմակերպ: Միասեռ անվանենք իրավական համակարգի որակապես միասեռ բաղադրամասերը: Համապատասխանաբար ոչ միասեռ բաղադրամասերն են որակապես տարբեր իրավական երևույթները: Կազմակերպված բաղադրամասը աչքի է ընկնում տարրերի կանոնակարգվածությամբ, ներքին միասնականությամբ, բավականաչափ ձևակերպվածությամբ: Համակարգի անկազմակերպ տարրը քիչ արդյունավետ է, դժավարությամբ է կատարում իր գործառնությունները: Ոչ միասեռ ու անկազմակերպ տարրերի առատությունը անցումային ժամանակաշրջանի իրավական համակարգի մեջ արգելակում է նրա առաջընթաց զարգացումը և դժվարացնում գործառնությունը:

Երբ մենք խոսում ենք որևէ օբյեկտի կառուցվածքի մասին, ապա նշում ենք այն կազմող բաղադրամասերի ցանկը, դրանց դասավորվածությունն ու տեղաբաշխումը, ինչպես նաև կապերի բնույթը:

Ակներև է, որ իրավական իրականության շրջագծված ծավալը չի սահմանափակվում միմիայն պոզիտիվ իրավունքով: Արդ, հավելյալ ի՞նչ բաղադրամասեր արժե ներառել «իրավական համակարգ» հասկացության մեջ:

Այս հարցն ուսումնասիրող հեղինակների մեծ մասը նշում է իրավաբանական հաստատությունները: «Իրավունքը նոր հազարամյակի շենին» իր մենագրության մեջ Ս.Ս. Ալեքսեևը նշում է. «բացի իրավունքի հասկացությունից (պոզիտիվ իրավունքի իմաստով) կա նաև իրավաբանական (իրավական) համակարգի հասկացություն: Դա պոզիտիվ իրավունքն է՝ նրա գոյությունն ու գործողությունը ապահովող այլ ինստիտուտների հետ մեկտեղ: Այդ թվում դատարանի, իրավապահ մարմինների, օրենսդիր մարմնի հետ միասնականության մեջ»<sup>12</sup>:

Ամերիկացի իրավագետ Լ. Ֆրիդմենը իրավական բոլոր երևույթները բաժանում է երեք մեծ խմբի: Առաջին խումբը, որը հեղինակն անվանում է «կառուցվածք» («ստրուկտուրա») ներառում է իրավական համակարգի սկզբունքներն ու իրավական հաստատությունները: Երկրորդ խումբը՝

<sup>11</sup> Տե՛ս Тиунова Л.Б. О понятии правовой системы // Правоведение. 1985. N1. С. 26.

<sup>12</sup> Տե՛ս Алексеев С.С. Право на пороге нового тысячелетия. М., 2000. С. 14.

«էությունը», միավորում է նորմերը և սուբյեկտների վարքի օրինակները իրավական համակարգի ներսում: Երրորդ խումբը՝ «իրավական կուլտուրան», ներառում է սուբյեկտների վերաբերմունքը իրավունքի և ընդհանուր առմամբ իրավական համակարգի հանդեպ, ինչպես նաև հասարակության կյանքի իրավական ոլորտի իդեալներն ու սպասումները<sup>13</sup>:

Մեր կարծիքով, տվյալ դեպքում բուն իրավական համակարգը շփոթվում կամ փոխարինվում է նրա արտաքին միջավայրի մի մասով: Պետական և ոչ պետական տեսակների իրավաբանական հաստատությունները ընդգրկվում են «բաղաբաշխական համակարգ» հասկացության մեջ: Իսկ իրավական համակարգի հասկացությունը նախատեսված է իրավական երևույթների վերաբերյալ ներքին իրավական գործընթացները արտացոլելու համար: Առավել ևս չարժե իրավական համակարգի տարրեր համարել սոցիալական այն գործոնները, որոնք ներազդում են իրավաստեղծման և իրավաիրագործման վրա, սակայն չեն կազմում դրանց անմիջական բովանդակությունը: Այստեղ մենք նկատի ունենք, մասնավորապես, ավանդույթներն ու հասարակական հարաբերությունները: Այսպես Ռ.Ձ. Լիվշիցը գրում է. «Իրավունքը բարդ երևույթ է: Այն կարծես թե ներառում է երեք շերտ, երեք տարր: Առաջին շերտը կազմում են իրավական գաղափարները, իրավական գիտակցությունը, երկրորդը՝ իրավական նորմերը և երրորդը՝ հասարակական հարաբերությունները»<sup>14</sup>: Եվ քանի որ իրավաբանական գիտության մեջ «իրավական համակարգ» հասկացությունը կիրառվում է իրավական երևույթների հանդեպ, ապա նրա ծավալի մեջ կարող են մտնել միայն այն սոցիալական հարաբերությունները, որոնք ենթարկվել են իրավական կանոնակարգման, այսինքն՝ իրավահարաբերությունների:

Հանելով իրավաբանական հաստատությունները «իրավական համակարգ» հասկացության մեջից, անհրաժեշտ է շեշտել, որ այդ սուբյեկտների գործունեությունը (իրավաստեղծում, իրավակիրառում և այլն), որպես հասարակական կյանքի վրա իրավական ներգործության գործընթաց ու

արդյունք, հանդիսանում են իրավական համակարգի ինքնուրույն բաղադրամասեր: Միանգամայն իրավաչափ է իրավական համակարգի կազմում նաև ընդհանուր առմամբ իրավաբանական պրակտիկայի առանձնացումը, որը մենք հասկանում ենք որպես իրավունքի վերարտադրման շարունակական գործունեություն:

Իրավունքի, իրավագիտակցության և իրավաբանական պրակտիկայի հետ մեկտեղ նորարար իրավագետները որպես իրավական համակարգի բաղադրամաս են դիտարկում նաև իրավաբանական գիտությունը: Մեր կարծիքով, գիտության համար իրավական համակարգը հանդես է գալիս որպես արտացոլման առարակա, հետևաբար գտնվում է նրա սահմաններից դուրս: Իրավաբանական գիտությունը կարող է ընդգրկվել «հասարակության իրավական համակարգ» հասկացությամբ միայն այն չափով, որ չափով որ այն հանդիսանում է իրավագիտակցության մաս:

**Մինչև վերջին ժամանակները առանձին հեղինակներ փորձում էին հնարավորինս մեղ շրջանակներում նախանշել իրավական համակարգի բաղադրիչների կազմը, անելով դա պաշտոնական, ձևականորեն որոշակի իրավական երևույթների սահմաններում:**

Այսպես, Ն.Ի. Բարցիցի կարծիքով, ցանկացած պետության իրավական տարածքը իրենից ներկայացնում է ձևականացված (ֆորմալացված) երևույթների համակարգ: «Առաջին հերթին դա պայմանավորված է նրանով, որ իրավունքը դրսևորվում է նորմատիվ-իրավական ակտերում, որոնք կրում են պետության կողմից սանկցավորված ձևականացված բնույթ», - գրում է նա: Այսպիսով, իրավունքի հասկացության մեղ մեկնումը բերեց հեղինակին «իրավական տարածք» հասկացության էլ ավելի՝ անթույլատրելիորեն մեղ մեկնության: Մեր կարծիքով, իրավական համակարգը չի կարող սահմանափակվել ձևականորեն որոշակի, օբյեկտիվացված նորմերի ընդգրկմամբ, անտեսելով իրավունքի ողջ գործող կառուցվածքը՝ նրա կոնկրետ և արստրակտ ձևերի միասնականության մեջ:

Տարբեր հեղինակներ հիշատակում են իրավական համակարգի տարբեր բաղադր-

<sup>13</sup> Տե՛ս Փրիդմեն Լ. Введение в американское право. М., 1993. С. 10-11.

<sup>14</sup> Տե՛ս Лившиц Р.З. О легитимности закона // Правовое государство, личность, законность. М., 1997. С. 19

րամասեր, բուն իրավունքը կամ պոզիտիվ իրավունքը, իրավաբանական պրակտիկան, իրավական գաղափարախոսությունը (Ս.Ս. Ալեքսեև)<sup>15</sup>, իրավահասկացումը՝ իրավական հայացքները, իրավագիտակցությունը, իրավական կուլտուրան, իրավական տեսությունները, հայեցակարգերը, իրավական միհիլիզմը, իրավաստեղծությունը, իրավական զանգվածը՝ պաշտոնապես սահմանված և փոխկապակցված իրավական ակտերի կառուցվածքայնորեն ձևակերպված ամբողջությունը, իրավակիրառումը՝ իրավական ակտերի իրագործման և օրինականության ապահովման մեխանիզմը (Յու.Ա. Տիխոմիրով)<sup>16</sup>, իրավունքը որպես պետության կողմից ստեղծված և պաշտպանվող նորմերի միասնականություն (համակարգ), օրենսդրությունը՝ որպես այդ նորմերի դրսևորման ձև (նորմատիվային ակտեր), իրավական հաստատությունների համակարգը, դատական և իրավաբանական պրակտիկան, իրավական կարգավորման մեխանիզմը, իրավահրազորման գործընթացը (ներառյալ կիրառման և մեկնաբանման ակտերը), օրինականությունն ու օրինակարգը, քաղաքացիների իրավունքները, ազատությունները և պարտականությունները (իրավունքը սուբյեկտիվ իմաստով), հասարակության մեջ ձևավորվող իրավական հարաբերությունների ողջ համալիրը, իրավական գաղափարախոսությունը (Ն.Ի. Մատուզով)<sup>17</sup>: Իրավական համակարգի բաղադրամասերի ցանկերը իրենց ողջ ընդարձակությամբ հանդերձ տառապում են կիսատությամբ և ներքին հակասականությամբ: Նկատենք, որ Ս.Ս. Ալեքսեևը և Ն.Ի. Մատուզովը որպես իրավական համակարգի բաղադրամասերից մեկը նշում են իրավական գաղափարախոսությունը, այնինչ իրավագիտակցությունը, որի մասն է կազմում իրավական գաղափարախոսությունը, նրանց կողմից նույնիսկ չի հիշատակվում: Յու.Ա. Տիխոմիրովի ցանկում տեղ չգտնվեց իրավաբանական պրակտիկայի գա-

նազան ձևերի համար՝ սկսած իրավական սովորույթների ձևավորումից մինչև իրավահարաբերություններ: Ընդ որում՝ «իրավագիտակցություն», «իրավական տեսություններ», «հայեցակարգեր», «իրավական միհիլիզմ» հասկացությունները այդ հեղինակը օգտագործում է տերմինաբանական նույն մակարդակով, թեև դրանք նշում են իրավական իրականության տարբեր կարգի երևույթներ:

**Իրավական համակարգի բաղադրակազմի հարցի մշակման ընթացքում կարևոր ենք համարում հաշվի առնել առնվազն մի քանի հանգամանքներ:**

Առաջին, այն, որ իրավական համակարգը ընդգրկում է այն բոլոր իրավական երևույթները, որոնք հանդես են գալիս որպես հասարակական կյանքի վրա իրավական ներազդման անհրաժեշտ և բավարար գործառնական միավորներ և կազմում են դրա անմիջական բովանդակությունը: Երկրորդ, իրավական համակարգը իր ծավալի մեջ է ներառում իրավունքի ձևավորման, սիստեմավորման, գաղափարախոսական հիմնավորման և իրագործման գործընթացները: Եվ, երրորդ, անհրաժեշտ է հաշվի առնել տարբերությունը իրավական համակարգի բաղադրիչների և տարրերի միջև:

Հաշվի առնելով վերոշարադրյալ նկատառումները, որպես իրավական համակարգի ինքնուրույն բաղադրամասեր կարելի է առաջարկել հետևյալը. ա) պոզիտիվ իրավունքը, բ) իրավագոյացումը, գ) իրավունքի իրագործումը, դ) իրավագիտակցությունը: Իրավական համակարգի նույնակարգ բաղադրամասերի թվում տեղ չկա իրավաբանական պրակտիկայի համար, քանի որ այդ հասկացությունը ունի ընդհանրացման բավականին լայն մակարդակ՝ ի հաշիվ իր ծավալի մեջ վերը թվարկած բաղադրամասերից մի քանիսի, մասնավորապես իրավագոյացման և իրավունքի իրագործման ընդգրկման:

<sup>15</sup> Տե՛ս Барциц И.Н. Правовое пространство: основные признаки и закономерности развития // Журнал российского права. 2000. N 5/6. С. 107.

<sup>16</sup> Տե՛ս Алексеев С.С. Право и правовая система // Правоведение. 1980. N1. С. 29.

<sup>17</sup> Տե՛ս Тихомиров Ю.А. Правовая сфера общества и правовая система // Журнал российского права. 1998. N 4-5. С. 9.

# Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության օբեկտիվ կողմի հասկացությունը

Դավիթ ԴԱՎԻԴՅԱՆ

իրավաբան

Հանցագործության օբեկտիվ կողմն են կազմում այն հատկանիշները, որոնք արտաքինից բնութագրում են հանցագործությունը: Դրանք թվին են դասվում ա) հանրորեն վտանգավոր արարքը (գործողությունը կամ անգործությունը), բ) հանրորեն վտանգավոր հետևանքները, գ) հանրորեն վտանգավոր արարքի և հետևանքի միջև պատճառական կապը, դ) հանցագործության տեղը, ժամանակը, իրադրությունը, գործիքները ու միջոցները, ինչպես նաև եղանակը<sup>1</sup>:

Յուրաքանչյուր հանցագործության օբեկտիվ կողմը բնորոշում են օրենքով պաշտպանվող օբեկտի նկատմամբ ոտնձգության արտաքին ձևերը, որոնք արտահայտում են սուբյեկտի նպատակներն ու մտադրությունները: Դրա հետ կապված Վ.Ն. Կուրդյավցևը նշում է. «Մարդկային արարքը օբեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշների միասնություն է: Այն միաժամանակ և օբեկտիվ է, և սուբյեկտիվ, քանի որ իրենից ներկայացնում է մարդկային անհատականության ներքին հատկանիշների դրսևորում և դրա հետ միասին ծառայում է որպես մարդու և արտաքին իրականության փոխներգործության ձև»<sup>2</sup>:

Հանցագործության օբեկտիվ կողմը քրեական պատասխանատվության անհրաժեշտ և կարևոր նախադրյալ է, յուրօրինակ մի հիմք, առանց որի հանցագործությունն ընդհանրապես չի կարող գոյություն ունենալ:

Ցանկացած կոնկրետ հանցագործություն ունի անհատականացման բազմաթիվ հատկանիշներ, այդ թվում նաև օբեկտիվ: Յուրաքանչյուր հանցագործության

օբեկտիվ հատկանիշները բնութագրում են սուբյեկտի արարքը (գործողություն կամ անգործություն), այդ արարքով հասցված վնասը և արտաքին այն պայմանները, որոնց առկայությամբ իրականացվել է հանրորեն վտանգավոր ոտնձգությունը:

Ինչ վերաբերում է կոնկրետ հանցակազմի օբեկտիվ կողմին, ապա վերջինս ներառում է օրենսդրությամբ սահմանված խիստ որոշակի այնպիսի հատկանիշներ, որոնք նկարագրում են տվյալ հանցագործության օբեկտիվ կողմը: Յետևաբար, հանցակազմի օբեկտիվ կողմը քրեական օրենքով սահմանված որոշակի հանցագործության այնպիսի հատկանիշների համակցությունն է, որոնք բնութագրում են կոնկրետ հանցավոր ոտնձգության կատարման արտաքին գործընթացը:

«Հանցագործության օբեկտիվ կողմի նշանակությունը,- գրում է Գ.Վ. Տիմեյկոն,- ամենից առաջ կայանում է նրանում, որ հանցակազմի սահմաններում այն համարվում է քրեական պատասխանատվության օբեկտիվ հիմք»<sup>3</sup>:

<sup>1</sup> Տե՛ս ԶԶ Քրեական իրավունք, ընդհանուր մաս, դասագիրք բուհերի համար, էջ 126

<sup>2</sup> Տե՛ս Кудрявцев В.Н. Объективная сторона преступления. — М. Госюриздат. 1960, С.10

<sup>3</sup> Տե՛ս Тимейко Г.В. Общее учение об объективной стороне преступления. Ростов-на-Дону: Изд-во ун-та, 1977 С. 15

Այսպիսով, երբ խոսվում է կոնկրետ հանցագործության մասին, ապա դրա օբյեկտիվ հատկանիշների ողջ ծավալը չի կարելի նույնացնել հանցակազմի օբյեկտիվ կողմի հետ: Վերջինս պարունակում է միայն այնպիսի հատկանիշներ, որոնք բավարար են՝ ա) արարքի հանրային վտանգավորությունը նկարագրելու, բ) այն այլ հանցակազմերից սահմանազատելու,- այսինքն՝ անհատականացնելու համար:

Քաղաքական կամ հասարակական գործչի կյանքի նկատմամբ ոտնձգությունը դասվում է այն հանցագործությունների շարքին, որոնք ունեն ֆորմալ կազմ: Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 305 հոդվածի՝ հանցագործության օբյեկտիվ կողմին բնորոշ է այն, որ գործողության վերջնական պահը պայմանավորված է նշված հոդվածի դիսպոզիցիայում դրա նկարագրությամբ: Օրենսդիրը մատնանշել է՝ «հենց արարքի իրականացումը՝ որպես ինքնուրույն և բավարար հիմք՝ վարջնական հանցագործության ճանաչման համար» դուրս բերելով հետևանքները հանցակազմի սահմաններից:

Նշենք, որ բոլոր հանցակազմերի համար ընդհանուր հանդիսացող օբյեկտիվ հատկանիշները ուսումնասիրվում են քրեական իրավունքի ընդհանուր մասում, իսկ յուրաքանչյուր կոնկրետ հանցակազմինը՝ հատուկ մասում:

Հանրորեն վտանգավոր վարքագծի արտաքին դրսևորումը բնութագրելիս, օրենսդիրը օգտագործում է «արարք» տերմինը, որը ներառում է այդ վարքագծի արտաքին դրսևորմամբ իրարից տարբերվող հետևյալ երկու ձևերը՝ գործողությունը և անգործությունը:

«Հանցագործության իրականացման միջոցների տարբերակման գործոնների շարքին,- գրում է Ի.Շ. Ժորդանյան,- դասվում են բնական և սոցիալական միջավայրի բոլոր արտաքին հանգամանքները: Որպես նման գործոններ հանդես են գալիս ժամանակը, հանցագործության օբյեկտը և հանցավոր ոտնձգության առարկան, այդ առարկայի և

հանցագործի միջև հարաբերությունները, դրա տեխնիկական հագեցվածությունը, հանցակիցների առկայությունը և մի քանի այլ հանգամանքներ»<sup>4</sup>:

Նշենք նաև, որ քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի դիսպոզիցիաներում օրենսդիրը առավել հաճախ մատնանշում է հենց հանցագործության օբյեկտիվ կողմի հատկանիշները: Այս հանգամանքը ևս վկայում է քրեական պատասխանատվության և հանցակազմի կառուցման համար հանցագործության օբյեկտիվ կողմի բացահայտման կարևորության մասին:

Վ.Ն. Կուդրյավցևը հանցագործության օբյեկտիվ կողմը բնորոշում է որպես հանրավտանգ և հակաիրավական գործողություն, որը դիտարկում է դրա արտաքին կողմից այն իրադարձությունների և երևույթների հաջորդական զարգացման տեսանկյունից, որոնք սկսվում են հանցագործ արարքից և ավարտվում են հանցագործ արդյունքով<sup>5</sup>:

Նշենք նաև, որ հանցագործության օբյեկտիվ կողմի հատկանիշները ոչ միշտ են ունենում միևնույն քրեիրավական նշանակությունը:

Սասնագիտական գրականության մեջ բոլոր այդ հատկանիշները բաժանվում են երկու խմբի՝ պարտադիր (հիմնական) և ֆակուլտատիվ (լրացուցիչ): Առաջինները օրենսդրի կողմից միշտ ուղղակիորեն նշվում են կոնկրետ հանցակազմերում, քանի որ անմիջականորեն ազդում են արարքի քրեաիրավական որակման վրա: Երկրորդները հաշվի են առնվում միայն այն դեպքերում, երբ էական ազդեցություն են ունենում արարքի հանրային վտանգավորության աստիճանի վրա: Այս իմաստով գրեթե բոլոր քրեագետները հանցագործության կատարման եղանակը, տեղը, ժամանակը, իրադրությունը, գործիքներն ու միջոցները դասում են օբյեկտիվ կողմի ֆակուլտատիվ հատկանիշների թվին: Ինչ վերաբերում է մյուս հատկանիշներին, ապա դրանց վերաբերյալ գիտնականների կարծիքները տարբերվում են:

<sup>4</sup> Տե՛ս Жордания И.Ш. Структура и правовое значение способа совершения преступления – Тбилиси, Сабочота Сакартвело – С. 56

<sup>5</sup> Տե՛ս Кудрявцев В.Н. Նշված աշխատություն՝ էջ 9

Վ.Բ. Մալինինը, գրում է. «հակահրավակա- կան հանցագործությունը գործողություն է, որը սերտ կապի մեջ է գտնվում տարածու- թյան և ժամանակի հետ, ընդգրկում է մար- դու վարքագիծը, մարդու կողմից շարժի բերված բռնության ուժերի գործողություն- ները, և արտաքին աշխարհում և հասարա- կական հարաբերություններում կատար- ված փոփոխությունները: Ընդ որում գործո- ղությունը համարվում է մարդու վարքագծի արձանագրություն, որը պայմանավորված է շրջապատող միջավայրի վրա նրա ներգոր- ծությամբ»<sup>6</sup>:

Կարելի է առանձնացնել վերոհիշյալ հարցի լուծման շուրջ ձևավորված հետևյալ երկու հիմնական մոտեցումները: Դրանցից առաջինի էությունն այն է, որ օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշների թվին են դասվում՝ հանրորեն վտանգավոր արարքը, հանցավոր հետևանքները, և պատճառա- կան կապը արարքի և հետևանքների միջև (Գ.Ա. Կրիգեր, Մ.Ի. Կովալյով և ուրիշներ): Երկրորդ մոտեցման կողմնակիցների կար- ծիքով հանցագործության օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է միայն հանցավոր արարքը (գործողությունը կամ անգործողու- թյունը), իսկ մյուս բոլոր հատկանիշները, այդ թվում նաև հետևանքները և պատճա- ռական կապը, պետք է դիտել որպես ֆա- կուլտատիվ հատկանիշներ (Վ.Ե. Մելնիկո- վա, Ա.Վ. Նաումով և ուրիշներ):

«Ֆիզիկական, գործադիր տեսանկյու- նից,- գրում է Ն.Ի. Պանովը,- հանցագործ արարքը կարելի է բնութագրել տարբեր կերպ: Մի դեպքում այն կը մեջ ընգրկում է վարքի հասարակ տարատեսակներ և դրսևորումներ, այլ դեպքերում կազմված է մի քանի դրսևորումներից, որոնցից յուրա- քանչյուրը համապատասխան պայմաննե- րում կարող է ճանաչվել որպես ինքնուրույն գործողություն»<sup>7</sup>:

Այսպիսով, կարող ենք նշել, որ բոլոր հանցակազմների համար, որպես պարտա-

դիր հատկանիշ կարող է հանդես գալ մի- այն հանրորեն վտանգավոր արարքը (գործողությունը կամ անգործողությու- նը): Իսկ հանցագործության օբյեկտիվ կողմի մյուս հատկանիշները՝ հանցավոր հետևանքները, պատճառական կապը հանցավոր արարքի և հետևանքի միջև, ինչպես նաև եղանակը, տեղը, ժամանա- կը, իրադրությունը, գործիքներն ու միջոց- ները, ֆակուլտատիվ են (ոչ պարտադիր):

Գ.Վ. Տիմեյկոն գրում է. «Օրենքով պաշտպանվող օբյեկտի վրա ֆիզիկական ներգործությունը համարվում է հանցավոր վարքի առավել տարածված օբյեկտիվ ձև: Քրեական օրենսգրքի հատուկ մասում նշ- ված հանցագործությունների ընդհանուր թվաքանակի ավելի քան 90%-ը իրակա- նացվում է ֆիզիկական ներգործության մի- ջոցով»<sup>8</sup>:

Այն միշտ պայմանավորված է տուժողի վրա ակտիվ ֆիզիկական ներգործությամբ (մեղադրյալը կրակոց է կատարում, պայ- թյուն է իրականացնում, պատճառում է դա- նակի վնասվածք և այլն): Բնութագրելով հանրավտանգ ոտնձգությունը որպես անհ- րաժեշտ պաշտպանություն՝ Բ.Վ. Սիդորովը նշում է, որ հարձակումը որպես ագրեսիվ վարքագծի գործընթաց, սկսում է այն պա- հից, երբ իրական վտանգ է ստեղծվում օրենքով պաշտպանվող գոյի իրական շա- հերի համար: «Այդ վտանգը պետք է առար- կայացվի որպես իրականություն, հստակ արտացոլվի հարձակվողի կոնկրետ գործո- ղություններում, որոնք ընդգծում են նրա գործողությունների ագրեսիվությունը»<sup>9</sup>:

Իսկ Մ.Վ. Տուրեցկու կարծիքով, առան- ձին դեպքերում անգործությամբ նույնպես կարող են կատարվել ահաբեկչության գոր- ծողություններ<sup>10</sup>:

Նշենք նաև, որ նույնիսկ այն դեպքերում, երբ օբյեկտիվ կողմի որոշ հատկանիշներ պարտադիր չեն համապատասխան հան-

<sup>6</sup> Տե՛ս Малинин В.Б. Парфенов А.Ф., Объективная сторона преступления – СПб Изд-во Юрид. инст-та 2004 – С. 49

<sup>7</sup> Տե՛ս Панов Н.И. Способ совершения преступления и уголовная ответственность – Харьков: Висшая школа, изд-во Харьковск ун-та 1982, С. - 11

<sup>8</sup> Տե՛ս Тимейко Г.В. соч. – С. 48

<sup>9</sup> Տե՛ս Уголовное право России, общая часть: учебник для вузов/под ред. Ф.Р. Сундурова – С. 336

<sup>10</sup> Տե՛ս Турецкий М.В. Особо опасные государственные преступления – М; Изд-во Московск. Ун-та 1965 – С. 25-26

ցակազմի համար, դրանք այնուամենայնիվ, շատ կարևոր իրավական նշանակություն ունեն և հաճախ կարող են էականորեն ազդել նշանակվող պատժի բնույթի և չափի վրա, ինչպես նաև հանդես գալ որպես պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:

Ամիրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործով հանցագործության օբյեկտիվ կողմի բոլոր հատկանիշներն ունեն շատ կարևոր ապացուցողական նշանակություն: Դրանք բոլորն էլ կարող են հանդես գալ որպես հանցագործությունն արտաքին կողմից բնութագրող հատկանիշներ:

Այսպես ոչ մի քրեական գործ չի կարող բացահայտված համարվել, եթե, օրինակ՝ չեն պարզվել հանցագործության կատարման տեղը և ժամանակը՝ անկախ այն բանից, որ առանձին դեպքերում վերջիններս կարող են ոչ մի նշանակություն չունենալ հանցավոր արարքի որակման համար: Յետևաբար՝ հանցագործության օբյեկտիվ կողմի բոլոր հատկանիշներն էլ, անկախ քրեաիրավական առումով դրանց պարտադիր կամ ֆակուլտատիվ լինելուց, յուրաքանչյուր քրեական գործով պարտադիր պետք է մտցվեն ապացուցման առարկայի մեջ:

Ն.Ի. Պանովն առանձնացնում է հասարակական հարաբերությունների վրա ներգործելու երկու տարր. ֆիզիկական(եներգետիկ) և տեղեկատվական<sup>11</sup>:

Օրինակ՝ ֆիզիկական ներգործության հետևանք է պատգամավորի սպանությունը, որի մահը վրա է հասել գլխի ներթափանց հրազենային գնդակի կրակոցից, գլխուղեղի երկու կիսագնդերի նյութերի և թաղանթների վնասվածքների արդյունքում<sup>12</sup>:

Վ.Ն. Կուդրյավցևը գրում է, որ վնաս պատճառող «ֆորմալ» հանցագործությունների կառուցվածքի հիմքում ընկած են գլխավորապես այն դեպքերը, երբ որոշակի գործողության տեղի ունենալու պարագա-

յուն հետևանքի վրա հասնելը անխուսափելի է: Այդ հետևանքը կրում է ոչ նյութական բնույթ և դրա հաստատումը գործնականում կզուգորդվեր անհաղթահարելի դժվարություններով: «Սակայն այն փաստացիորեն գոյություն ունի, և այն հանգամանքը որ դիսպոզիցիան չի պարունակում վնասակար հետևանքների որևէ հատկանիշ, նույնպես չի վկայում դրա բացակայության մասին, ինչպես հանցագործության օբյեկտի բացակայության մասին չի վկայում այն փաստը, որ օբյեկտը չի նշվում քրեաիրավական նորմերում»<sup>13</sup>:

Ընդ որում, ինչպես արդարացիորեն նշվում է գրականության մեջ՝ «օրենքում հատվածական կազմերում նշվում են ոչ միայն օբյեկտիվ կողմի հատկանիշները, այլև որոշակի վարքագծի հետևանքով հնարավոր վնասն ու սպառնալիքները»<sup>14</sup>:

Նշենք նաև, որ վրա հասած հանրորեն վտանգավոր հետևանքի համար, անձին քրեական պատասխանատվության ենթարկելու մասին կարելի է խոսել միայն այն դեպքում, երբ այդ հետևանքները պատճառական կապի մեջ են գտնվում տվյալ անձի կողմից կատարված հանրորեն վտանգավոր արարքի գործողության կամ անգործողության հետ: Այլ կերպ ասած, պատճառական կապի բացակայության դեպքում վրա հասած վտանգավոր հետևանքների համար, որքան էլ ծանր լինեն դրանք, քրեական պատասխանատվությունը բացառվում է: Այսինքն, քրեական իրավունքի սկզբունքային պահանջներից մեկն այն է, որ անձին հանրորեն վտանգավոր հետևանքների համար կարելի է պատասխանատվության ենթարկել միայն այն դեպքում, երբ դրանց առաջացման պատճառը նրա արարքն է:

Տ.Վ. Ծերեթելին շատ դիպուկ և ճիշտ էր ընգծում որ, «պատճառական կապը հաստատում է պատասխանատվության զուտ օբյեկտիվ սահմանը. չի կարելի քննարկել անձի հանրորեն վտանգավորությունը, եթե այդ անձի գործողությունը չի հանգեցրել որևէ հետևանքի»<sup>15</sup>:

<sup>11</sup> Տե՛ս Панов Н.И. Նշված աշխատությունը՝ էջ 16

<sup>12</sup> Տե՛ս Обвинительное заключение. //www.galina@staroboitova.ru

<sup>13</sup> Տե՛ս Кудрявцев В.Н. Նշված աշխատությունը՝ էջ 163

<sup>14</sup> Տե՛ս Уголовное право России. Общая часть: Учебник для вузов/под ред. Ф.П. Сундурова – С. 176

<sup>15</sup> Տե՛ս Церетели Т.В. Причинная связь в уголовном праве – М.: Госюриздат – С. 173

Հանրորեն վտանգավոր արարքի և հանցավոր հետևանքի միջև պատճառական կապի առկայության բացահայտումը, հնարավորություն է տալիս պատասխանելու հետևյալ կարևորագույն հարցերին. թե ու՞մ արարքն է առաջացրել տվյալ հանցավոր հետևանքը (հետևանքները և, հետևաբար, այն ու՞մ պետք է մեղսագրվի):

Այսպես Վ.Ն. Կուդրյավցևը պատճառական կապը բնորոշում է որպես «երևույթների միջև այնպիսի հարաբերություն, որի դեպքում մեկ կամ մի քանի փոխներգործող երևույթներ (պատճառ) շարունակվում է մեկ այլ երևույթ (հետևանք)»<sup>16</sup>:

Պատճառը փիլիսոփայական կատեգորիա է, որը բնության և հասարակության մեջ տեղի ունեցող երևույթների և գործընթացների համընդհանուր օբյեկտիվ կապի փոխադարձ կախվածության և պայմանավորվածության ձևերից մեկն է: Պատճառը օրինաչափ մի երևույթ է, որը ներքին անհրաժեշտությամբ առաջացնում է որպես հետևանք դիտարկվող մեկ այլ երևույթ:

Վ.Ն. Նիկիֆորովը նշում է, որ եթե հանցագործության օբյեկտը համարվում է անձի օրենքով ապահոված որոշակի վիճակը, ապա այդ օբյեկտի նկատմամբ ոտնձգության հետևանք է համարվում այս կամ այն գործողության դադարեցումը (օրինակ՝ սպանության դեպքում՝ կյանքի ընթացքը) կամ հայտնի վիճակի խախտումը (օրինակ՝ առողջությանը վնաս հասցնելու դեպքում՝ հենց առողջական վիճակը)<sup>17</sup>:

Հանցագործության կատարման համար կարևոր նշանակություն ունեն մահ գործիքներն ու միջոցները: Հանցագործության կատարելու միջոց ասելով՝ Ի.Շ.

Ժորդանիան հասկանում է՝ «միջոցների և նյութական ուժերի որոնումը, հայտնաբերումը, կիրառումն ու գործածումը, որոնց միջոցով և որոնց պատճառով առաջանում են հանցագործության հետևանքները»<sup>18</sup>:

Հանցագործության գործիքներն ու միջոցներն այն սարքերն ու հարմարանքներն են, որոնց օգնությամբ կատարվել է հանցավոր արարքը: Ն.Ի. Պոնոպլը գրում է, որ հանցագործության իրականացման միջոցը ամենից առաջ հանցագործ արարքին բնորոշ է որպես անձի ակտիվ, կամային, հանրավտանգ արարք: Դա վկայում է այն մասին, թե ինչպես անձը կարող է կատարել հանրավտանգ գործողություն, ինչպիսի հնարքներ, մեթոդներ և միջոցներ է կիրառում դրա համար<sup>19</sup>:

Հանցավորի կողմից այս կամ այն միջոցի գործածումը կարող է էականորեն ազդել արարքի հանրային վտանգավորության աստիճանի վրա: Այն դեպքերում, երբ համապատասխան գործիքներն ու միջոցները մեծացնում են հանցագործության հանրային վտանգավորությունը, դրանք օրենսդրի կողմից մտցվում են հանցակազմի օբյեկտիվ կողմի հատկանիշների մեջ: «Միջոցը՝ որպես հանցագործության օբյեկտիվ կողմ, ամնիջականորեն պատկանում է գործողությանը- նշում է Ն.Ի. Պանովը,- դրան հաջորդում է որակական որոշակիություն, ինչի հետևանքով հանցագագործ արարքը (անգործությունը) համարվում է տվյալ, և ոչ թե այլ, տիրապետում է կայուն անհատական հատկանիշների, որոնցով այն տարբերվում է այլ արարքներից»<sup>20</sup>:

<sup>16</sup> Տե՛ս Кудрявцев В.Н. Նշված աշխատություն՝ էջ 185

<sup>17</sup> Տե՛ս Никифоров В.Н. Объект преступления по советскому уголовному праву — М.: Госюриздат 1960 — С. 143

<sup>18</sup> Տե՛ս Жордания И.Ш. Նշված աշխատություն՝ էջ 56

<sup>19</sup> Տե՛ս Панов Н.И. Նշված աշխատություն՝ էջ 36

<sup>20</sup> Տե՛ս Панов Н.И. Նշված աշխատություն՝ էջ 117

# Մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից մարդուն առևանգելը

## Գուրգեն ՔՈԹԱՆՁՅԱՆ

ԵՊՀ քրեական իրավունքի և կրիմինալիստիկայի ամբիոնի հայցորդ

*Մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ հանցագործության կատարումը հանցակցության ձևերից է: ՀՀ քր. օր. հոդվ. 37-ի համաձայն՝ հանցակցություն է համարվում երկու կամ ավելի անձանց դիտավորյալ համատեղ մասնակցությունը դիտավորյալ հանցագործությանը:*

*Բացի այդ, որպեսզի քննարկվող ծանրացնող հանգամանքը առկա լինի, անհրաժեշտ է, որ հանցագործության կատարմանը մասնակցեն տվյալ հանցագործության սուբյեկտ հանդիսացող առնվազն երկու անձ: Ըստ քր. օր. հոդված 41-ի 2-րդ մասի՝ հանցանքը համարվում է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված, եթե դրան մասնակցել են այնպիսի համակատարողներ, ովքեր նախապես մինչև հանցագործությունն սկսելը պայմանավորվել են հանցանքը համատեղ կատարելու մասին: Այստեղից հետևում է, որ այս ծանրացնող հանգամանքի առկայության երկրորդ պայմանը համակատարողների՝ նախապես պայմանավորված լինելու հանգամանքն է: Այսինքն, մինչև հանցանքը սկսելը կատարողները պետք է համաձայնություն կայացնեն հանցագործությունը համատեղ կատարելու վերաբերյալ: Իսկ, եթե հանցավորը հանցագործությանը միանում է հանցավորձի փուլում, ապա նրա արարքում ուսումնասիրվող ծանրացնող հանգամանքը բացակայում է:*

Մի քանի անձանց կողմից հանցանք կատարելիս նրանց ջանքերը համատեղվում են, գործողությունները ուղղվում են հանցավոր արդյունքին հասնելուն: Այդ դեպքում, որպես կանոն, պատճառվում է ավելի մեծ վնաս, քան այն դեպքում, երբ հանցագործը գործեր միայնակ: Սա հատկապես վերաբերում է բռնությամբ կատարվող հանցագործություններին, այդ թվում նաև մարդու առևանգմանը: Ակնհայտ է, որ միայնակ՝ չափահաս մարդուն առևանգելը բավականին բարդ կամ նույնիսկ անհնար է: Իրավաբանական զրականության մեջ այս կապակցությամբ նշվել է, որ իրենց գործողությունները միավորելու միջոցով հնարավոր է կատարել այնպիսի հանցագործություններ, որոնք կամ ընդհանրապես չէին

կարող իրականացվել առանց այլ անձանց մասնակցության, կամ դրանք միայնակ կատարելը էականորեն բարդ կլիներ<sup>1</sup>: Դա է պատճառը, որ գրեթե չեն հանդիպում դեպքեր, երբ առևանգումը կատարվում է միայնակ: Այս ծանրացնող հանգամանքը ենթադրում է, որ խմբի մասնակիցները պետք է կատարեն հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող գործողությունները ամբողջությամբ կամ դրա մի մասը: Ուստի չափազանց կարևոր է ճշգրիտ սահմանել այն գործողությունները, որոնք մտնում են դիտարկվող հանցագործության օբյեկտիվ կողմի մեջ: Ինչպես հայտնի է առևանգումը ներառում է տուժողին տիրանալու, տեղափոխելու և պահելու հետ կապված գործողությունները: Այստեղից

<sup>1</sup> Տե՛ս. Владимиров В. А. Квалификация похищение личного имущества. М., 1974, էջ 177:

հետևում է, որ խմբի անդամի կողմից այս գործողություններից որևէ մեկի կատարումը, հանգեցնում է այս հանցագործության կատարմանը:

Կարևոր է նաև պարզել խմբի անդամներից յուրաքանչյուրի մասնակցության ծավալը, որպեսզի հնարավոր լինի ճիշտ որակել նրանցից յուրաքանչյուրի արաքը: Լինում են դեպքեր, երբ անձը իմանալով սպասվող առևանգման մասին՝ տալիս է իր համաձայնությունը, լինում է հանցագործության կատարման վայրում, բայց չի մասնակցում առևանգման կատարմանը: Որոշ դեպքերում դատարանը այդ արարքը սխալմամբ որակում է որպես առևանգում:

Քննարկենք դատական պրակտիկայից մի դեպք:

2009թ. Հոկտեմբերին Ա. Գրիգորյանը առաջարկում է Ա. Գևորգյանին, որ ևս երկու հոգու՝ Ս. Գալստյանի և Ա. Գինոսյանի հետ առևանգեն իր սիրած աղջկան՝ Լ. Գինոսյանին: Գևորգյանը տալիս է իր համաձայնությունը: 2009թ. հոկտեմբերի 20-ին Կիլիկիա ավտոկայանում Գրիգորյանը մոտենում է Լ. Գինոսյանին, երկու

ծեռքով գրկում է նրան և նրա կամքին հակառակ տեղափոխում է շուրջ 15մ հեռավորության վրա գտնվող Ա. Գինոսյանին պատկանող մեքենայի մոտ: Տուժողը պահանջում է բաց թողնել իրեն,

սակայն Գրիգորյանը բացելով մեքենայի հետևի դուռը, նրան նստեցնում է հետևի նստարանին: Վարորդի տեղում նստած է եղել տուժողի հեռավոր ազգական Ա. Գինոսյանը, իսկ նրա կողքին նստած է եղել Ա. Գևորգյանը: Հետևի նստարանին եղել են տուժողը, Ա. Գրիգորյանը և Ս. Գալստյանը: Երբ ավտոմեքենան հասել է Օպերայի շենքի մոտ, տուժողի բջջայինին զանգահարել է վերջինիս հայրը, բայց Ա. Գրիգորյանը թույլ չի տվել նրան խոսել՝ վերցնելով բջջային հեռախոսը անջատել է այն և փոխանցել է առջևում նստած Ա. Գևորգյանին: Նրանք բոլորը միասին մեքենայով եկել են Ազատության պողոտայի թիվ 11 շենքի բակ: Բացի տուժող Լ. Գինոսյանից բոլորը իջել են ավտոմեքենայից:

Դատարանը Ա. Գևորգյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քր. օր. 131 հոդվ. 2-րդ մասի

1-ին կետով: Սակայն դատարանը հաշվի առնելով հանցագործության մեջ հանցավորի պասիվ դերը, որն արտահայտվել է հանցագործության կատարման մասին նախնական համաձայնության գալով և հանցագործությունը կատարելիս տուժողի հեռախոսը Ա. Գրիգորյանից վերցնելով, որոշել է նրա նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառել<sup>2</sup>:

Սակայն, մեր կարծիքով, դատարանը ճիշտ չի կողմնորոշվել ամբաստանյալի արարքը գնահատելու հարցում: Ամբաստանյալը չի կատարել առևանգման օբյեկտիվ կողմը կազմող որևէ գործողություն: Հանցագործության կատարմանը համաձայնություն տալը և տուժողի հեռախոսը Ա. Գրիգորյանից վերցնելը չեն մտնում քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմի մեջ: Իսկ եթե դատարանը հանցագործության կատարման վերաբերյալ համաձայնություն տալը համարել է նախապես խոստացված պարտական, ապա ամբաստանյալի նկատմամբ պատասխանատվություն սահմանելիս պետք է հղում անել հոդվ. 38-ին, այսինքն ամբաստանյալը

**«...Կարևոր է նաև պարզել խմբի անդամներից յուրաքանչյուրի մասնակցության ծավալը, որպեսզի հնարավոր լինի ճիշտ որակել նրանցից յուրաքանչյուրի արաքը...»**

պետք է պատասխանատվություն կրեր ոչ թե որպես հանցագործության կատարող, այլ՝ որպես օժանդակող: Չնայած, մեր կարծիքով, հանցագործությունը կատարելու կապակցությամբ համաձայնության գալը չի կարող համարվել որպես նախապես խոստացված պարտական: Գիշտ է, Ա. Գևորգյանը հանցագործության կատարմանը համաձայնություն տալով՝ փաստորեն խոստում է տվել չհայտնել հանցագործության կատարման մասին, սակայն, ինչպես արդարացիորեն նշվում է գրականության մեջ՝ նախապատրաստվող հանցագործության մասին չհայտնելու վերաբերյալ նախապես տրված խոստումը պարտական չէ, քանի որ օժանդակության հասկացության մեջ հանցագործության մասին չհայտնելու խոստումը չի ընդգրկվում<sup>3</sup>:

Մեր կարծիքով, ամբաստանյալի արարքը

<sup>2</sup> Տե՛ս. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի N 0054/01/10 դատավճիռ:

<sup>3</sup> Տե՛ս. ՀՀ քրեական իրավունք: Ընդհանուր մաս: Երևանի պետ. համալս. եր., 2003, էջ 280:

անհրաժեշտ է որակել ՀՀ քր. օր. հոդվ. 335-ով, որը պատասխանատվություն է սահմանում հաստատապես հայտնի նախապատրաստվող ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մասին չհայտնելու համար: Իսկ ըստ ՀՀ քր. օր. հոդվ. 19-ի 4-րդ մասի՝ քննարկվող արարքը հանդիսանում է ծանր հանցագործություն:

Բացի այս, կարող է ստեղծվել այնպիսի իրավիճակ, երբ անձը չի գիտակցում, որ

ղությունները կատարող երկու անձանցից մեկը հանդիսանում է հանցագործության սուբյեկտ չհանդիսացող անձ, ապա արաքը նույնպես ենթակա է որակման որպես խմբի կողմից կատարված հանցագործություն<sup>5</sup>:

Բերված տեսակետը իրավացիորեն քննադատության է ենթարկվել տեսաբանների և պրակտիկ աշխատողների մեծամասնության կողմից: Նրանք որպես հիմնավորում նշում են, որ և՛ անմեղսունակները, և՛ քրեական պատասխանատվության համար օրենքով սահմանված տարիքին չհասած անձինք հանցագործության սուբյեկտներ չեն: Ուստի նրանց կատարած արաքները հանցագործություն չեն համարվում՝ անկախ տվյալ հանցագործության կատարման մեջ նրանց ունեցած դերից, հետևաբար նրանք հանցակիցներ համարվել չեն կարող: Եվ եթե չկա հանցակցություն, ապա չկա համակատարում՝ այդ թվում նաև հանցավոր խումբ<sup>6</sup>: Այդ պատճառով պետք է փաստել, որ հանցագործությունը համարվում է խմբի կողմից կատարված, եթե դրա օբյեկտիվ կողմը կազմող գործողությունները համատեղ կատարել են մեկից ավելի մեղսունակ, տվյալ հանցագործության համար քրեական պատասխանատվության տարիքի հասած ֆիզիկական անձինք:

**«...Կայունությունը, որը բնորոշ է կազմակերպված խմբին, հիմնական հատկանիշն է, որով այն տարբերվում է նախնական համաձայնությամբ գործող անձանց խմբից...»**

հանցագործության կատարմանը մասնակցում են նաև այլ անձինք: Այս դեպքում այդ անձի արարքը չի կարող որակվել որպես մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված, նույնիսկ այն դեպքում, երբ հանցավորը նշված հանգամանքը իրեն հայտնի դառնալուց հետո շարունակում է իր գործողությունները: Ամեն դեպքում, այս հանգամանքը կարող է դիտարկվել որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք (ՀՀ քր. օր. հոդվ. 63): Եթե հանցագործների նախնական պայմանավորվածության փաստը չի հաստատվում նախաքննության ընթացքում կամ դատարանում, ապա նրանց գործողությունները ենթակա են վերաորակման համապատասխան հոդվածի 1-ին մասով, եթե նրանց արարքում չկան այլ ծանրացնող հանգամանքներ: Հանցակցության ձևի ոչ ճիշտ սահմանումը կարող է հանգեցնել դատական սխալի<sup>4</sup>:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թե ինչպես որակել արաքը, երբ հանցագործության կատարմանը մասնակցած երկու անձանցից մեկը եղել է քրեական պատասխանատվության տարիքի չհասած կամ անմեղսունակ անձ: Նման դեպքում առկա՞ է հանցակցություն, թե՞ ոչ: Որոշ տեսաբաններ նշում են, որ եթե հանցագործության օբյեկտիվ կողմին վերաբերող գործո-

նքները հանցագործության կատարման մեջ նրանց ունեցած դերից, հետևաբար նրանք հանցակիցներ համարվել չեն կարող: Եվ եթե չկա հանցակցություն, ապա չկա համակատարում՝ այդ թվում նաև հանցավոր խումբ<sup>6</sup>: Այդ պատճառով պետք է փաստել, որ հանցագործությունը համարվում է խմբի կողմից կատարված, եթե դրա օբյեկտիվ կողմը կազմող գործողությունները համատեղ կատարել են մեկից ավելի մեղսունակ, տվյալ հանցագործության համար քրեական պատասխանատվության տարիքի հասած ֆիզիկական անձինք:

ՀՀ քր. օր. հոդվ. 131-ի 3-րդ մասի 1-ին կետը պատասխանատվություն է սահմանում կազմակերպված խմբի կողմից մարդուն առևանգելու համար: Ըստ ՀՀ քր. օր. հոդվ. 41-ի 3-րդ մասի՝ հանցանքը համարվում է կազմակերպված խմբի կողմից կատարված, եթե դա կատարվել է այնպիսի անձանց կայուն խմբի կողմից, ովքեր նախապես միավորվել են մեկ կամ մի քանի հանցանքներ կատարելու համար: մի կայունության հիմնական հատկանիշներն են՝ նախնական պայմանավորվածությունը, կազմակերպվածության բարձր աստիճանը, դերերի հստակ բաշխումը: Նշված հատկանիշները, որպես կանոն, տույլ են տալիս հանցագործներին տևական ժամանակ զբաղվել հանցավոր գոր-

<sup>4</sup> Տե՛ս. Быков В.М., олесникова Т.В. Организованная группа вымогателей // Следователь.- 2000, N4. էջ 12:  
<sup>5</sup> Տե՛ս. Попов А.Н. Убийство при отягчающих обстоятельствах. СПб. 2003, էջ 574:  
<sup>6</sup> Տե՛ս. Թամազյան Ա. Մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից կատարված սպանությունը: Օրենք և իրականություն, #1, հունվար, 2008թ., էջ 3:  
<sup>7</sup> Տե՛ս. Организованная преступность / Под ред. А. И. Долговой, С. В. Дьякова. М. 1989, էջ 18:

ծունեությամբ և մնալ անպատիժ<sup>7</sup>: Խմբի կայունության վերաբերյալ արտահայտվել են նաև այլ կարծիքներ: Մի խումբ քրեագետների կարծիքով կայունության մասին կարող է վկայել խմբի գոյության երկարատևությունը, խմբի անդամների և հանցավոր գործունեության մեթոդների անփոփոխ բնույթը, անորոշ թվով կամ երկարատև պատրաստություն պահանջող մեկ հանցագործության կատարման պատրաստակամությունը<sup>8</sup>:

Քրեագետների մեկ այլ խմբի կարծիքով կազմակերպված խումբը, որպես կանոն, ունենում է ղեկավար (կազմակերպիչ), որը կորդինացնում է խմբի գործողությունները, ընտրում է հանցակիցներին, իրականացնում է դերերի բաշխումը, պլանավորում է հանցագործությունների կատարումը, միջոցառումներ է ձեռնարկում հանցանքը թաքցնելու ուղղությամբ<sup>9</sup>:

Էական նշանակություն ունի մի խումբ անձանց և կազմակերպված խմբի կողմից կատարված արարքների սահմանազատումը: Կայունությունը, որը բնորոշ է կազմակերպված խմբին, հիմնական հատկանիշն է, որով այն տարբերվում է նախնական համաձայնությամբ գործող անձանց խմբից:

Իրավազետների շրջանում ձևավորված չէ միասնական մոտեցում կազմակերպված խմբի կողմից կատարված արարքների որակման կանոնների վերաբերյալ: Ոմանք գտնում են, որ արարքի որակման ժամանակ որևէ նշանակություն չունի այն կոնկրետ դերը, որը կատարել է հանցագործության մասնակիցը: Անկախ դրանից՝ հանցագործության մասնակիցը կազմակերպիչ է, օժանդակող, թե կատարող՝ բոլոր մասնակիցները համարվում են համակատարողներ<sup>10</sup>:

Մյուսների կարծիքով կազմակերպված խմբի անդամներ կարող են լինել միայն հանցագործության համակատարողները<sup>11</sup>:

Մենք գտնում ենք, որ իրավացի են երկրորդ մոտեցման կողմնակիցները, քանի որ նրանց տեսակետը բխում է օրենքի ձևակերպումից: ՀՀ քր. օր. հոդվ. 41-ի համաձայն՝ հանցանքը համարվում է կազմակերպված

խմբի կողմից կատարված, եթե դա կատարվել է այնպիսի անձանց կայուն խմբի կողմից, ովքեր նախապես միավորվել են մեկ կամ մի քանի հանցանքներ կատարելու համար: Օրենքում ուղղակիորեն նշված է «կատարել» բառը, այսինքն առնվազն երկու հոգի պետք է իրականացնեն հանցագործության օբյեկտիվ կողմը ամբողջությամբ կամ մասնակիորեն: Բացի այդ, ինչպես արդարացիորեն նշվել է գրականության մեջ, կազմակերպված խումբը նախնական համաձայնությամբ գործող խմբից տարբերվում է ընդամենը կայունության հատկանիշով, այդ իսկ պատճառով արարքի որակման կանոնների տարբերություն չի կարող լինել<sup>12</sup>:

Որոշակի դժվարություն է առաջացնում, թե ինչպես պետք է որակել կազմակերպված խմբի անդամների գործողությունները, եթե կազմակերպված խումբը ստեղծվել է որոշակի հանցագործություններ կատարելու համար, սակայն կատարել է այլ հանցագործություններ: Մեր կարծիքով, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, թե ինչ տեսակի հանցագործություններ կատարելու համար է ստեղծվել խումբը, այսինքն՝ ինչպիսի հասարակական հարաբերությունների դեմ են ուղղված այդ խումբի կատարած հանցագործությունները: Փաստորեն, կարևոր է պարզել ստեղծված խմբի կատարած կամ կատարելիք հանցագործությունների ոտնձգության օբյեկտը: Եթե խումբը ստեղծվել է այնպիսի հանցագործություններ կատարելու համար, որոնց օբյեկտը հանընկնում է մարդուն առևանգելու հիմնական անմիջական կամ լրացուցիչ անմիջական օբյեկտի հետ, ապա այդ խմբի կողմից մարդ առևանգելու դեպքում, արարքը պետք է որակել հոդված 131-ի 3-րդ մասի 1-ին կետով: Օրինակ՝ եթե կազմակերպված խումբը ստեղծվել է սպանություններ կատարելու համար, մարդ առևանգելու դեպքում արարքը կորակվի հոդված 131-ի 3-րդ մասի 1-ին կետով, իսկ գողություններ կատարելու համար ստեղծված խմբի կողմից մարդ առևանգելու դեպքում, արարքը պետք է որակել որպես հասարակ առևանգում:

<sup>8</sup> Տե՛ս. Кондрашова Т. В. Проблемы Уголовной ответственности за преступление против жизни, здоровья, половой свободы и половой неприкосновенности. Екатеринбург, 2000, էջ 25:

<sup>9</sup> Տե՛ս. Андреева Л. А. Квалификация убийств, совершенных при отягчающих обстоятельствах. М. 1989, էջ 24:

<sup>10</sup> Տե՛ս. Андреева Л. А. Квалификация убийств совершенных при отягчающих обстоятельствах.- СПб. 1998. էջ 27:

<sup>11</sup> Տե՛ս. Кругликов Л. Л. Преступление против личности. Ярославль. 1998, էջ 25:

<sup>12</sup> Տե՛ս. Թամազյան Ա. Մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից կատարված սպանությունը: Օրենք և իրականություն: #3, մարտ, 2008թ., էջ 7:

# ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՍԿԱՅՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ

## Պատմատեսական վերլուծություն

### Յուրի ԴՈՒԿԱՍՅԱՆ

ԳՀ ԳԱԱ փիլիսոփայության,  
սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

*Գիտության մեջ իրավունքը օգտագործվում է չափազանց լայնորեն թե՛ իրավագիտության, թե՛ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և անտրոպոլոգիայի մեջ<sup>1</sup>:*

*Շատ գիտնականներ այն օգտագործում են հասարակության մեջ դոմինանտ հանդիսացող ցանկացած նորմատիվային համակարգի նկատմամբ: Դա հատկապես դրսևորվում է համեմատական իրավագիտության մեջ, որը հիմնականում ձևավորվել է 19-րդ դարի երկրորդ կեսին իրավաբանական պոզիտիվիզմի և մասամբ իրավունքի պոզիտիվիստական սոցիոլոգիայի շրջանակներում:*

*Դրանց մեթոդաբանությունը բավականին արդյունավետ է եվրոպական քաղաքակրթության երկրների զարգացած իրավական համակարգերն ուսումնասիրելիս, սակայն հանգեցնում է միանգամայն վիճելի եզրակացությունների այլ քաղաքակրթությունների նորմատիվային համակարգերի դեպքում: Ռ. Դավիդը դրան ուշադրություն է դարձնում, սակայն, ինչպես ինքն է գրում, նախընտրում է չբանավիճել պոզիտիվիզմի և բնական իրավունքների կողմնակիցների հետ<sup>2</sup>: Հիրավի, նման բանավեճը հին արմատներ ունի եվրոպական իրավագիտության մեջ և դրա շրջանակներում ձեռք է բերում ձանաչողական իմաստ: Սակայն եվրոպացիներին բնորոշ եվրոպակենտրոնությունը հանգեցնում է նրան, որ նրանք հակված են սովորական հասկացություններն օգտագործել այլ մշակույթներ ուսումնասիրելիս:*

Նորմատիվային պլուրալիզմը բնորոշ է ցանկացած հասարակության: Ընդ որում, դրանում գոյություն ունեցող նորմատիվային համակարգերը կարող են կրել թե՛ կոմպլեմենտար, թե՛ մրցակցային բնույթ: Բայց, որպես կանոն, եթե հասարակությունը չի գտնվում քաոսի կամ անոմիայի վիճակում, նրանցից մեկը «առաջնորդում է» մյուսին, որն ապահովում է սոցիալական համերաշխություն, այսինքն՝ իրականացնում է ինտեգրատիվ գործառույթ: Այդպիսին կարող է լինել ոչ միայն իրավական համակարգը, այլև ավանդական, բարոյական, կրոնական, գաղափարաբանական համակարգը և

այլն: Իսկ իրավական համակարգի դոմինանտությունը բնորոշ է արևմտյան քաղաքակրթության հասարակություններին: Ասվածը չի նշանակում, որ իրավունքը զուտ եվրոպական երևույթ է, այլ նշանակում է, որ իրավունքի պահանջն առաջանում է այնտեղ, որտեղ ձևավորվում են այս կամ այն չափանիշներով իրար նման սոցիալական և մշակութային պայմաններ:

Եվրոպական քաղաքակրթության մեջ իրավունքը՝ որպես գաղափար և սկզբունքների ու նորմերի համակարգ, ձևավորվել է պատմական երկար ժամանակահատվածում՝ անտիկ ժամանակներից մինչև մեր

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս Золкин А.Л. Философия права. М., 2012; Роберт Алекси. Понятие и действительность права. М., 2011.

<sup>2</sup> Տե՛ս Рене Давид, Камилла Жоффре-Спинози. Основные правовые системы современности. М., 2009, с.24-25.

օրերը<sup>3</sup>: Ու թեև այդ գործընթացը դժվար է համարել ավարտված, հիմքեր կան ամփոփելու որոշակի արդյունքներ և ցույց տալու հենց իրավական համակարգի յուրատիպությունը: Դրա ակունքները գտնվում են անտիկ Յունաստանում, որը աշխարհին տվել է իրավունքի փիլիսոփայություն և Յռոնում, որը ստեղծել է մասնավոր իրավունքի մշակված համակարգ: Այդ ժամանակների Արևելքի ու Արևմուտքի միջև կարելի է գտնել բազմաթիվ զուգահեռներ, որոնք կապված են նրա հետ, որ պետությունն ու հասարակությունը դեռ չէին առանձնացել և գոյություն ունեին համընդհանուր բնական օրենքի (Դաո՝ Չինաստանում, Լոգոս՝ Յունաստանում) առկայության մասին համոզմունք: Բայց արդեն այն ժամանակ նկատվում էր սոցիալական կազմակերպման սկզբունքների նկատմամբ մոտեցումների տարբերություն: Արևելքում առաջատար սկզբունք է պատերձալիզմը, որը կարգավորում է անհավասարների վարքը, քանի որ չեն կարող հավասար լինել մեծերն ու փոքրերը, բարձրերն ու ցածրերը: Անտիկ հասարակության մեջ ուժեղ էր նաև կոլեկտիվիզմի ոգին: Սակայն անտիկ կոլեկտիվը, հունական պոլիսն ու հռոմեական սիվիտասը բոլորի համար ընդհանուր չափանիշի հիման վրա հավասարների շփում էր: Ուստի հունահռոմեական ավանդույթում պետությունը ժողովրդի գործն է՝ *res publicae*: Նման պետության մեջ զնահատվում է քաղաքացիական անձնավորությունը, որը ներառում է նաև օրենքների նկատմամբ հարգանքը:

Այս առումով տարբեր կերպ էր ընկալվում բարոյականության (բնական իրավունք) և պոզիտիվ իրավունքի հարաբերակցությունը:

Արևելյան մշակույթին բնորոշ է դրանց հակադրումը որպես բարի և չար: Օրենքն ընկալվում էր որպես արտաքին ինչ-որ բան, որը պարտադրվում է մարդկանց: Ուստի այն կամ վնասակար է, ինչպես Կոնֆուցիուսի մոտ է, քանի որ մարդը իր էության բարի է, կամ ինչպես Սյուն Յանի մոտ է, անհրաժեշտ է իրենց էության բարի մարդկանց արատները սանձելու համար<sup>4</sup>:

Իսկ անտիկ ավանդույթներում բարոյա-

կանությունն ու պոզիտիվ իրավունքը միավորվում են ընդհանուր արդարությամբ: Նրանց միջև կոնֆլիկտը հնարավոր է, բայց ոչ կանխորոշված: Առանձին անարդար օրենքներ հնարավոր են, բայց օրենքի վրա հիմնված կարգը էության բարդ է: Օրենքով ապրել մշանակում է արդար ապրել:

Այսպիսով, թե՛ պոզիտիվ, թե՛ բնական իրավունքները իրենցից ներկայացնում են բարոյագիտական արժեք՝ ապահովելով հավասարություն, ազատություն, կարգ և արդարություն: Իրավունքը չի դիտվում որպես մարդուն պարտադրված արտաքին ինչ-որ բան, այլ դիտվում է որպես բնական էակին հատուկ մի բան: Այստեղից էլ՝ իրավունքին ենթարկվելը, օրենքը կատարելը համարվում է բարոյական պարտք:

Չավասարության սկզբունքը թերևս հիմնական է անտիկ իրավահասակացության մեջ: Բայց հավասարությունը ճանաչվում է միայն կոլեկտիվի, ազատ և հավասար մարդկանց հանրույթի շրջանակներում: Եվ հենց կոլեկտիվն է հանդիսանում իրավունքի կրող և ոչ թե առանձին մարդն է, ով դեռ չի գիտակցվել որպես ինքնավար անհատ: Անհատական ազատության և համապատասխանաբար սուբյեկտիվ իրավունքի գաղափարը անտիկ դարաշրջանում չէր կարող ձևավորվել: Մարդը դառնում էր իրավունքի լիարժեք սուբյեկտ միայն քաղաքացու կարգավիճակ ստանալուց հետո: Չավասարության սկզբունքի գործողությունը բոլոր մարդկանց վրա տարածել կարողացան միայն ստոյիկները, բայց դրա համար նրանք ստիպված էին բոլոր մարդկանց ճանաչել ունիվերսալ օրենքով կառավարվող միասնական կոսմոպոլիսի քաղաքացիներ: Այս մասով ստոյիկությունը դարձավ հռոմեական իրավունքի փիլիսոփայական հիմքը:

Չավասարության սկզբունքը լրացվեց անհատի ազատության սկզբունքով և համապատասխանաբար սուբյեկտիվ իրավունքի սկզբունքով միայն Նոր ժամանակներում: Բայց դրա սոցիալական ու մշակութային նախադրյալներն ստեղծվել են ողջ միջնադարի ընթացքում: Իրավունքը շարունակվում էր ընկալվել ոչ այնքան որպես

<sup>3</sup> Տե՛ս Царьков И.И. Развитие правопонимания в европейской традиции права. СПб., 2006.  
<sup>4</sup> Տե՛ս Ударцев С.Ф. История политических и правовых учений (Древний восток). Академический курс. СПб., 2007, с. 382-383.

իշխանությունների հրաման, որքան կյանքի բացարձակ բարոյական կենսաձև: Քրիստոնեությունը որդեգրեց անտիկ շատ գաղափարներ, այդ թվում՝ բնական իրավունքի և պոզիտիվ իրավունքի միասնության գաղափարը: Արևմտյան քրիստոնեության մեջ չկա երկակի չափում՝ բարոյական և իրավական, որոնք հակադրվում են իրար: Աբվինացին միացրեց աստվածային (հավերժական), բնական և մարդկային պոզիտիվ օրենքները՝ սահմանելով դրանց ընդհանուր աղբյուրը և ընդհանուր նպատակը: Ընդ որում պետք է հաշվի առնել, որ չնայած այն հանգամանքին, որը վաղ ֆեոդալական Եվրոպայում իրավունքի գործողության ոլորտը էապես սահմանափակ էր, մի շարք գործոններ խթանել են արևմտաեվրոպական իրավական մշակույթի զարգացումը:

**«...Օրենքով ապրել նշանակում է արդար ապրել...»**

**Առաջին,** եկեղեցին և աշխարհիկ իշխանությունը երբեք չեն միաձուլվել: «Երկու սրերի» դոկտրինան խորը արմատներ է ձգել Եվրոպացիների գիտակցության մեջ: «Աստված երկու սուր է տվել երկրային թագավորությանը՝ քրիստոնեությունը պաշտպանելու համար: Պապին վերապահված է հոգևորը, կայսերը՝ աշխարհիկը», - այս խոսքերով է սկսվում Սաքսոնյան հայելին, որը կազմվել է 13-րդ դարում:

Ուստի նույնիսկ պապական հզորության ժամանակներում, որը թեպետ միանգամայն հարաբերական էր, թեոկրատիկ կառավարումը հեռանկար չուներ:

**Երկրորդ,** կարևոր դեր է խաղացել Եվրոպայում ձևավորված վասալության համակարգը, որը միայն որպես անձնական կախվածության համակարգ բնորոշելը այնքան էլ ճիշտ չէր լինի: Արևմտաեվրոպական վասալությունը տարբերվում էր անձնական կախվածության մյուս բոլոր ձևերից նրանով, որ ուներ պայմանագրային բնույթ, հանդես էր գալիս որպես իրավական հարաբերություն, որն արձանագրում էր վասալի և սյուզերենի փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները:

**Երրորդ,** իրավունքի և պարտականության փոխկապակցվածությունը որոշակի չափով առկա է նաև մոնոթիալ իրավունքում,

քում, ֆեոդալների և գյուղացիների հարաբերությունների մեջ: Բայց, ի տարբերություն «սենյորի և վասալի» միջև հարաբերությունների՝ կալվածատերերի ու գյուղացիների իրավունքների ու պարտականությունների փոխադարձությունը ձեռք էր բերվում ոչ ի շնորհիվ ծառայության անհատական երդումների կամ պայմանագրային հարաբերությունների այլ ձևերի: Այնուամենայնիվ ենթադրվում էր, որ գյուղացիների հավատարմությունը պատասխան էր կալվածատիրոջ կողմից որոշակի զիջումների գնալու պատրաստականության, որոնք ավելի վաղ նա կամ նրա նախնիները շնորհել էին, ինչպես նաև գյուղացիների խնդրանքով նոր զիջումների գնալու և ընդհանրապես գյուղացիների հետ արդար վարվելու պատրաստականության: Ինչպես վասալները, գյուղացիները նույնպես

ուներին դատական պաշտպանության իրավունք, սակայն այդ իրավունքի իրացման հնարավորությունը սահմանափակ էր:

**Չորրորդ,** քաղաքների ընդլայնմանը և ապրանքաշրջանառության մեծացմանը զուգահեռ ձևավորվել են քաղաքային և առևտրային իրավունքները: Վերջինս իր էությանը ենթադրում էր կողմերի հավասարության և փոխադարձության սկիզբ: Ինչ վերաբերում է քաղաքային իրավունքին, ապա միջնադարյան քաղաքն ընկալվում էր որպես անտիկ պոլիսի նմանակ, որպես իրավունքի հիման վրա քաղաքացիների հանրույթ, թեև իրավունքների և պարտականությունների այս կամ այն համակարգով «շնորհված» լինելը կապված էր այն հանրույթից կամ խավից, որին պատկանում էր քաղաքացին:

**Յինգերորդ,** խավերի միջև հարաբերությունները ևս չեն կրել միակողմանի բնույթ: Նրանցից յուրաքանչյուրին տրվում էին համապատասխան իրավունքներ և պարտականություններ իշխանության և մյուս խմբերի նկատմամբ և յուրաքանչյուրը հանդես էր գալիս որպես քվադրիքնավար հանրություն, որն ուներ փոխադարձության և հավասարության սկզբունքների վրա կառուցված սեփական նորմատիվային համակարգ:

Եվ այսպես, մի կողմից, իշխանության և ենթակայի ուղղահայաց հարաբերություններում գործում է կողմերի իրավունքներն

ու պարտականությունները սահմանող պայմանագիրը, մյուս կողմից՝ յուրաքանչյուր խմբի ներսում հարաբերությունները կառուցվում են փոխադարձության և հավասարության սկզբունքով: Այսպիսով, միջնադարյան հասարակությունը բավականաչափ դիֆերենցված էր, աշխարհիկ իշխանությունը սահմանափակվում էր եկեղեցով, խավերով և վերջապես բուն ժողովրդով՝ որպես իշխանության աղբյուր:

Արևմտաեվրոպացի թագավոր-սուլթանների վերածունը թագավոր-սուլթանների և բացարձակ միապետությունների ձևավորումը համահարաբերվում էր քաղաքացիական հասարակության զարգացման և, որքան էլ պարադոքսալ հնչի, խավերի ճորտությունից ազատագրման (ի տարբերություն, ասենք, ռուսական արսուլյուտիզմի) հետ, այսինքն՝ պետությունն ու հասարակությունը նույնացվում էին:

Պետական ինքնիշխանության տեսաբաններ Ժ. Բոդենի, Ի. Գրոցիուսի, նույնիսկ Թ. Չոբսի մոտ պետության ինքնիշխանության սկզբունքը պաշտպանելը չէր նշանակում ձգտել ճնշելու քաղաքացիական հասարակությունը: Ավելին, պետությունը նախատեսվում էր հասարակության կյանքում իրավունքի գործողությունն ապահովելու համար: Այսպես, Չոբսը, ով՝ բացարձակ միապետության առավել հետևողական կողմնակից էր, անընդհատ ընդգծել է պետության իշխանության անսահմանափակության նշանակությունը, բայց միաժամանակ որպես արքսիոն էր ընդունում այն պնդումը, որ նրա համընդգրկունությունը շատ հարաբերությունների վրա չի կարող տարածվել<sup>5</sup>:

Աստիճանաբար ձևավորվում է արևմտյան իրավական միասնական մշակույթ: Չնայած ռոմանոգերմանական իրավական համակարգի և ընդհանուր իրավունքի համակարգի միջև եղած հայտնի տարբերություններին նրանք հիմնվում էին սոցիալքաղաքական, տնտեսական և համապատասխանաբար նաև աշխարհայացքային միասնական հիմքերի վրա: Իրավունքը շատ բանով դիտվում էր որպես կյանքի ավանդական կարգ, որպես «բնական» մի բան, բայց միաժամանակ կարևորվում էր «պատրաստված» իրավունքի անհրաժեշ-

տությունը՝ որպես սուլթանի կամքի արտահայտում: Այս առումով եվրոպական գիտակցության մեջ արդեն դրված էր իրավաբանական պոզիտիվիզմի առաջացման հնարավորությունը: Սրան զուգահեռ ճանաչվում էր նաև որոշակի ունիվերսալ էկոմենիկ իրավունքի առկայությունը, որը վեր էր կանգնած տեղական ավանդույթներից և օրենքներից, այսինքն՝ հռոմեական իրավունքը, որը հանդես էր գալիս վերագային իդեալական իրավունք: Ուստի Արևմտյան Եվրոպան իրեն ընկալում էր որպես jus communis, որպես իրավական միասնական տարածություն: Այս պայմաններում է սկսվում եվրոպական իրավաբանական գիտության կայացումը: Այդ գործընթացի մեկնարկը կարելի է հաշվել Բուլոնյան ինստիտուտի հիմնադրումից՝ 1087 թվականից:

Գլոսատորների (հռոմեական իրավունքի մեկնաբանները) գործունեության շնորհիվ իրավագիտությունը վերածվում է գաղափարների և սկզբունքների համակարգի, համակարգային գիտության, որը իրավաբաններին տալիս է համապատասխան գործիքակազմ, ինչը թույլ է տալիս վերլուծել իրավաբանական խնդիրները: Դա վերաբերում է թե՛ մայրցամաքային Եվրոպային, թե՛ Անգլիային: Այսպես, Զ. Բրակտոնը «Անգլիայի օրենքների և սովորույթների մասին» իր տրակտատը կազմել է հիմնականում Յուստինիանոսի «Դիգեստները» մեջբերելով և մեկնաբանելով:

Որոշ գիտնականներ ենթադրում են, որ արդեն XII-XIII դարերում Եվրոպայում ձևավորվել էր իրավունքի գերակայության կամ իրավական պետության գաղափարը: Զ.Ջ. Բերմանի կարծիքով «դա **նախ** նշանակում էր, որ երկու հանրույթների՝ եկեղեցական և աշխարհիկ ղեկավարները սահմանում և պահպանում են սեփական իրավական համակարգերը, այսինքն՝ կանոնավոր ձևով հրապարակում են օրենքներ, ստեղծում են դատական համակարգեր, կազմակերպում են կառավարման ստորաբաժանումներ և ընդհանրապես ղեկավարում են իրավունքի միջոցով: **Երկրորդ**, դա նշանակում էր, որ երկու հանրույթների ղեկավարներից յուրաքանչյուրը կապված է իրավունքներով, որոնք իրենք են գործողության մեջ

<sup>5</sup> Չոբսի իրավական հայացքների մասին մանրամասն տես Козлихин И.Ю. История политических и правовых учений. Новое время: от Макиавелли до Канта. СПб., 2002, с.180-202.

դրել, նրանք կարող են օրինական ճանապարհով փոխել դրանք, բայց մինչ այդ պետք է ենթարկվեն դրանց, այսինքն՝ պետք է կառավարեն իրավունքին համապատասխան:

Իսկ **Երրորդ**, դա նշանակում էր, որ յուրաքանչյուր իրավագործություն կապված է այլ իրավագործության իրավունքով այնքանով, որքանով օրինական է այդ իրավունքը, յուրաքանչյուր պետություն գոյություն ունեւր բազմաթիվ իրավագործությունների համակարգի շրջանակներում: Վերջին նշանակությունը հիմք էր մյուս երկուսի համար: Եթե եկեղեցին ցանկանում էր ունենալ անկասելի օրինական իրավունքներ, պետությունը պետք է այդ իրավունքներն ընդուներ որպես սեփական գերակայության օրինական սահմանափակում: Նույն ձևով պետության իրավունքները հանդիսանում էին եկեղեցու գերակայության օրինական սահմանափակում: Այս երկու տերությունները կարող էին խաղաղ գոյակցել միայն իրենցից յուրաքանչյուրի նկատմամբ իրավունքի գերակայությունը փոխադարձ ճանաչելու շնորհիվ»<sup>6</sup>: Տվյալ եզրակացության մեջ կա չափազանցության որոշակի չափաբաժին, սակայն ճշմարիտ է, որ Նոր Ժամանակների իրավաբանական աշխարհայացքի զարգացման պայմաններն ստեղծվել են Միջնադարում:

Նոր ժամանակներում արևմտաեվրոպական իրավահասկացությունը համարվեց սկզբունքային կարևորություն ունեցող անձի ինքնավարության գաղափարով և համապատասխանաբար սուբյեկտիվ իրավունքի գաղափարով, ինչը Արևելքում չկար: Սուբյեկտիվ իրավունքի հասկացությունը ծանոթ չէ ոչ չինացիներին, ոչ ճապոնացիներին: Նոր ժամանակների մտածողները բնական իրավունքի աղբյուր էին տեսնում արդեն ոչ թե բնության ունիվերսալ օրենքը կամ աստվածային բանականությունը, այլ հենց մարդու բնությունը:

Բնական իրավունքի բոլոր տեսությունները ունեն մի շարք ընդհանուր գծեր: **Առաջին**, բնական իրավունքի նորմերի առկայությունը ամենևին չի բացառում պոզիտիվ իրավունքի նորմերի անհրաժեշտությունն ու արժեքը, որի աղբյուրը սուվերենի կամքն է, ով իրավունք է ստացել օրենսդրական գործունեություն վարել հա-

սարակական պայմանագրի արդյունքում: **Երկրորդ**, բնական իրավունքը ոչ այնքան դիտվում է որպես պոզիտիվ իրավունքի չափանիշ (ինչը հրատապ է դառնում հեղափոխությունների կամ արմատական բարեփոխումների շրջանում), որքան հանդես է գալիս նրա հետ մասին: **Երրորդ**, բնական իրավունքի նորմերը առավել հաճախ նույնացվում են մասնավոր իրավունքի հիմնական սկզբունքների հետ, որոնք առաջանում են որպես մասնավոր անձեր՝ մարդկանց միջև հարաբերություններում:

**Չորրորդ**, բնական և պոզիտիվ իրավունքի նորմերը հանդես են գալիս որպես որոշակի ռացիոնալ-էթիկական սկզբունքներ, որոնց հետևելը իրավունքի բանականության կամքն է: Այսպիսով, պոզիտիվ իրավունքը ստանում է բարոյական-ռացիոնալ լեգիտիմացիա:

**XIX դարի սկզբին վերջնականապես ձևավորվեցին արևմտաեվրոպական իրավական մշակույթի հիմնական գծերը, ըստ որի, մեր կարծիքով, իրավունքը ներառում է մի շարք հատկանիշներ:**

Իրավունքը համարվում է հարաբերականորեն ինքնավար նորմատիվային համակարգ, որն ունի սեփական արժեքը, բայց որը որպես համակարգ ստանում է բարոյական լեգիտիմացիա, կառուցվում է անհատների հավասարության և ազատության սկզբունքների վրա, ապահովում է սոցիալական համերաշխություն, առաջարկում է շահերի բախումների լուծման և չընդունվող վարքի կարգավորման հանդիմանուր պարտադիր մեխանիզմներ:

Բուն իրավահասկացությունը լիբերալ-ինդիվիդուալիստական է, այսինքն՝ հիմնվում է ավտոնոմ անհատի՝ որպես այլոց հետ հավասար իրավունքի սուբյեկտի ինքնարժեքի ճանաչման վրա: Այդ անհատն օժտվում է ազատությամբ իրեն վերաբերող գործերը կարգավորելիս և համապատասխանաբար անձնական պատասխանատվություն է կրում իր որոշումների հետևանքների համար:

Արևմտյան մշակույթին բնորոշ լեգալիզմը նշանակում է հավատարմություն իրավունքին, նրա կարգադրագրերին հետևելու պատրաստակամություն: Հենց իրավունքն է ապահովում անհատի պաշտպանությունը իրավաբանական զանազան

<sup>6</sup> Տե՛ս. Гарольд Дш. Берман. Западная традиция права: эпоха формирования. М., 1998, с. 279-280.

ընթացակարգերի և ինստիտուտների օգտագործման միջոցով և ոչ թե կորպորացիան կամ կոլեկտիվը, ինչպես Արևելքում է:

Իրավական զարգացած գիտության առկայություն, որն իրենից ներկայացնում է ռացիոնալ հասկացությունների, կոնցեպցիաների և տեսությունների, ինչպես նաև իրավաբանական կրթության և հարգանքի արժանի իրավաբանական մասնագիտության համակարգ: Բայց, կոպիտ ասած, մինչև XIX դարի սկիզբը իրավունքը շարունակվում է ուսումնասիրվել բարոյական փիլիսոփայության շրջանակներում:

**Էթիկայի և իրավագիտության առարկաների վերջնական բաժանումը տեղի է ունեցել իրավաբանական պոզիտիվիզմի զարգացման հետ:** Բնական իրավունքի և իրավական պոզիտիվիզմի տեսությունները հաճախ են հակադրվում որպես հակոտնյաներ: Նման բան, իհարկե, հնարավոր է, բայց պետք է ի նկատի ունենալ հետևյալը: Իրավական պոզիտիվիզմի և

բնական իրավունքի հակադրումը, ըստ էության, նշանակում է հակադրել գիտությունը բառի պոզիտիվիստական իմաստով, որի առարկան սոցիալական ռեալության փաստերն են և փիլիսոփայությունը, որը խորհում է պետքականի մասին: Եթե քննենք իրավունքի ուսումնասիրման նկատմամբ նշված մոտեցումների հարաբերակցությունը, ապա նրանց միջև կոնֆլիկտը ներկայանում է որոշակիորեն արհեստական, առավել ևս, որ բնական իրավունքի ցանկացած տեսություն (եվրոպական տարբերակով) ենթադրում է պոզիտիվ իրավունքի համակարգի առկայություն: Պոզիտիվիզմը գործում է միայն այն դեպքում, երբ զանգվածային գիտակցության մակարդակում իրավունքն ու բարոյականությունը զոյություն ունեն միասնաբար, երբ իրավունքը հասարակական գիտակցության մեջ ստանում է բարոյական լեգիտիմացիա: Միաժամանակ XX դարի սկզբին ձևավորված պոզիտիվիստական մոտեցումն ունեւր բազմաթիվ թերություններ, որոնցից գլխավորներն են իրավունքի վերածումը պետական գործիքի հենց պետության կողմից և նորմերի բովանդակային մասը ուսումնասիրել չցանկանալը: Սակայն դրանք լիարժեք կերպով դրսևորվեցին պոզիտիվիզմի մեթոդոլոգիան ոչ

իրավական նորմատիվային համակարգերն ուսումնասիրելիս: Բայց այդ դեպքում պոզիտիվիզմը կորցնում է «իրավական» ստորոգելին: Այն վերածվում է կամ նորմոլոգիայի, կամ Վ. Ս. Ներսեսյանցի խոսքով, հակաիրավական պոզիտիվիզմի, ինչպես դա տեղի ունեցավ ԽՍՀՄ-ում 30-40-ական թվականներին: Ուստի այստեղ հարցը իրավական պոզիտիվիզմը չէ, այլ հասարակությունների և պետությունների բնույթը՝ ըստ էության ոչ լիբերալ կամ հակալիբերալ:

Այս առումով բավականին ուշագրավ է 1958 թ. Harvard Law Review-ի էջերում հայտնված անգլախոս երկու իրավագետների՝ իրավական պոզիտիվիզմի կողմնակից Գ. Յարտի և բնական իրավունքի դպրոցի ավանդույթի հետևորդ Լ. Ֆուլերի միջև բանավեճը: Դրա համար առիթ էր

*«...Իրավունքին ենթարկվելը, օրենքը կատարելը համարվում է բարոյական պարտք...»*

հանդիսացել այն հարցը, թե արդյոք հետպատերազմյան Գերմանիայի դատարանները կարող են կիրառել նացիստական օրենսդրությունը:

Յարտը համարում էր, որ իրավունքն ու բարոյականությունը չպետք է խառնվեն, ինչպես բուն իրավունքը ենթակա է ուսումնասիրման որպես տրամաբանորեն փոխկապակցված նորմերի համակարգ, որի շրջանակներում իրավաբանորեն նշանակալի ցանկացած որոշում կարող է կայացվել տրամաբանական գործողությունների միջոցով՝ առանց սոցիալական, քաղաքական և բարոյական հիմնավորումների դիմելու: Այս առումով պոզիտիվ օրենքի արդարության կամ անարդարության խնդիրը իրավագիտության ոլորտից դուրս է: Իսկ ինչ վերաբերում է նացիստական օրենսդրությանը, ապա այն ընդունելի չէ, ասենք, անգլիացիների համար, ինչպես ընդունելի չեն նացիզմի և համապատասխանաբար նացիստական օրենսդրության նպատակները: Այլ կերպ ասած, այս հարցը ոչ թե իրավական է, այլ քաղաքական:

Ֆուլերն առարկում էր: Նրա կարծիքով՝ նման մոտեցումը մեծ վտանգ է պարունակում, քանի որ դրանում ներդրված է իրավունքի և բարոյականության, իրավական պարտականության և բարոյական պարտ-

քի միջև կոնֆլիկտի հնարավորություն: Իսկ ամենագլխավորն այն է, որ դա սխալ է ըստ էության: Ենթարկվելու իրավական պարտականությունը չի կարող բխել զուտ օրենքի ֆորմալ ձևերից: Իրավունքը պետք է կրի որոշակի բարոյական բովանդակություն, որն էլ նրան հեղինակություն է հաղորդում: Բայց բարոյականության մասին դատելիս Ֆուլերը հենու է գնում բնական իրավունքի դասական մոտեցումներից: Նրա կոնցեպցիայում բարոյականությունը ստանում է իրավական բնույթ: Ինչպես և Չարտը, նա նույնպես ձգտում է իրավունքն ուսումնասիրել ելնելով հենց նրանից, ոչ թե արտաքին ինչ-որ չափանիշներից կամ աղբյուրներից: Իրավունքը պետք է լինի արդարացի, բայց այդ արդարությունը կրում է ընթացակարգային բնույթ: Այն կապված է նրա հետ, թե ինչպես է իրավունքը ձևավորվում, ինչ ձևերով է արտահայտվում, ինչպես է մեկնաբանվում և ինչպես է կիրառվում:

Իրենց հայացքներն ավելի խորը գիտնականները շարադրել էին մի քանի տարի հետո տպագրված մենագրություններում: Չարտը հրապարակեց «Իրավունքի կոնցեպցիան»<sup>7</sup>, Ֆուլերը՝ «Իրավունքի բարոյականությունը»<sup>8</sup> աշխատությունները: Իրավունքի նկատմամբ մոտեցումների ակնհայտ տարբերությանը համդերձ Ֆուլերին և Չարտին միավորում է հետազոտության ընդհանուր առարկան՝ իրավական զարգացած համակարգը: Ընդ որում, առաջինն ընդգծում է դրա ընթացակարգային բնույթը, երկրորդը՝ նորմատիվային: Երկու մոտեցումներն ամենևին չեն բացառում իրար:

Այսօր իրավագիտության մեջ վառ արտահայտված է իրավական պոզիտիվիզմի և բնական իրավունքի տեսության կոնվերգացիայի գործընթացը: Ասվածը դրսևորվում է նաև Չարտի հայացքների էվոլյուցիայի մեջ: Ըստ էության նա չի ժխտում այն փաստը, որ իրավունքի զարգացումը տեղի է ունենում բարոյականության ազդեցությամբ և որ իրավունքն իր հերթին ազդում է բարոյականության զարգացման վրա: Իսկ 1983 թ., վերլուծելով Ջ. Ֆինիսի բնական իրավունքի կոնցեպցիան, Չարտն ընդու-

նեց, որ այն «շատ բանով կոնպլեմենտար է և հակադիր չէ իրավական պոզիտիվիզմին»: Եվ դա իսկապես այդպես է: Ջ. Ֆինիսը «Բնական իրավունք և բնական իրավունքներ» մենագրության մեջ ձգտում է բանաձևել իրավունքի գաղափարը:

Միաժամանակ ընդգծելով պոզիտիվ իրավունքի նշանակությունը՝ Ֆինիսը տեղ է թողնում պոզիտիվիստական մեթոդաբանությամբ դրա ուսումնասիրության համար: Իսկ Չարտը շարունակում է ընդառաջ գնալ «իրավունքի բարոյականությանը»: Այսպես, «Իրավունքի կոնցեպցիայի» «Չետզրության» մեջ նա դատում է հետևյալ կերպ: Յուրաքանչյուրի համոզմունքը, թե ինչն է արդար, ինչը՝ ոչ, տարբեր է: Իսկ իրավունքը օբյեկտիվ է, որոշակի և ընդհանուր բոլորի համար: Ուստի եթե իրավունքը քննենք անհատական բարոյականության տեսանկյունից, ապա այն կորցնում է իր իմաստը, քանի որ յուրահատուկ է դառնում յուրաքանչյուրի համար, իսկ եթե իրավունքը դիտենք որպես հանրահանուր պարտադիր նորմերի համակարգ, ապա դա ճիշտ (good) կլինի, ուրեմն նաև՝ արդար և բարոյական:

Ընդհանուր առմամբ, ինչպես նշվում է «Պոզիտիվիզմն այսօր» գրքի նախաբանում, ոչ մի պոզիտիվիստ չի հերքում իրավունքի բովանդակության մեջ բարոյականության կողմը: Պոզիտիվիզմը միայն առաջարկում է իրավունքի նկատմամբ իր տեսակետը, որի անհրաժեշտությունն ու կարևորությունը մշտապես զգացվում են: Միաժամանակ պոզիտիվիստները անվերապահորեն կիսում են լիբերալ արժեքները, ինչը նրանց թույլ է տալիս տարբերել իրավական և ոչ իրավական նորմատիվային համակարգերը:

Իրավունքն ուսումնասիրելիս մոտեցումների փոխլրացումն ընդգծվում է նաև հայրենի գրականության մեջ: Իսկապես, կոնֆլիկտը գոյություն ունի ոչ թե իրավահասկացության տարբեր տեսակների միջև, այլ աշխարհընկալման տեսակների միջև՝ լիբերալ-ինդիվիդուալիստականը՝ իրավական ըստ էության և կոլեկտիվ-թատիկը՝ ոչ իրավական ըստ էության:

<sup>7</sup> Տե՛ս Hart H. The Concept of Law. Oxford, 1961.

<sup>8</sup> Տե՛ս Фуллер Л. Право и мораль. М., 2004.

# ԽՐԱԽՈՒՄԱՆՔ

Դատախազության աշխատողի օրվա կապակցությամբ, ծառայողական պարտականությունները բարեխղճորեն կատարելու համար ՀՀ դատախազության մի խումբ աշխատակիցներ արժանացել են պետական տարբեր մարմինների խրախուսանքներին:

## ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԽՐԱԽՈՒՄԱՆՔԻՆ ԵՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ.

գլխավոր դատախազության սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ Գրիգոր ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԸ, Արագածոտնի մարզի դատախազ Հնայակ ԶԱՔՈՅԱՆԸ, Կոտայքի մարզի դատախազ Էդուարդ ԱՆԴՐԻԿՅԱՆԸ, Տավուշի մարզի դատախազ Աննա ՄԱՆՈՒՇՅԱՆԸ:



## ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԿԵԼ ԵՆ.



գլխավոր դատախազության քաղաքացիների ընդունելության և դիմումների քննարկման բաժնի պետ Ալեքսանդր ԱՆԴՐԵԱՍՅԱՆԸ, գլխավոր դատախազության անձնակազմի բաժնի ավագ դատախազ Հասմիկ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԸ, Երևան քաղաքի Էրեբունի Նուբարաշեն վարչական շրջանների դատախազի տեղակալ Սամվել ՄԿՐՏՉՅԱՆԸ, Արարատի մարզի դատախազ Սարգիս ՄԱՑԱԿԱՆՅԱՆԸ, զինվորական կենտրոնական դատախազության պետական շահերի պաշտպանության բաժնի պետ Նարեկ ԱՄԲԱՐՅԱՆԸ, թիվ 3 կայազորի զինվորական դատախազ Արսեն ՍԱՐԴԱՐՅԱՆԸ:

### ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉԻ ՀՐԱՄԱՆՆԵՐՈՎ ԽՐԱԽՈՒՄՎԵԼ ԵՆ.

Երևան քաղաքի Էրեբունի, Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ Տիտալ ՌԻՉՈՅԱՆԸ, Արարատի մարզի դատախազության ավագ դատախազ Կարինե ԹԱԴԵՎՈՍՅԱՆԸ, ՀՀ զինվորական դատախազի տեղակալ Միհրան ՄԻՆԱՍՅԱՆԸ, դատախազության կենսաթոշակառու Ռոբերտ ԱՐՇԱԿՅԱՆԸ (ստացել են «Դատախազության պատվավոր աշխատող» կոչում և պարգևատրվել կրծքանշանով):

Խրախուսանքների են արժանացել նաև. գլխավոր դատախազության մարդու ղեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ Վլադիմիր ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ, Երևան քաղաքի դատախազության ավագ դատախազ Նաիրի ԱՎԱԳՅԱՆԸ, գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական վարչության դատախազ Գայանե ԼՅՈՒԴՎԻԿՅԱՆԸ, Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության ավագ դատախազ Գուրգեն ՊՈՂՈՍՅԱՆԸ, Երևան քաղաքի Էրեբունի, Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության դատախազ Հայկ ՄՈՎՍԵՍՅԱՆԸ, Երևան քաղաքի դատախազության ավագ դատախազ Արթուր ՍԵՓՈՅԱՆԸ, զինվորական կենտրոնական դատախազության բաժնի ավագ դատախազ Անահիտ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԸ, զինվորական

կենտրոնական դատախազության բաժնի դատախազներ Հրաչյա ԱՅՎԱԶՅԱՆԸ, Էդուարդ ԳԱՍՊԱՐՅԱՆԸ, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազ Գագիկ ԽԱԶԻԿՅԱՆԸ, Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա



վարչական շրջանի դատախազության դատախազ Արթուր ԿՈՒԲԱՆՅԱՆԸ, Արմավիրի մարզի դատախազ Հակոբ ՂԱՐԱԽԱՆՅԱՆԸ, զինվորական կենտրոնական դատախազության բաժնի դատախազ Գայանե ԱՎԵՏԻՍՅԱՆԸ, թիվ 1 կայազորի զինվորական դատախազի տեղակալ Արման ՄԱՐԳԱՐՅԱՆԸ, ՀՀ գլխավոր դատախազի օգնական Թամարա ՇԱՔԱՐՅԱՆԸ, գլխավոր դատախազության կոռուպցիոն և կազմակերպված հանցագործությունների գործերով վարչության պետ Կոռյուն ՓԻԼՈՅԱՆԸ, գլխավոր դատախազության ավագ դատախազ Աշոտ ՆԱԴՈՅԱՆԸ, գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության մարմիններում քննվող և կիրքերհանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ Հովսեփ ՍԱՐԳՍՅԱՆԸ, ՀՀ գլխավոր դատախազի ավագ օգնական Կամո ԱՎԱԳՈՒՄՅԱՆԸ, գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչու-





թյան դատախազ Նելլի ԱՎԱԳՅԱՆԸ, զինվորական կենտրոնական դատախազության բաժնի դատախազ Հակոբ ՀԱԿՈԲՅԱՆԸ, դատախազության կենսաթոշակառուներ թեմուր ԲՐՈՅԱՆԸ, Էդուարդ ԲԱԲԱՅԱՆԸ, Գլխավոր դատախազության ավագ դատախազ Վահագն ՄՈՒՐԱԴՅԱՆԸ, գլխավոր դատախազության կոռուպցիան և կազմակերպված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ Բագրատ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ, գլխավոր դատախազության սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ Արսեն ՍԻՄՈՆՅԱՆԸ, Երևան քաղաքի Էրեբունի, Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ Արիստակես ԲԱՐՍԵՂ-

ՅԱՆԸ, Սյունիքի մարզի դատախազի տեղակալ Էդիկ ՀՈՎՍԵՓՅԱՆԸ, Արմավիր մարզի դատախազության դատախազ Նարեկ ՀԱԿՈԲՅԱՆԸ, զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազ Համբարձում ՄԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆԸ, զինվորական կենտրոնական դատախազության բաժնի դատախազ Դավիթ ՍԻՄՈՆՅԱՆԸ, գլխավոր դատախազի մամուլի քարտուղար Սոնա ՏՈՒԴՅԱՆԸ, ՀՀ դատախազության աշխատակազմի վարչությունների պետեր Շահեն ՏՈՆՈՅԱՆԸ, Հովհաննես ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ, ՀՀ դատախազության աշխատակազմի գրասենյակի պետ Համեստ ՍԱՀԱԿՅԱՆԸ, ՀՀ դատախազության աշխատակազմի արխիվի բաժնի պետ Նաիրա ԽԱԼԱԹՅԱՆԸ, ՀՀ դատախազության աշխատակազմի վիճակագրության և վերլուծության բաժնի պետ Աննա ԲԱԴԱԼՅԱՆԸ, գլխավոր դատախազի տեղակալների օգնականներ Կարինե ՓԱՆՅԱՆԸ և Քրիստինե ՔՈՆՈՅԱՆԸ, ՀՀ դատախազության աշխատակազմի աշխատակիցներ Ֆլորա ԳՐԻԳՈՐՅԱՆԸ և Արախան ԳՐԻԳՈՐՅԱՆԸ:

ՀՀ դատախազության աշխատակազմի ղեկավարի հրամանով խրախուսվել են ՀՀ դատախազության աշխատակազմի աշխատակիցներ. Սուսաննա ՎԱՐԴԱՆՅԱՆԸ, Լիլիթ ԱՐԱԲԱԶՅԱՆԸ, Ալիսա ԲՈՅԱԶՅԱՆԸ, Սոնա ԹԵՎՈՍՅԱՆԸ, Հայկանուշ ՍԱՐԳՍՅԱՆԸ, Տաթևիկ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԸ:

### ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՀՐԱՄԱՆՈՎ ՊԱՐԳԵՎՆԵՐԻ ԵՆ ԱՐԺԱՆԱՅԵԼ.

ՀՀ գլխավոր դատախազության անձնակազմի բաժնի պետ Վաղարշակ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ, գլխավոր դատախազության ավագ դատախազ Հայկ ԱՍԼԱՆՅԱՆԸ, գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինակառության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության ավագ դատախազ Տիգրան ԲԻՇԱՐՅԱՆԸ, գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության ավագ դատախազ Դավիթ ԴԱՎԹՅԱՆԸ, գլխավոր դատախազության միջազգային իրավական կապերի բաժնի ավագ դատախազներ Լուիզա ՄԱՆՈՒԿՅԱՆԸ, Եղիազար ԱՎԱԳՅԱՆԸ, Երևան քաղաքի դատախազի տեղակալ Կարեն ԲԱՏԻԿՅԱՆԸ, Շիրակի մարզի դատախազի տեղակալ Արտյոմ ԱՎԵՏԻՍՅԱՆԸ:



**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ  
ՀՐԱՄԱՆՈՎ ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՄԵԴԱԼՆԵՐԻ ԵՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ.**

գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության պետի տեղակալ Սմբատ ՄԵԼԻՔՉԱՆՅԱՆԸ, գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ Արթուր ԴԱՎԹՅԱՆԸ, Երևան քաղաքի Ավան և Նոր-Նորք վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ Մկրտիչ ԵՆԳԻ-ԲԱՐՅԱՆԸ, Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազության ավագ դատախազ Րաֆֆի ԱՍԼԱՆՅԱՆԸ, Արմավիրի մարզի դատախազության ավագ դատախազ Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ, Գեղարքունիքի մարզի դատախազության ավագ դատախազ Վարդան ԱԶԱՐՅԱՆԸ:



**ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ  
ՀՐԱՄԱՆՈՎ.**

ՀՀ գլխավոր դատախազ Աղվան ՀՈՎՍԵԹՅԱՆԸ պարգևատրվել է թանկարժեք նվերով:

Նախարարի մեկ այլ հրամանով խրախուսանքների են արժանացել. Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության ավագ դատախազներ Խաչատուր ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ, Նելլի ԱՇՐԱՖՅԱՆԸ, գլխավոր դատախազության ընդհանուր բնույթի հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ Ռուբեն ԵՂՅԱՆԸ, Երևան քաղաքի ավագ դատախազներ Արթուր ԵՐԻՅՅԱՆԸ, Արմեն ՓԱՆՈՍՅԱՆԸ:

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

**Հունգարիայի Հանրապետության գլխավոր  
դատախազն ընդունել է ՀՀ գլխավոր  
դատախազության պատվիրակությանը**

2012 թվականի հուլիսի 5-ին Հունգարիայի Հանրապետության գլխավոր դատախազ Պիտեր Պոլտն ընդունել է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պատվիրակությանը:

Հանդիպման ժամանակ քննարկվել են երկու երկրների դատախազությունների միջև համագործակցության ամրապնդման վերաբերյալ հարցեր:

Նշենք, որ գլխավոր դատախազության պատվիրակությունը հուլիսի 1-8-ն աշխատանքային այցով գտնվում էր Հունգարիայի Հանրապետությունում՝ Բուդապեշտի միջազգային իրավապահ ակադեմիայում կազմակերպվող «Հանրային ոլորտում կոռուպցիայի դեպքերի հետաքննություն և իրավապահպանության էթիկա» թեմայով դասընթացներին մասնակցելու նպատակով:

## ՇԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԽՈՐԱՑՄԱՆ ՇԱՄԱՏԵՔՍՈՒՄ

*«Հ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը 2012 թվականի հուլիսի 25-ին ընդունել է Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Մոհամմադ Ռեիսիմին:»*

ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը, ողջունելով հյուրին, հույս է հայտնել, որ ՀՀ գլխավոր դատախազության և Հայաստանում ԻԻՀ դեսպանատան միջև ձևավորված բարիդրացիական և սերտ համագործակցության դրական փորձն առավել ջերմ և լայն համագործակցության հիմք կհանդիսանա պարոն Մոհամմադ Ռեիսիմի հետ համատեղ աշխատանքի արդյունքում:

Հանդիպման ընթացքում քննարկվել են ՀՀ գլխավոր դատախազության և Հայաստանում ԻԻՀ դեսպանատան համագործակցության վերաբերյալ մի շարք հարցեր իրավական օգնության ոլորտներում, մասնավորապես՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության և մաքսանենգության գործերով:

ԻԻՀ արտակարգ և լիազոր դեսպան Մոհամմադ Ռեիսիմին, շնորհակալություն հայտնելով ՀՀ գլխավոր դատախազին ջերմ ըն-

դունելության համար և կարևորելով հանցագործությունների դեմ պայքարում սերտ փոխհամագործակցության նշանակությունը, շեշտելով ՀՀ գլխավոր դատախազի կողմից բարձրացված հարցադրումներում առկա խնդիրների արդիականությունը, նշել է, որ առաջիկա տարում Հայաստան կայցելի ԻԻՀ գլխավոր դատախազը, ինչը նոր էջ կբացի հայ-իրանական իրավական համագործակցության ոլորտում:

Կողմերը քննարկման ընթացքում կարևորել են նաև երկու երկրների քաղաքացիների իրազեկումն ու ծանոթացումը միմյանց օրենսդրության առանձնահատկություններին՝ ընդգծելով, մասնավորապես, մաքսանենգ ճանապարհով ապրանքների տեղափոխման, հատկապես թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

## ՇՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԱՄԵՐԻԿԱՆ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՇԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

*«Հ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանն ընդունել է Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան գրասենյակի ղեկավար Ռոնալդ Մանգումին: Հանդիպման ընթացքում քննարկվել են փոխգործակցությանը վերաբերող հարցեր՝ կարևորելով համագործակցությունը հատկապես դատախազական համակարգի բարեփոխումների իրականացման ընթացքում:»*

Ներկայացնելով Հայաստանի դատախազության համակարգում իրականացված բարեփոխումների նախորդ փուլերը՝ Ա. Հովսեփյանը նկատել է, որ ուսումնասիրվել են արդյունքները, արձանագրված բացթողումներն ու դրանց լուծման ուղիների վերաբերյալ միջազգային փորձը, որի հիման վրամշակվել է բարեփոխումների նոր հայեցակարգը: ՀՀ գլխավոր դատախազը տեղեկացրել է նաև, որ դատախազության առաջարկությամբ ԵԱՀԿ փորձագետ Ջոն Պերտոնն ուսումնասիրել և գնահատել է բարեփոխումները՝ ներկայացնելով առաջար-

կությունների փաթեթ: Առաջիկայում ԵԱՀԿ-ն պաշտոնապես կներկայացնի փորձագետի եզրակացությունը, որում ներառված առաջարկությունները ևս կընդգրկվեն դատախազական բարեփոխումների՝ 2012-2016 թթ. ռազմավարության ծրագրի՝ դատախազությանը վերաբերող բաժնում:

Ռոնալդ Մանգումը, բարձր գնահատելով նախորդ տարիներին ձևավորված համագործակցության փորձը, հավաստել է իր պատրաստականությունը՝ աջակցել ռազմավարության ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացմանը:

# ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ՝ ՄԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

## Դատախազության դպրոցը հինգ տարեկան է

2012թ. հուլիսի 20-ին նշվեց ՀՀ դատախազության «Դատախազության դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության 5-րդ հորեյանական տարեդարձը:

Բացման խոսքով հանդես եկավ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Արմեն Դանիելյանը՝ հանդիսավոր նիստի մասնակիցներին ներկայացնելով ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանի ուղերձը:

ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը, իր ուղերձում անդրադառնալով «Դատախազության դպրոցի» գործունեությանը, մասնավորապես նշել է. «Դատախազության դպրոցը» ձևավորվելով 1998 թվականից գործող ՀՀ գլխավոր դատախազության գիտաուսումնական կենտրոնի հիմքի վրա, անցած հինգ տարիների ընթացքում վերածվել է դատախազական կադրերի ուսուցման և վերապատրաստման հեղինակավոր օջախի, որտեղ իրականացվում են նաև կիրառական իրավագիտության և իրավունքի տարբեր ծյուղերին նվիրված գիտահետազոտական աշխատանքներ: Ասվածի լավագույն ապացույցն է այն, որ վերջին տարիներին դպրոցի աշխատակիցների ջանքերով հրատարակված ավելի քան 2 տասնյակ անուն գիտագործնական աշխատանքներն ու մեթոդական ձեռնարկները լայնորեն կիրառվում են ոչ միայն դատախազական, այլ նաև այլ իրավապահ մարմինների պրակտիկայում և արժանացել են իրավագիտական հանրության զնահատանքին ու հավանությանը»:

ՀՀ գլխավոր դատախազի հավաստմամբ, «Դատախազության դպրոցը» այսօր իր ուսումնամեթոդական աշխատանքների կազմակերպման արդյունավետության, գիտագործնական սեմինարների, քննարկումների, ուսուցման ժամանակակից մեթոդոլոգիայի կիրառման արդյուն-



քում լիովին համապատասխանում է միջազգայնորեն ընդունված չափանիշներին, որի վառ ապացույցն է նաև միջազգային հեղինակավոր կազմակերպությունների հետ դպրոցի սերտ համագործակցությունը»:

Այնուհետև հանդիսության մասնակիցներին ցուցադրվեց տեսաֆիլմ, «Դատախազության դպրոց»-ի գործունեության վերաբերյալ:

Զարգացման ծրագրին համահունչ, հիմնական կրթական գործընթացներին գուրգահեռ դպրոցն իրականացրել է լրացուցիչ կրթական ծրագրեր, որոնց շահառուներն են եղել դպրոցականները, զինվորական կոմիսարիատի աշխատակիցները, քննիչները, իրավապահ մարմինների այլ աշխատակիցները և այլն: Նշվածի արդյունքում դպրոցը, հաստատուն քայլերով առաջ շարժվելով, ուրույն տեղ է զբաղեցրել համապատասխան գործառույթներ իրականացնող կազմակերպությունների շրջանում՝ համարվելով իրավապահ մարմինների աշխատակիցներ վերապատրաստող առաջատար կազմակերպություններից մեկը:

Կրթական ծրագրերով նախատեսված ուսումնական գործընթացներն իրականացվել են դասախոսությունների, գործնական պարապմունքների, դասախաղերի, դատախաղերի, սեմինարների, խնդիրների, քննարկումների, բանավեճերի, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռ-

ների, ՀՀ վճռաբեկ դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի որոշումների քննարկումների միջոցով:

Դպրոցն իրավապահ մարմինների աշխատակիցների վերապատրաստման, մասնագիտական պատրաստման և այդ ոլորտում սեմինարների, համաժողովների, քննարկումների կազմակերպման, ինչպես նաև կրթական

բարձրացման ուղղությամբ: Նախատեսվում է շարունակել գիտագործնական միջոցառումների կազմակերպման ու անցկացման, իրավաստեղծ գործունեության, գիտագործնական ձեռնարկների կազմման և հրատարակման աշխատանքները, ինչպես նաև դպրոցներում թե՛լ ուսուցման նոր մեթոդներ և միջոցներ:



ծրագրերում նորագույն տեխնոլոգիաների ներդրման նպատակով, սերտորեն համագործակցում է Եվրոպայի խորհուրդի (Լիսաբոնյան ցանց, Մարդու իրավունքների ոլորտի կրթություն իրավաբանների համար՝ ՀԵԼՓ), ԵՄ եվրոպական հանձնաժողովի, ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի Համաշխարհային բանկի, Հայաստանում ԱՄՆ դեսպանատան, Բազելի կառավարման ինստիտուտի Ակտիվների վերադարձման միջազգային կենտրոնի, Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի և այլ միջազգային կառույցների հետ:

Հանդիսավոր արարողության ավարտին ՀՀ գլխավոր դատախազի հրամանով պարգևատրվեցին «Դատախազության դպրոցի» տնօրեն Գ. Սարգսյանը և դատախազության այլ աշխատակիցներ:

Ներկայումս դպրոցում աշխատանքներ են տարվում վերապատրաստման գործընթացների ընդլայնման և արդյունավետության

## ԱՄՆ ՄՁԳ ԳՆԱՀԱՏՈՂ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ ԱՐՄԵՆ ԴԱՆԻԵԼՅԱՆԸ 2012թ. հուլիսի 24-ին ընդունել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության գնահատող խմբի անդամներին:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը Հայաստանի Հանրապետության հետ 2013-18թթ. պետության զարգացմանն ուղղված համագործակցության ռազմավարությունը նախապատրաստելու նպատակով իրականացնում է գնահատման գործընթաց՝ ժողովրդավարական գործընթացների, արդյունավետ կառավարման զարգացմանն ուղղված ռազմավարական ծրագրերի իրականացման ուղղությամբ՝ գնահատելու Հայաստանում Միջազգային զարգացման գործակալության գործունեության և ծրագրերի իրականացման միջավայրը:

Հանդիպման ընթացքում ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Արմեն Դանիելյանը հանգամանորեն ներկայացրել է ՀՀ դատախազության համակարգի կառավարման և գործունեության կազմակերպման սկզբունքները, դատախազական բարեփոխումների արդյունքում իրականացված փոփոխությունները: Կարևորվել են իրավապահ մարմինների փոխհամագործակցված աշխատանքները հանցավորության դեմ պայքարում, նախաքննության և հետաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողության նշանակությունը:

Անդրադարձ է եղել նաև քաղաքացիական հասարակության հետ համագործակցությանը, մասնավորապես՝ կոռուպցիայի դեմ պայքարում, և որպես դրական օրինակ՝ նշվել է ԱՄՆ ՄՁԳ ֆինանսավորմամբ գործող քաղաքացիների շահերի պաշտպանության և աջակցության հակակոռուպցիոն կենտրոնների հետ համագործակցված աշխատանքները:

Հանդիպման մասնակիցները դրական են գնահատել օրենսդրական բարեփոխումները և շնորհակալություն հայտնել՝ իրազեկման համար:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ

ԱՂՎԱՆ ՀՈՎԱՅԹՅԱՆ. «Դատախազի ցանկացած որոշում պետք է հասկանալի և բացատրելի լինի հասարակության համար».....2
Բարեփոխումը միայն իրավական համակարգի խնդիրը չէ.....6

## ԻՐԱԴԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի և Չինաստանի գլխավոր դատախազները ստորագրեցին համագործակցության ծրագիր.....7
ՀՀ դատախազության կոլեգիայում.....9

## ՀՈՐԵԼՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ ԱՐԱՄ ԹԱՄԱԶՅԱՆԻ ծննդյան 60-ամյակը .....10
--

## ԻՐԱՎՈՒԼՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հովհաննես ՍՏԵՓԱՆՅԱՆ Իրավական կյանք և իրավական իրականություն.....11
--

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒԼՔ

Նելլի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Օրենքի գերակայության հայեցակարգը և պետությունների միջազգային համագործակցությունը հանցավորության դեմ պայքարում .....17
---

## ՀՐԱԴԱՐԱԿՈՒՄ

Վարդան ՍՈՒՐԱԴՅԱՆ Պոզիտիվիստական իրավահասկացության էությունը.....23
--

## ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Վարազդատ ՏԵՐ-ԳԵՎՈՐԳՅԱՆ Սպանության սպառնալիքի և սպանության փորձի հարաբերակցությունը.....26
---

## ԱՆԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒԼՔ

Քրիստինե ՂԱԶԱՐՅԱՆ Գործադուլ կազմակերպելու և հայտարարելու մասին որոշում ընդունող սուբյեկտները .....30
--

## ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Էլզա ԱՂԱԲԱԲՅԱՆ Իրավական համակարգի հասկացությունը, կառուցվածքը և համակարգաստեղծ կապերը.....35
--

## ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Դավիթ ԴԱՎԻԴՅԱՆ Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության օբեկտիվ կողմի հասկացությունը.....41
---

## ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒԼՔ

Գուրգեն ՔՈԹԱՆՉՅԱՆ Սի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից մարդուն առևանգելը.....46
---

## ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Յուրի ՂՈՒԿԱՅԱՆ Իրավունքի հասկացության շուրջ.....50
--

## ԽՐՈՆԻԿԱ

Խրախուսանք.....57
Հայ-իրանական կապերի խորացման համատեքստում.....61
ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան գրասենյակի ղեկավարին.....61
Վերապատրաստումը՝ մշտական գործընթաց.....62
ԱՄՆ ՄԶԳ գնահատող խմբի անդամները ՀՀ դատախազությունում.....63